



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ ՈՒՂԵՆԻՇ Է ՄԵՐ ՎԱՂՈՒԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ԹՈՒՐՔԱԳԷՏ ՌՈՒԲԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆԻ ՀԵՏ	5
«Եթէ ես լինէի, չէի յայտարարի, որ Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը մեր թիւ մէկ առաջնահերթութիւնը չէ. թուրքագէտ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	6
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 110-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ	6
THE HIDDEN MAP ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	7
ԿԻՊՐՈՍԻ ՄՕՏ ՀՀ ԴԵՍՊՈՒՆ ԻՆՆԱ ԹՈՐԳՈՄԵԱՆԸ ԻՐ ՀԱԻՍՏԱՐՄԱԳՐԵՐՆ Է ՅԱՆՁՆԵՐ ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ	8
ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԹԷՅԱՍԵՂԱՆ ՆԻԿՈՍԻՈՅ Հ.Բ.Ը.Մ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ	9
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	12
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ	12
ԹՈՒՐՔԻԱՆ ԲԱՐԿԱՅԱԾ Է ...ԿԵՂՈՆԱԿԱՆ ԱՍԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻՆ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՃԱՆՉԱՆ ՈՐՊԷՍ ՅՈՒՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ	15
«ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՐՅԱԽԸ ԹԷ՞ ՄՓԻՒՌՔԸ»	18
ՍՈՒՐ ՀԱՐՑ, ԲԱՅՑ, ՆԱԵԻ... ՀՈ՛ՒՐ	18
ԱՇԽԱՐՀԻ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՆՊԱՏԱԿԱՐԻՄԱՆ ԱՆՍԱՐԴԿԱՅԻՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ	21
ՎԱՐՇԱԻԱՅԷՆ ՎԱՏԻԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՊԻԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՆԱՅՈՅՐԸ	24
ՏԵՍԱԿԷՏ	30
ՅԱԻԵՐԺԻ ԱՔՍՈՐԵԱԼ ՀԱՅՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ Ի ՊԷՏՍ ԲԱՆԻՄԱՅՆԵՐՈՒ	30
ՄՓԻՒՌՔԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԲԵՄ ՉԵՆ ԿՐՆԱՆ ԸԼԼԱԼ	33
ԲԱ՛Ւ Է ԽՕՍԻՆՔ. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԸ ՄՊԱՍԷ ԲՈԼՈՐԻՄ	37
ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԸ ՊԱՀԵՑԻՆՔ, ԱՅԼԵԻ ԵՐԿԱԹԻ ՓՈԽԱՐԷՆ ԼԱԹ ՎԵՐՅՈՒՑԻՆՔ	40
ԿԻՆԸ ԾԱՂԻ՞Կ, ԹԷ՞ ԾԱՂԻԿ ՆՈՒԻՐԵԼՈՒ ԷԱԿ	44
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	47
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	47
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (951-1003)	52
ՀԱՅԿԵԱՆ ՀԱՆՃԱՐԻՆ ՄՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՃԱՃԱՆՉՈՒՄԸ	52
ՏԱՔՈՒԿ ԲԱՐԵԻ ՍԸ՝ ՀԱԼԷՊԷՆ	55

ՓՇՈՏ ՀԱՐՑ ՄԸ՝	57
ՀԱՅԱՍՏԱՌ ՀՐԱԻՐԱՏՈՄՍԵՐՈՒ ՌԻՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ	57
ԱՆՇԱՆՕԹՈՒՅԻՆ	59
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	61
ՔԱՌԵԱԿՆԵՐ	63

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ ՌԻՂԵՆԻՇ Է ՄԵՐ ՎԱՂՈՒԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ



Հայոց Ցեղասպանութենէն միայն երեք տարի ետք, հայ ժողովուրդը՝ թէև արիւնաքամ եւ ուժասպառ, ոյժ գտաւ իր մէջ դէմ դնելու հայասպան թշնամիին եւ կերտեց Մարդարապատեան յաղթանակը, հաստատելով իր ապրելու իրաւունքը այս արեւի տակ:

Թուրքը՝ կոտորելէ ետք արեւմտահայութիւնը եւ ամայացնելէ ետք ամբողջ Արեւմտահայաստանը, անյագուրդ ախորժակով եւ մոլեգին կը յարձակէր այս անգամ ալ արեւելահայաստանի վրայ, զայն եւս յափշտակելու եւ վերջնականօրէն թաղելու Հայաստանը հայ ժողովուրդը, եւ անոր Դատը:

Թրքական զօրքերու յառաջխաղացումով, Մայիս 15-ին կ'իյնար Ալեքսանդրապոլը կամ Գիւմրին: Շարունակական նահանջի ալիքին դէմ առաջինը կտրականօրէն ընդվզեցաւ Գեորգ Ե կաթողիկոսը, որ մերժեց Ս. Էջնիածինը թողելու եւ Մեանայ կղզին ապաստանելու առաջարկը. «Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հօտի դարաւոր թշնամին նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան: Գալիս է Արարատեան Երկրի վրայ: Թուրքը, կոտորած ու աւեր սփռելով գալիս է, եւ մեր



գորապետերն էլ այլ էլք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: ...Նրանք ինձ առաջարկում են ոստիսի բերանին թողնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը: Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդ մնացած Մայր Աթոռը: Եթէ հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի գորու չէ փրկելու մեր սրբութիւնները, ապա ես ինքս սուր կը վերցնեմ եւ կ'ընկնեմ Մայր Տաճարի գաւիթում, բայց չեմ հեռանայ պապերից աւանդ մնացած Սուրբ աթոռից: ...Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դէմ, որը գալիս է ծարաւի մեր վերջին արիւնին», կը յայտարարէր ան ամենայն վճռակամութեամբ:

Այդ բախտորոշ ժամանակահատուածին, Երեւանի Ազգային խորհուրդի նիստին, հարց բարձրացաւ Երեւանը թողելու, Սեւանի աւազան նահանջելու եւ այնտեղէն դիմադրութիւն կազմակերպելու մասին: «Արամն ուժգնօրէն հարուածեց սեղանին եւ նշեց. «Երեւանը չենք դատարկի եւ պէտք է կռուենք, դիմադրենք թշնամուն մինչեւ վերջին մեր կաթիլ արիւնը, մինչեւ վերջին գնդակը»: (Ա. Սարեան):

Ճակատամարտի նախօրէին գեներալ Մ. Միլիկեանը և Դրօն այցելեցին Արամին եւ իրենց համերաշխութիւնը յայտնեցին հակառակորդին վճռական հակահարուած տալու հարցին:

Այդ օրհասական պահին հրաշք էր պէտք, եւ հրաշքը կատարուեցաւ. հայության մէջ կրկին արթնցաւ Հայկեան ազատատենչ ոգին: Ազատութիւն կամ մահ. այլ էլք չկար:

Եւ այսպէս, Հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով եւ հատուածներով ոտքի ելաւ նոր յուսավառութեամբ, պայքարի անբեկանելի ոգիով եւ վճռակամութեամբ: Մայր տաճարի զանգերը այդ օրերուն անդադար կը դողանջէին, եւ այդ դողանջը, իբրեւ մարտակոչ, կը տարածուէր Արարատեան դաշտավայրի բոլոր անկիւնները:

Հասարակութեան բոլոր գործուն ուժերը, մտաւորականութիւնը, կուսակցութիւնները, հոգեւորականութիւնը՝ Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանի գլխաւորութեամբ, մասնակից դարձան համազգային պայքարին: Հայ զինուորը Սարդարապատ հասաւ արդէն յաղթելու ոգիով եւ կորովով:

Այսպիսով, ձեւաւորուեցաւ պատկառելի զինական ուժ՝ Երեւանեան գորախումբի հրամանատար գեներալ Մովսէս Միլիկեանի գլխաւորութեամբ, որ, Սարդարապատի ճակատամարտին մասնակից մարշալ Յովհաննէս Բաղրամեանի վկայութեամբ, «այն ժամանակուայ բոլոր հայ գեներալներից ամենաշնորհալի գորավարն էր»:

Մայիս 24-ին գեներալ Մ. Միլիկեանը կոչով դիմեց ժողովուրդին.

«Հայէ՛ր, շտապեցէ՛ք հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ իւրաքանչիւր հայ, մոռանալով իր անձնականը, յանուն մեծ գործի՝ հայրենիքի փրկութեան եւ իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարուածելու համար...»



Հայե՛ր, ժամանակը չէ դանդաղելու: Մինչեւ յիսուն տարեկան բոլոր տղամարդիկ պարտաւոր են զենք վերցնելու, եւ ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով՝ հայրենիքի պաշտպանութեան համար:

Հայուհիներ՛, յիշեցէ՛ք 5-րդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգետրեցին իրենց ամուսիններին Մեծ գործի՝ անմահ Վարդանի կռիւների ժամանակ, հետեւեցէք նրանց օրինակներին, եթէ չէք ուզում, որ Ձեր պատիւը ոտնահարուի, խրախուսեցէք նրանց ու արհամարհեցէք այն վախկոտներին, որոնք զանազան պատրուակներով խուսափում են ճակատ գնալուց...

Յանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան, յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան: Ոտքի կանգնեցէք: Դեպի գործ, դեպի սրբազան պատերազմ...»:

Մարդարապատի 9-օրեայ ճակատամարտը աւարտեցաւ հայերու լիակատար յաղթանակով, Մարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի փառապանծ յաղթանակներով: Այսպիսով հիմը դրուեցաւ նորահռչակ Հայաստանի Հանրապետութեան:

Այսօր ալ նոյն ցեղասպան թշնամին է որ կը սպառնայ Հայաստանի լինելութեան: Վկայ՝ Արցախի հայաթափումը: Վկայ՝ Հայաստանը արեւմտեան ատրպէյճան տեսնելու ռազմական, տեղեկատուական եւ բարոյահոգեբանական շարունակական ոտնձգութիւններն ու յարձակումները...Մենք դարձեալ մինակ ենք եւ մեզի արտօնուած չէ ներքին պառակտումներ ստեղծել, զիրար կոցահարել, սուր ճօճել իրարու դէմ՝ տարուած աթոռամոլութեան, պաշտօնամոլութեան եւ նման ազգակործան ախտերէ: Այսօր օղի, ջուրի, հացի նման անհրաժեշտ հրամայական է մեր համախմբուածութիւնը, համահայկական ոյժն ու ոգին, ճիշդ Մարդարապատեան օրերուն նման:

Մարդարապատը կոչ ու հրաւեր է վերստին յայտնաբերելու հայուն յարատեւման լուսեղէն եւ ոգեղէն խորհուրդը, ազգային-ազատագրական պայքարի կամքը, որ անթեղուած կ'ապրի ամէն մէկ ճշմարիտ հայուն մէջ Հայկի օրերէն...

Մարդարապատը կոչ ու հրաւեր է նաեւ Հայաստան-Սփիւռք արդիւնաւէտ համախմբուածութեան, այդ ուղղութեամբ կեանքի կոչելու ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ, ընդգրկելով Հայաստանի եւ սփիւռքի տաղանդաւոր, հմուտ ու նուիրեալ անհատները յանուն հայրենիքի եւ ազգի փրկութեան սուրբ գործին:

Մարդարապատը կոչ ու հրաւեր է նորոգ գիտակցութեամբ ու յանձնառութեամբ բոլորուելու Հայաստանի Հանրապետութեան շուրջ, մէկդի դնելով նեղ-անձնական, հատուածական բոլոր նկատառումները, քանզի հայրենիքը գերագոյն արժէք է: Իսկ պետականութիւնը՝ անոր յարատեւման առհասարակեան ու երաշխիքը:

Մարդարապատը ուղենիշ է նորանոր յաղթանակներու:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԳՈՅՑ

ԹՈՒՐՔԱԳԷՏ ՌՈՒԲԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆՆԻ ՀԵՏ

«Եթէ ես լինէի, չէի յայտարարի, որ Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը մեր թիւ մէկ առաջնահերթութիւնը չէ. թուրքագետ

24/04/2025



Թուրքագետ Ռուբեն Սաֆրաստեանը ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութեան մէջ Հայոց ցեղասպանութեան ուրացում չի տեսնում:

«Օրինակ՝ ուրացումն ինչո՞ւմ է երեւում: Ուրացում չկայ: Ի՞նչ ուրացում, որտե՞ղ էք տեսել, որ ուրացել են», - Azg.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց թուրքագետը:

-Հարցին թէ՛ արդեօք ուրացում չէ այն, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանն ամիսներ առաջ շուեյցարահայ համայնքի մի խումբ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ յայտարարել էր՝ «Պէտք է հասկանանք, լա՛ւ ինչ է տեղի ունեցել և ինչու է տեղի ունեցել, և ինչպէս ենք մենք դա ընկալել, ում միջոցով ենք ընկալել», կամ արդեօ՞ք ուրացում չէ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանի յայտարարութիւնը, որ «Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը մեր թիւ մէկ առաջնահերթութիւնը չէ», Ռուբեն Սաֆրաստեանը պատասխանեց.

-«Բայց դա ուրացում չի, որովհետեւ Յեղասպանութեան ճանաչման քաղաքականութիւնը դա քաղաքականութիւն է, իսկ քաղաքականութիւնն իրականութեան հետ է առնչում: Իսկ իրականութիւնն այն է, որ հիմա Հայաստանն այն վիճակում չէ, ինչ մինչեւ արցախեան վերջին պատերազմը: Եթէ պարտութիւնից յետոյ Հայաստանը հիմա այս վիճակում է յայտնուել, պէտք է վերականգնի իր Զինուած ուժերը, զենքերով համալրի, վերականգնի իր հեղինակութիւնը:

Այսինքն՝ հիմա ինքը չի կարող այդ քաղաքականութիւնն իրականացնել, բայց դա պէտք է պահել: Ես Հայաստանի մասին եմ խօսում, իշխանութիւնները կարելոք չեն: Հայաստանը Հայաստան է. իշխանութիւններն այսօր կը գան ու վաղը կը գնան, ուրիշները կը գան: Հիմա մեր երկիրը լուծում է գոյաբանական խնդիր»:

-Դիտարկմանը, որ արտաքին քաղաքականութիւնն, այնուամենայնիւ, իրականացնում են ՀՀ գործող իշխանութիւնները, և Յեղասպանութեան ժխտողականութիւնը նրանց վարած քաղաքականութեան մի մասն է, մեր զրուցակիցն արձագանգեց՝



-Հայոց ցեղասպանութեան ճանաչման և դատապարտման քաղաքականութիւնը պտք է լինի մեր զինանոցում, բայց այդ քաղաքականութիւնը կարելի է տարբեր ինտենսիվութեամբ իրականացնել:

«Հիմա այնպիսի ինտենսիվութեամբ, ինչպէս առաջ էինք անում, իմաստ չունի, որովհետև մեզ չեն էլ հասկանայ. Կ'ասեն՝ էս երկիրը հիմա այսպիսի վիճակում է և փոխանակ իր գոյաբանական խնդիրները լուծի, այսպիսի հարցեր է առաջ տանում, հասկանո՞ւմ էք: Մենք պետք է շատ լուրջ վերաբերունք մեր երկրի հեղինակութեանը:

Այսօր իշխանութիւնը գնացել, իր յարգանքի տուրքն է մատուցել Ծիծեռնակաբերդում: Ցեղասպանութեան բնագաւառում մեր հետազոտութիւնները շարունակուում են, իմ գիրքը վերջերս է լոյս տեսել: Կարող է քաղաքական նկատառումներից ելնելով՝ այդպիսի յայտարարութիւններ արւում են, բայց ուրացում են չեմ տեսել: Այլ բան է, որ եթէ ես լինէի՝ չէի յայտարարի, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը մեր թիւ մէկ առաջնահերթութիւնը չէ: Այդպէս ասելի ճիշտ կը լինէր »,- ամփոփեց Սաֆրաստեանը:

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 110-ԸՆԴ ՏԱՐԵԼԻԾԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Այս տարի եւս, միեւնոյն հաւատարմութեամբ մեր սրբադասեալ մէկ ու կէս միլիոն նահատակներու Կտակին, միեւնոյն ոգիով, մէկ սիրտ, մէկ հոգի, կիպրահայութիւնը՝ իր հոգեւորական դասուն եւ աշխարհիկ կազմակերպութեանց ու կառոյցներու մասնակցութեամբ, երիտասարդական, սկաուտական, համայնքիս անդամ-անդամուհիներու խիտ շարքերով՝ ոգեկոչեց Հայոց Ցեղասպանութեան 110 –րդ տարելիցը եւ նորոգեց իր ուխտն ու երդումը իր Պահանջատիրութեան:



Գլխաւոր յուշահանդէսը կայացաւ 26 Մայրիլ, 2025-ին, ժամը 7:30-ին, Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Ցեղասպանութեան Յուշակոթողին առջեւ, Երիտասարդական, Սկաուտական եւ ընդհանուր համայնքիս քայլարշաւէն ետք, ուր հայկական Եռագոյնը կը ծածանէր ամբողջ երկայնքով եւ ներկաներուն կողմէ բարձրագոյ կը վանկարկուէին հայոց

ընդվզման եւ բողոքի արտայայտութիւնները թուրք-ազերի շարունակուող ցեղասպանութեան դէմ եւ յանուն մեր կոխկոտուած իրաւունքներու վերականգնման:



Յուշահանդէսը սկսաւ Հոգեհանգստեան արարողութեամբ մեր սրբադասեալ մեռելներու խնկելի յիշատակին: Այնուհետեւ ուղերձներ կարդացին՝ կիպրահայոց Թեմի Կաթ. Փղի. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեան, Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանուհի Տիկ. Իննա Թորգոմեան, Հայ համայնքի Պետ. Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան եւ օրուան գլխաւոր հիւրը՝

Եւրոերեսփոխան Տիար Կոստաս Մավրիտիսը: Վերջինը յատկապէս շեշտեց որ Հայոց Յեղասպանութիւնը որ ծրագրաւորուած ու կազմակերպուած էր Օսմանեան կայսրութեան կողմէ պէտք է ճանաչուի գտնել Թուրքիոյ ներկայ իշխանութեանց կողմէ, ոչ միայն յանուն ճշմարտութեան եւ արդարութեան վերահաստատման, այլեւ մասնաւորապէս որպէսզի այդ ժխտողականութիւնը դուռը չբանայ նորանոր ցեղասպանութեանց, որոնք ներկայիս եւս կը գործադրուին դժբախտաբար, արձանագրեց ան:


Ազգային-հայրենասիրական երգերով հանդէս եկաւ Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ Երգչախումբը, ոգեշնչելով եւ յուզելով ներկաները:

Հուսկ, Յուշահանդէսի աւարտին, ծաղկեպսակներ գետեղուեցան Յուշակոթողին առջեւ՝ հայ թէ օտար պաշտօնական կառոյցներու եւ կազմակերպութեանց անունով, ինչպէս նաեւ՝ ծաղիկներ բոլոր ներկաներուն կողմէ մէկ առ մէկ՝ «Ցանկամ Տեսնել Զիմ Կիլիկիա» երգի հոգեյոյզ հնչիւններուն ներքոյ:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ, ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵՐ, ԿՈԶԵՄ ԱՊՐՈՂԱՅ:

THE HIDDEN MAP ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ



Հայոց Յեղասպանութեան 110-րդ տարելիցի ոգեկոչման ձեռնարկներու ծիրէն ներս, Հայոց Յեղասպանութեան Կիպրոսի Յանձնախումբը շինիչ գաղափարը ունեցած էր Կիպրոս հրաւիրելու THE HIDDEN MAP ժապաւէնի հեղինակ Անի Յովհաննիսեանը որ ներկայացնէ ժապաւէնը եւ անոր ողիսականը:



Հինգշաբթի 1 մայիս, 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Փանթոն սրահը ծայրէ ծայր լեցուն էր հայ եւ օտարազգի հանդիսականներով, որոնք մեծ հետաքրքրութեամբ եւ յուզումով ունկնդրեցին Անի Յովհաննիսեանին ողիսականը եւ դիտեցին ժապաւէնը արցունքով, ոտնակոխուած արդարութեան ընդվզումով, խռովայոյզ ապրումներով: Արդարեւ, THE HIDDEN MAP ֆիլմը ցոյց կու տայ Հայոց Ցեղասպանութեան զոհերէն մէկուն ամերիկահայ թոռնուհիին՝ Անի Յովհաննիսեանի ճամբորդութիւնը դէպի իր պապենական արգիլուած հողերը Արեւմտահայաստանի, ներկայ արեւելեան Թուրքիոյ, ընկերակցութեամբ սկովտիացի երիտասարդ հետազօտողի մը: Անոնք քայլ առ քայլ լոյսին կը հանեն վաղուց թաղուած նուիրական մասունքներ ու նշխարներ, քաջարի եւ տոկուն ժողովուրդի մը պատմական անցեալի թաքնուած քարտէսը: Սա ճանապարհ մըն է գոր Յովհաննիսեան կը շարունակէ, զայն բաժնեկցելով բազում մարդկանց հետ աշխարհով մէկ:

Կարելի չէ ֆիլմը դիտել առանց փշաքաղուելու կատարուած ցեղասպանութեան եւ բռնի տեղահանումին կամ հայրենահանման, որոնց ետին ձգուած բեկորները նշխար առ նշխար, քար առ քար կը պատմեն կատարուածին ահաւորութեան ու հրեշայնութեան մասին:

Իր պատգամն է բոլոր հայերուն՝ արժանաւոր շառաւիղներն ու ժառանգորդները ըլլալ անոնց, որոնք մեզի կեանք տուին, բայց իրենք կեանք չունեցան: Ե.Գ.

ԿԻՊՐՈՍԻ ՍՕՏ ՀՀ ԴԵՄՊԱՆ ԻՆՏԱ ԹՈՐԳՈՄԵԱՆԸ ԻՐ ՀԱՒԱՏԱՐՄԱԳՐԵՐՆ Է ՅԱՆՁՆԵՐ ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Մայիս 3, 2025-ին, Կիպրոսի Հանրապետութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Իննա Թորգոմեանը իր հաւատարմագրերն է յանձնել Կիպրոսի նախագահ Նիկոս Խրիսթոտուլիտիսին:



Ողջունելով և շնորհաւորելով նորանշանակ դեսպանին պաշտօնը ստանձնելու կապակցութեամբ՝ նախագահը յաջողութիւն եւ արդիւնաւէտ առաքելութիւն է մաղթեր՝ ընդգծելով նստավայր Հայաստանի եւ Կիպրոսի մէջ դեսպաններու նշանակման կարեւորութիւնը՝ ի նպաստ երկու երկիրներու միջեւ սերտ յարաբերութիւններու առաւել զարգացման: Նախագահ Խրիսթոթուլիտիսը գոհունակութեամբ արձանագրեր է Հայաստանի եւ Կիպրոսի միջեւ քաղաքական երկխօսութեան բարձր մակարդակը եւ կարեւորեր է ոլորտային փոխգործակցութեան ներուժի լիարժէք իրացումը, ինչպէս նաեւ ԵՄ շրջանակներէն ներս սերտ համագործակցութիւնը:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար՝ դեսպան Թորգոմեանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատրեանի ուղերձն ու բարեմաղթանքներն է փոխանցեր Կիպրոսի նախագահին և ժողովուրդին: Դեսպանը վերահաստատեր է իր յանձնառութիւնը առաւելագոյն ջանքերը ներդնելու երկու երկիրներու միջեւ պատմականօրէն ձեւաւորուած բարեկամական յարաբերութիւններու հետագայ ամրապնդման ու փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտներէն ներս համագործակցութեան առաւել խորացման ուղղութեամբ:

Դեսպանը ներկայացուցեր է նաեւ Հայաստանի մօտեցումները տարածաշրջանային զարգացումներու վերաբերեալ և ընդգծեր է Հայաստանի յանձնառութիւնը՝ նպաստելու տարածաշրջանի խաղաղութեան և կայունութեան հաստատման:

ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ ազնուափայլ դեսպան Տիկ. Իննա Թորգոմեանը, իրեն մաղթելով ամէն յաջողութիւն Կիպրոս- Հայաստան կապերու սերտացման գծով:



Կիրակի 11 Մայիս 2025, կ.ե. ժամը 5:00-ին, ՀԲԸՄիութեան Նիկոսիոյ ակումբին մէջ, գեղեցիկ եւ բովանդակալից Թեյասեղանով նշուեցաւ ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԸ, հովանաւորութեամբ Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեանի: Իր վսեմաշուք ներկայութեամբ ձեռնարկը պատուեց Կիպրոսի մօտ ՀՀ դեսպան ազնուաշուք Տիկ Իննա Թորգոմեան: Սրահը ծայրէ ծայր լեցուն էր երիտասարդ եւ երէց մայրերով, մեծմայրերով, փոքրիկներով եւ պատանիներով:

Գործադրուեցաւ ճոխ յայտագիր, որուն մաս առին Տիկ. Ռուպինա Գույումճեան՝ Բացման Խօսքով, Տիկ. Երան Գույումճեան՝ Մայրերուն ձօնուած իր բանաստեղծութեանց ասմունքով, Տիկ. Անահիտ Էսփիճեան՝ բանախօսութեամբ, սիրուած երգիչ Էտկար Աւոյեան՝ ազգային-հայրենասիրական երգերով եւ յատկապէս Մարտիկի Երգի հաւաքական կատարումով: Յայտագիրը աւելի եւս ճոխացաւ հայկական զուգապարի կատարումով:



Օրուան բանախօսը՝ Տիկ. Անահիտ Էսփիճեան, յատկապէս ըսաւ. «Մայրը մանուկին առաջին դաստիարակն է: Իր օրօրները՝ անոր առաջին խաղաղութեան դաշինքը: Ան կը սորվեցնէ ներել, նախքան անոր սորվիլը այդ բառին իմաստը: Ան կը սորվեցնէ սիրել առանց պայմաններու եւ կարեկցիլ բոլորին: Բախումներու ժամանակ ինքը հաշտարարն է, յուսահատութեան պահուն ինքը յոյսն է, իր գոհողութիւնը լուռ, իր ոյժը անտեսանելի, բայց իր ազդեցութիւնը անուրանալի»: Այսօրուան մարտահրաւերներուն դէմ յանդիման, Տիկ. Էսփիճեան յորդորեց մայրերուն որ «մենք մեր ապրած կեանքով իբրեւ լաւ քրիստոնէաներ օրինակ պիտի ըլլանք մեր շրջապատին», շեշտելով որ մայրն է պատասխանատուն մեր ապագային:

Խօսք առաւ նաեւ Վսեմաշուք ՀՀ Դեսպանը, ընդգծելով որ մայրը անփոխարինելի այն էակն է, որուն տեղը միշտ ալ թափուր կը մնայ անոր բացակայութեան: Անդրադարձաւ Երեւանի սրտին բարձրացած Մայր Հայաստանի յուշակոթողին, որպէս հայ մօր ոյժին, տոկունութեան, առաքինութեանց խորհրդանիշ: Ան յիշատակեց հայրենի որդեկորոյս կամ անհետ կորած որդուց մայրերը, որոնցմէ շատերուն հետ մշտական կապի մէջ է, աւելցուց ան, անոնց ցաւը բաժնելով...Վսեմաշուք դեսպանը շնորհաւորեց բոլոր մայրերը, անոնց մաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատ կեանք:

Տօնակատարութիւնը իր օրհնութեան խօսքով եւ Պահպանիչով եզրափակեց Գերաշնորհ Սրբազան Հայրը: Սրբազան Հայրը իր օրհնութեան խօսքին մէջ բարձր գնահատեց մօր եւ յատկապէս հայ մօր բացառիկ տոկունութիւնը, գոյատեւելու անխախտ կամքն ու խորհուրդը, որոնցմով ան կրցեր էր յաղթահարել պատմութեան ծանր հարուածները եւ ազգի վերածնութեան հզօրագոյն ազգակ դառնալ: Ան նշեց որ մայրերը չեն մեռնիր երբեք, այլ իրենց երկնային կայքէն ալ կը հսկեն իրենց զաւակներուն, եւ բերաւ իր կեանքէն յիշատակելի դրուագ մը:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ԲՈԼՈՐ ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԸ: ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ ԲՈԼՈՐԻՆ: Ե.Գ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ



Համառոտաբար ուրուագծենք ցեղասպանութեան պատճառած զոհերն ու կորուստները եւ դրանց երկարաժամկետ՝ մինչեւ այսօր զգացնել տուող հետեւանքները:

ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔԻ ԿՈՐՈՒՍՏ

Մինչեւ 1915 թ. հայ էթնոսի հինգհազարամեայ գոյատեւման տարածքն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այսինքն՝ պատմական Հայաստանը: Աշխարհառազմավարական առումով, այս մեծ՝ աւելի քան 350,000 քառ. կմ ունեցող տարածքը նմանում է մի հսկայ բերդի, որն ունի մի շարք պաշտպանական շրջաններ, որոնցից իւրաքանչիւրն ի

վիճակի է ինքնուրոյն սպահովել իր պաշտպանութիւնը: Պաշտպանական շրջաններից մեկի կամ մի քանիսի գրաւումը օտար զաւթիչի կողմից դեռեւս չէր նշանակում Հայաստանի գրաւում, քանի որ մեկ ուրիշ շրջանում կամ շրջաններում կենտրոնացած հայկական ուժերը միշտ ի վիճակի էին լինում վերախմբաւորուել ու, յարմար առիթը որսալով, հակայարձակման անցնել եւ վերատիրանալ Հայաստանի զաւթուած տարածքին:

Աւելի ուշ՝ ամենաձանր 15-19-րդ դարերում, երբ Հայաստանի պետականութիւնը կործանուել էր, իսկ հայկական զինուած ուժերը հիմնականում ոչնչացուել էին ու վերացուել ասպարեզից (մանր զօրամիաւորումներ էին պահպանուել միայն առանձին լեռնային շրջաններում), Հայաստան երկրի գոյատեւման գլխաւոր առհաւատչեան ժողովրդագրական գործոնն էր՝ նրա տարածքում հայկական տարրի մեծամասնութիւն կազմելը: Երբ մոնղոլական ու թուրքմենական արշաւանքների կամ թուրքեւպարսկական պատերազմների հետեւանքով Հայաստանի որեւէ մաս աւերուում էր (երբեմն գրեթէ անմարդաբնակ դառնում), շատ չանցած Հայաստանի միւս մասերում ապաստանած հայութիւնը, կարծես մագնիսական ձգողականութիւն ունենալով հայրենի, պապենական հողի նկատմամբ, դարձեալ վերադառնում էր, միշտ յուսալով, որ հայրենիքը վաղ թէ ուշ ձեռք է բերելու ազատութիւն, անկախութիւն, տնտեսական եւ ռազմական հզօրութիւն:

Հայաստանի նահանգներն ու գաւառները սոսկ տարածք չէին, այլ հինգհազարամեայ կենսատարածք ու հայրենիք: Ցեղասպանութեան առաջին աստիճանի հետեւանքն այն է, որ հայերին օտարացրել եւ անջատել են իրենց կենսատարածքից: Ռազմավարական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին պաշտպանական մի քանի շրջան ունենալու նախկին հնարաւորութիւնից. մնացել է մի բոլոր Հայաստան՝ ընդամենը մի վերջին միայնակ ամբոց: Նա այլեւս նահանջելու, ուժերը վերախմբաւորելու տեղ չունի: Հայաստանն այլեւս ռազմական ոչ մի պարտութեան իրաւունք չունի: Այլապէս՝ դա կը լինի Հայաստանի ու, հետեւաբար, հայ ազգի վերջը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Անթիւ եւ անհամար են մեր մշակութային կորուստները: Դրանք ոչ միայն առանձին ու անջատ եկեղեցիներ են, ճարտարապետական գանազան անկրկնելի շինութիւններ ու կոթողներ, այլեւ՝ հինգ հազար տարուայ ընթացքում այդ հողի վրայ ստեղծուած ամբոցներ, քաղաքներ ու գիւղեր, այլեւ՝ տասնեակ հազարաւոր մատենաներ, որոնցում ամփոփուած է



եղել ժողովրդի հանճարն ու գիտելիքը: Միայն մէկ խօսուն փաստ. այսօր ամբողջ աշխարհում կայ մօտաւորապէս այնքան հայերէն ձեռագիր մատեան, որքան ոչնչացուել է Եղեռնի ժամանակ: Անգին տեղեկութիւններ ու գաղտնիքներ են ոչնչացուել, կորել եւ գնացել, մեզ զրկելով մեր նախնիների ստեղծած հոգեւոր ժառանգութիւնից, մեզ կտրելով նրանց մտքից ու ոգուց:

ՆԻԻԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏԵՐ

Յեղասպանութեան ենթարկուած արեւմտահայութեան ամբողջ ունեցուածքի եւ գոյքի բռնագրաւումն ու թալանն ստիպեց վերապրած զանգուածներին տասնամեակներ շարունակ զբաղուել ոչ թէ ազգային հաւաքական կեանքը հարստացնող եւ ամրապնդող ստեղծագործ աշխատանքով, այլ չարքաշօրէն, անջատ եւ անջատ ճգնել իրենց ընտանիքների տարրական ֆիզիկական գոյութիւնն ապահովելու համար:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎՆԱՍՈՒԱԾՔ

Հոգեբանական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին բնական ու ձեռակերտ ազգային խորհրդանիշների հետ ամենօրեայ շփումից, դրանով իսկ վերացնելով հայ ազգի բնականոն հոգեւոր զարգացման հնարաւորութիւնը: Միաժամանակ՝ ցեղասպանութիւնը շատ հայերի մէջ առաջացրել է թերարժէքութեան բարդոյթներ, ազգի ապագայի նկատմամբ թերահաւատութիւն, որոշ դէպքերում նույնիսկ ինքնատեացութիւն՝ ազգային շահերի եւ արժէքների մերժում եւ օտարագարութիւն:

ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄ

Հայոց ցեղասպանութեան ընթացքում ոչնչացուեցին ոչ թէ սոսկ մարդկային զանգուածներ, այլ ժողովուրդ, որը համախմբուած եւ կազմակերպուած էր իր դարաւոր կառոյցների շուրջը: Ոչնչացուեցին համայնքները, եկեղեցիները, դպրոցները, բազմաթիւ ու զանազան հայկական կառոյցներն ու կազմակերպութիւնները, վերջապէս՝ հայ ազգի ղեկավարութիւնը, ներառեալ՝ քաղաքական, մտաւորական ու մշակութային ընտրանին: Մարդկային զանգուածներն առանց իրենց համախմբող կառոյցների այլեւս ժողովուրդ չեն, այլ անհատներ: Յեղասպանութիւնից յետոյ աշխարհով մէկ ցրուելով, սփիւռքահայութեան ընդամենը մի փոքր հատուածը կարողացաւ վերահամախմբուել ազգային նորաստեղծ կառոյցների շուրջը: Արտերկրում ապաստանած հայութեան միւս մասը ներգրաւուեց օտար կառոյցների մէջ եւ աստիճանաբար ձուլման ենթարկուեց: Խորհրդային Հայաստանում հայութիւնը նոյնպէս կազմակերպուեց ոչ ազգային կառոյցների եւ գաղափարախօսութեան շուրջը եւ մշակութապէս զգալի չափով ապահայացաւ (յատկապէս քաղաքական եւ մտաւորական վերնախար):

Հայկական արանդական կառոյցների ոչնչացումն այն կարեւոր առարկայական գործօններից էր, որ թոյլ չտուեց օտարութեան մէջ յայտնուած հայութեան բեկորների կազմակերպուել սփիւռքը միաւորող մէկ միասնական կառոյցի մէջ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԵՐ (20-ԸՂ ԴԱՐՈՒՄ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԵՐԸ)

Հասկանալու համար հայութեանն այսօր հետապնդող խնդիրները, անհրաժեշտ է նաեւ պարզօրէն պատկերացնել ոչ միայն Մեծ եղեռնի, այլեւ վերջին հարիւրամեակում մեզ պատուհասած շարունակական աղէտների ահաւոր հետեւանքները: Այդ աղէտների պատճառած մարդկային կորուստներն ազդել են ոչ միայն մեր ազգի քանակի, այլեւ նրա հաւաքական որակի վրայ (մասնաւորապէս՝ հայ զանգուածների մէջ արմատաւորելով այսպէս կոչուած «վերապրելու հոգեբանութիւնը»՝ անհատի համար իր եւ ընտանիքի անձնական շահի ամէն ինչից վեր դասումը):

1894 թ. մինչեւ 1922 թ.՝ չորս փուլով իրագործուած հայկական ցեղասպանութիւնը, բնաջնջելով հայկական քաղաքակրթութիւնն իր բնիկ տարածքի մեծ մասից, իսկեց արեւի քան



2.000.000 հայերի կեանք (շուրջ 300.000 հայ ոչնչացուեց 1894-96 թթ., 30.000՝ 1909 թ., 1.5 միլիոն՝ 1915-16 թթ., շուրջ 300.000՝ 1918-1922 թթ.):

1920-1921 թթ. Արեւելեան Հայաստանի կենտրոնական մասում հռչակուած Հայկական խորհրդային փոքրիկ հանրապետութիւնը, վայելելով յարաբերական խաղաղութեան եւ կայունութեան 70-ամեայ մի շրջան՝ կարողացաւ արձանագրել տնտեսական եւ մշակութային լուրջ առաջընթաց: Բայց, ի յաւելումն ցեղասպանութեան պատճառած մարդկային կորուստների, հայերը մեծ զոհեր տուեցին նաեւ Խորհրդային Հայաստանում.

1920-21 թթ. ոչնչացուեց անկախութեան շրջանում ազգային ոգով կոփուած գրեթէ ողջ հայ սպայակազմը, իսկ 1930-ական թթ. բոլշեւիկեան խաւարամոլութեան զոհ գնաց հայ մտաւորականութեան ծաղիկը՝ հազարաւոր շարքային քաղաքացիների հետ: 1941-1945 թթ. պատերազմին մասնակցութիւն բերած շուրջ 600000 հայորդիներից զոհուեց շուրջ 300 հազարը: Պատկերացնելու համար, թէ սա ինչ սահաւոր թիւ է փոքրաքանակ հայ ազգի համար, բաւական է ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Մեծ Բրիտանիան տուել են գրեթէ ճիշտ նոյնքան սպանուած՝ համապատասխանաբար 291.557 ու 357.116 զինուոր:

1949 թ. Հայաստանից կազմակերպուած բռնագաղթը հազարաւոր նոր զոհերի պատճառ դարձաւ: Կայուն ու տնտեսական զարգացման աննախադէպ բարենպաստ ժամանակահատուած էին 1954-ից մինչեւ 1988 թ. ընկած տարիները: Սակայն սկսած 1988 թ.՝ Հայաստանի այս վերջին բեկորում հայ ազգի գոյատեւումը դարձեալ հարցականի տակ առնուեց. 1988 թ. Սպիտակի երկրաշարժը խլեց 25-30 հազար կեանք եւ ամբողջութեամբ աւերեց Հայաստանի մօտ մէկ երրորդը, ներառեալ Երեւանից յետոյ ամենամեծ հայկական քաղաքները՝ Գիւմրին ու Վանաձորը: Դրան հետեւեալ դարաբաղեան պատերազմում զոհուեցին եւս շուրջ մէկ տասնեակ հազար հայեր: Այս ամէնին ուղեկցած արտագաղթը, որը կանգ չի առել ու շարունակուում է, Հայաստանից արդէն տարել է 1-1.5 միլիոն մարդ:

Ցաւօք, ցեղասպանութեանը հետեւեց մի երկարատեւ շրջան, որի ընթացքում հայութեանը պարզապէս արգելուեց ազատօրէն անդրադառնալու իր կորուստներին, մտածելու ապաքինման ուղիների մասին: Ամենակարեւորն այն է, որ Խորհրդային Հայաստանը հայկական պետականութեան ձեւ չէր (որքան էլ փորձէն դրան այդպիսի գործառոյթներ վերագրել), այլ ազգային արժեքներին ու նպատակներին խորթ, գաղափարապէս զաղութացուած կուսակ-պետական վարչական միաւոր էր, հզօրագոյն կայսրութեան մի մասնիկը՝ իր մշակութապէս հետզհետէ ռուսականացող կուսակցական եւ մտաւորական վերնախաւերով: Խորհրդային Հայաստանն ի վիճակի չէր ու բնաւ էլ կոչուած չէր յաղթահարելու ցեղասպանութեան հետեւանքները, ներառեալ ամենակարեւորը՝ հայկական բնիկ տարածքներին կամ դրանց գոնէ մի մասին վերատիրացումը (լինի Արեւելեան թէ Արեւմտեան Հայաստանում), որը եւ միայն կարող էր ապահովել հայ ազգի անվտանգ զարգացումը Խորհրդային կայսրութեան հնարաւոր փլուզման դէպքում: Չլուծուեց եւ չէր կարող լուծուել նաեւ ցեղասպանութեան միւս՝ շարունակաբար ուժաթափող հետեւանքը՝ սփիւռքում մշտապէս ընթացող ու այժմ էլ աւելի արագացած ձուլումը՝ «սպիտակ ջարդը»: Ազգային իրաւունքների վերականգնման ուղղությամբ հնարաւոր եղաւ կազմակերպուած պայքարի դիմել շատ աւելի ուշ՝ միայն 1960-ական թթ. սկսած: Ժամանակի այդ կորուստը եւս թանկ նստեց. այդ ընթացքում տասնեակ հազարաւոր հայեր զոհ գնացին սպիտակ ջարդին, իսկ թշնամին է՛լ աւելի ամրապնդեց իր նուաճած դիրքերը:

Շատ բնական ու հասկանալի է, որ այսպիսի անբեւեակայելի տարածքային, հոգեւոր, մշակութային, նիւթական ու մարդկային կորուստները պէտք է ազդէին նաեւ ազգի ընդհանուր մտաւոր ու բարոյական ներուժի վրայ: Սակայն հե՛նց այս նոյն ցաւալի փաստերը մեզ պէտք է նաեւ ուժ ու հաւատ ներշնչեն, որովհետեւ, թերեւս ոչ մի ազգ չէր դիմանայ այսպիսի հարուածների եւ բառիս բուն իմաստով կ'անհետանար աշխարհի



շրջանային զօրաւոր գործակցութեան պիտի վերածուին: Մակայն, այս վերոյիշեալ չորս պետութիւններու որոշումը՝ Կիպրոսի կղզին ամբողջութեամբ ճանչնալ որպէս յունական եւ Թուրքիան որակել որպէս Հիւսիսային Կիպրոսը գրաւող ուժ, մասամբ յուսախաբ ըրած է Անգարան եւ շատ նեղացուցած: Աւելին, այս թրքախօս չորս պետութիւնները Կիպրոսի մէջ դեսպանատուներ բանալով, յստակօրէն հաստատեցին որ Կիպրոսի Յունական կողմի կառավարութիւնը ամբողջ կղզիին վրայ գերիշխանութիւն ունի: Այս որոշումով, այս չորս պետութիւնները կ'անտեսէին Թուրքիոյ դիրքորոշումը եւ անոր ճանաչումը «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութիւն»ը:

Թուրքիոյ համար, «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութեան» ճանաչումը իր արտաքին քաղաքականութեան անկիւնաքարերէն մէկն էր: Անցնող տասնամեակներուն, Անգարան ամէն ճիգ գործադրեց որպէսի միջազգային, օրինական ճանաչում տայ Հիւսիսային Կիպրոսին, նոյնիսկ ջանաց որ ան մաս կազմէ միջազգային կազմակերպութիւններուն որպէս «դիտորդ» անդամ, ինչպէս «Թրքական Պետութիւններու Կազմակերպութեան»: Այս խաղն ալ ջաջողեցաւ, քանի որ Կիպրոսը, իր ամբողջութեանը, մաս կը կազմէ Եւրոպական Միութեան, եւ հետեւաբար թուրքերը դուրս մտացին: Որեւէ ճանաչում Կիպրոսի թրքական մասին՝ կարմիր գիծ է Եւրոպական Միութեան համար:

Անցնող տասնամեակէն սկսեալ, Եւրոպական Միութիւնը գործնականօրէն կը փորձէ ինքզինք հաստատել Կեդրոնական Ասիոյ մէջ: Ապրիլ 2025-ին, Սամարկանտի մէջ տեղի ունեցած ԵՄ – Կեդրոնական Ասիա զագաթնաժողովին, Կիպրոսի հարցը սեղանի վրայ էր: Կեդրոնական Ասիոյ պետութիւնները ԵՄ սկզբունքներուն համաձայն, պէտք էր յարգէին Միջազգային Մարմիններու որոշումները, մանաւանդ Միացեալ Ազգերու Ապահովութեան Խորհուրդի թիւ 541 եւ 550, որոնք կը դատապարտէին «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութեան» անկախութեան հռչակումը:

Ըստ ԵՄ, Կեդրոնական Ասիոյ պետութիւններու այս որոշումը զիրենք կը հեռացնէր նաեւ շրջանի մէջ Ռուսական ազդեցութենէն: Նոյնպէս, ան կը չէզոքացնէր Թուրքիոյ փառասիրութիւնը որպէս շրջանի առաջնորդը թրքախօս աշխարհին: Եւ վերջապէս, ան Յունաստանին եւ Կիպրոսին կը հասկցնէր որ Պրիւքսելը պատրաստ է իրենց գերիշխանութիւնը պաշտպանելու նոյնիսկ անոնց սահմաններէն անդին:

Քազախստանի, Իրաքիստանի, Թիւրքմէնիստանի եւ Խրիսթոստանի համար ԵՄ էն եկող տնտեսական շահերը շատ աւելի ծանր կը կշռեն քան Թուրքիոյ հետ խորհրդանշական կապերը:

Ճիշդ է որ Ռուսիան շատ զօրաւոր կապեր ունի այս թրքախօս պետութիւններուն հետ, սակայն, վերջին զարգացումներուն պատճառով, ինչպիսին են Ուքրանիոյ պատերազմը, տնտեսական պատժամիջոցները եւ Չինաստանի հզօրացումը շրջանին մէջ, Ռուսիոյ ազդեցութիւնը զգալիօրէն տկարացած է: ԵՄ եւն շահերուն հետ կը համընկնին Ռուսիոյ ազդեցութեան տկարացումը այս շրջանին մէջ:

Ռուսիան ուղղակի շահեր չունի Կիպրոսի մէջ, բայց ինչ որ կը տկարացնէ Թուրքիոյ ազդեցութիւնը այս թրքախօս երկիրներուն մէջ, Քրեմլինի շահուն կու գայ: 2020-ի Արցախի պատերազմէն ետք, Թուրքիան իր ազդեցութիւնը շատ զօրացուց Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ, երբեմն բախելով Ռուսական շահերուն: Թուրքիոյ ներթափանցումը Կեդրոնական Ասիա, Մոսկուայի մէջ կը համարուի որպէս Թրքական մարտահրաւեր նետուած Ռուսիոյ արանդական ազդեցութեան գօտիներուն մէջ: Կեդրոնական Ասիոյ այս պետութիւններու մասնակի հեռացումը Թուրքիայէն, Ռուսիոյ շնչելու տեղ կու տայ, մանաւանդ այս օրերուն: Նոյնպէս, Անգարայի այս «պարտութիւն»ը զինք շատ կը տկարացնէ՝ Մոսկուայի հետ տարբեր բանակցութիւններու ժամանակ:

Եւրոպան եւ Չինաստանը ուրախ են որ Կեդրոնական Ասիոյ այս երկիրները աւելի լայն կը բանան իրենց կարկիւնները, եւ փոխանակ գլխաւորաբար մէկ երկրի հետ (Թուրքիա) շատ



մօտ յարաբերութիւններ ունենալու, իրենք ալ առիթը կ'ունենան իրենց ներդրումներով մեծ շահեր ապահովել: Չմոռնանք որ այս երկիրները շատ հարուստ են քարիւղով եւ զանազան տեսակի հանքերով եւ բարձրարժէք մետաղներով:

Ինչպէս վերը յիշեցինք, Անգարայի համար այս պետութիւններուն որոշումները (Կիպրոսի հարց, ԵՄ, Չինաստան, Միացեալ Նահանգներ կապերը ընդլայնել) շատ յուսահատեցուցիչ են: Փան Թուրքիզը կը նկատէին որպէս միացնող երազ՝ ցամաքամասերու միջեւ, հիմա ճաթոտած է քաղաքական շահերու պատճառով (ոճալ փոլիթիք): Կեդրոնական Ասիոյ պետութիւնները, կամ «Թրքական Պետութիւններու Կազմակերպութիւն»ը, հակառակ իր կրօնական եւ մշակութային նմանութիւններու, պէտք եղած ուժը չունի միջ-պետական տարբերութիւնները յաղթահարելու: Այս պետութիւնները տարբեր քաղաքական սիստեմներ ունին, ռազմավարական տարբեր նպատակներ, արտաքին անկախ քաղաքականութիւն եւ քաղաքական զանազան կապեր: Կիպրոսի հարցի շուրջ համաձայն-անհամաձայնութիւնը ցոյց տուաւ որ միայն լեզուի, կրօնի եւ ասանդութեան վրայ հիմնուած յարաբերութիւնները իրենց սահմանները ունին: Տակաւին, Կիպրոսի մէջ դեսպաններ նշանակելով այս պետութիւնները ըսին որ լեզուի եւ կրօնքի կամ մշակոյթի վրայ հիմնուած միջազգային քաղաքականութիւնը շատ հաստատուն չէ, եւ թէ ազգային շահերը առաջնահերթութիւն ունին:

Անգարայի համար, այս չորս պետութիւններուն յայտարարած դիրքը Կիպրոսի հարցին նկատմամբ՝ զայն կոնակէն դաշունահարել էր ... : Բայց, Ասթանայի, Թաշկէնտի, Աշկապատի եւ Պիշքէքի համար, ասիկա միջազգային նոր զարգացումներու համար նոր քաղաքականութիւն էր:

Եւրոպական Միութեան ճնշումներուն, Չինաստանէն ակնկալուած տնտեսական եւ այլ շահերուն, ինչպէս նայել Ռուսիայէն եւ Թուրքիայէն երկարաժամեայ ինքնիշխանութեան խայծով, Կեդրոնական Ասիոյ պետութիւնները իրենց անկախ ճամբան սկսած են գծել:

Մեծ պետութիւններու այս խաղին մէջ, հին բարեկամութիւնները բաւարար չեն: Կարելորդ ռազմավարական նոր դաշնակցութիւններն են, տնտեսական շահերը եւ աշխարհաքաղաքական ճկունութիւնը: Այս կացութեան մէջ, Թուրքիան պէտք է վերանայի թէ ինչպէ՞ս պէտք է իր շրջանային «առաջնորդութիւն»ը վերագնահատէ, ճշդէ:

«Գաղափարական Եղբայրակցութեան» դարը սկսած է գունատիլ: Հիմա նոր գաղափարական քաղաքականութիւն մը սկսած է երեւան գալ, ուր քու ամենամօտիկ դաշնակիցդ կրնայ բարեկամանալ քու հակառակորդներուն հետ եւ ... ձեռք թօթուել:

Լոս Անճելըս

«ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՐՑԱԽԸ ԹԷ՞ ՍՓԻՒՌԸ».

ՍՈՒՐ ՀԱՐՑ, ԲԱՅՑ, ՆԱԵՒ... ՀՈՒՐ

Պարոյր Յ. Աղպաշեան



Կար ժամանակ, երբ ազգային ՀՐԱՏԱՊ ու ՆՈՒՐԲ հարցերու նկատմամբ, պարտադիր լռութեան պահանջք կար, կամ զանոնք կամովին ու գիտակցաբար անտեսելը եւ կամ, լուսագոյն մօտեցում համարելով, խուսափիլ անոնց մասին արտայայտուելէ կամ արծարծելէ:

Սակայն, գիտակից ու խոհեմ, խորաթափանց ու զգաստ անձնաւորութիւններու ու զգուշաւոր շրջանակներու մօտ, նշմարելի թէ ոչ, չէին

պակսեր վերագրումներ ու դիտարկումներ, առիթ-առիթ, ստեպ-ստեպ անդրադառնալու ներազգային այնպիսի խնդիրներու, որոնք ծածկուած ու քողարկուած կը մնային:

Թերեւս այդպիսի հիմնական թղթածրարներէն եւ օրակարգերէն կը հանդիսանար Լեռնային Ղարաբաղի մեծկակ փաթեթը, յատկապէս Խորհրդային Միութեան ժամանակներուն, որովհետեւ ոչ ոք կը համարձակէր կամ կը յանդգնէր, բացէիբաց զայն մէջբերել կամ վկայակոչել, թէւ մերթ ընդ մերթ կը յիշուէր անիկա, բայց, առանց դառնալու առաջնահերթային, ոչ ալ փայլատակային:

Կային, անշուշտ, ընդդատակեայ որոշ շարժումներ ու ճիշեր, հեռու լուսարձակներէ ու համարեա անգօր հետեւանքներէ, ի դէմս Մոսկուայի խստութեան, կարգականչութեան եւ աչալրջութեան, այդպիսի «բռնկող» դռներ չբանալու մտահոգութեամբ:

Խորհրդային Միութեան տարանջումը, հուսկ՝ յաջորդական հանրապետութիւններու անկախացումները, արդէն ազատութեան դարպասները բացին եւ, ամէն կողմ, երկկուան գաղտնի կամ կիսագաղտնի «տետրակ»ները հրապարակ սկսան նետուիլ, մանաւանդ երբ անոնք կը վերաբերէին հողային ամբողջականութիւններու, տարածքային անձեռնմխելիութիւններու ու գերիշխանութեան իրաւասութիւններու, զանոնք անպայման իրականացած տեսնելու ու վերակենդանացած նկատելու անյողողող վճռակամութիւններով:

Անկասկած, ասոնք ձեռք բերելը ու տիրապետելի դարձնելը բնաւ ալ դիւրին չէին, ոչ ալ արագօրէն հասանելի, բայց, ո՞վ որո՞ւն կրնար զսպել, խանգարել կամ խոչընդոտել, հոգ չէ կային նման բիրտ ու բռնաբարելի սեւ ուժեր, որոնք կը փորձէին այդ խառնաշփոթին մէջ, ոչ միայն իրենց շահերը պաշտպանել, այլեւ՝ որքան որ կրնան, իսկ նաեւ ուրիշներուն իրաւունքները:

Այդուհանդերձ, ոչ ոք կ'ուզէր զիջիլ իր պատմական սեփականութիւններէն, ասոնք ըլլային սահմանային թէ ալ գօտիներով ամրապնդուած, զանոնք նկատելով իրենց արդար եւ անվիճելի օճախները, որոնք կրնային առաջնորդել իրենց, յոյսի ու լոյսի ճամբաներով, հասնելու իրենց դարաւոր նպատակներու կարգաւորման, հետեւաբար, այդ էր պատճառը, որ կարգ մը նախկին հանրապետութիւններու ժողովուրդներ, լծուած էին, նախ՝ իրենց անկախութիւնները ապահովել, ապա՝ իրենց գերազատութիւնները հասունացնել:



Բնական է, երբ վիթխարի տարողութեամբ, կատարողութեամբ ու կարեւորութեամբ տեղաշարժեր կ'արձանագրուէին ամենուրեք, Հայաստանը եւ Արցախը կրնային լուռ մնալ, գործի չանցնիլ ու չհետապնդել իրենց իրաւունքները, մանաւանդ որ՝ անոնք երբեք չէին կրնար մոռցած ըլլալ զանոնք, ժամանակը հասած ըլլալով, գործնապէս շարժելու եւ, ամէն գնով, վերակենդանացնելու իրենց հարազատ շրջանները, այս պարագային, նախապատուութիւնը տալով Լեռնային Ղարաբաղի ազատագրման եւ անկախացման:

Եկան այդ ժամանակները. զոյգ հանրապետութիւններ զոյացան եւ ինչ ոգեւորութեամբ, ցնծութեամբ ու լաւատեսութեամբ, հայ ժողովուրդի երազները իրականացած տեսնելով, որոնց համար ո՞րքան երկար սպասած էին, հետեւաբար, մեկնակետը կ'աւետէր այդ անկախութիւնները ամրապնդել ու զօրացնել, երկիրը կենսուցանել ու բարգաւաճել:

Իսկ ամենէն կարեւորը, հայ ժողովուրդը համախմբել ու կեդրոնացնել, եթէ ոչ հայրենի հողին վրայ, այլ՝ անպայմանօրէն, ոգեւին ու հոգեւին, գործնապէս թէ էապէս, մեկտեղուելու, որպէս մէկ անքակտելի ամբողջութիւն, միասնաբար անկախութիւնները տանելով, մէկ յաջողութենէն միւսին, մէկ նուաճումէն՝ յաջորդին, մէկ իրագործումէն՝ նորին, վերականգնող ու վերածաղկող հայրենիքը վերածելով ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՌԻԹԵԱՆ հարուստ գանձարանի մը:

Մակայն, ներքին թէ արտաքին քամիներն ու փոթորիկները տուի՞ն այդ երջանկութիւններն ու երաշխիքները, որոնց այդքան ակնդետ սպասած էր հայ ժողովուրդը, վայելելու եւ ըմբոշխնելու անկախութեան բարիքները:

Դժբախտաբար, պատասխանը այնքան ալ քաջալերական եւ յուսադրական չէր, ի տես այն վերիվայրումներուն ու տագնապներուն, ելեւէջներուն եւ սայթաքումներուն, որոնք ոչ միայն ցաւեր ու վերքեր, անկումներու ճեղքեր պատճառեցին, այլեւ, ինչ որ տեղ անկախութեան ոսկեղնիկութիւնը, հրաշալիութիւնը ու նոյնիսկ ապագայականութիւնը մթագնեցին:

Ճիշդ է, անկախութեան գնացքը մնաց, երթը շարունակուեցաւ, բայց ինչ գնով եւ ինչ արդիւնաւետութեամբ եւ ո՞րքանով գոհացում տուաւ իր տեղաբնիկներուն ու սփիւռքաբնիկներուն:

Պարզ հաշուարկում մը. երբ անկախութեան զանգը հնչեց, Հայաստանի բնակչութիւնը, մօտաւորապէս չորսուկէս միլիոն էր, իսկ այսօ՞ր, հազիւ երկուքէս, ուստի, ինքնին հարց չէ՞, թէ ինչո՞ւ այս նուազումը եւ ո՞ր պէտք է փնտռել շարժառիթները, եթէ ոչ՝ հենց իշխանական բացայայտ թէ թաքնուած «քուլիս»ներուն մէջ, որոնք վայրագ անտարբերութեամբ եւ անկուշտ յափշտակութեամբ, երկիրը գերեվարեցին, թալանեցին, յօշոտեցին, բզքտեցին, իսկ զարմանալի՞ն, նոյն յամառութեամբ, կը շարունակուին այդ քաղաքական նախճիրները, յաւելեալ անորոշութիւններով ու զարտուղութիւններով:

Մեր սրտցաւ այս արագ գրառումները, վերջին տարիներու լոյսին տակ, բոլորովին նոր փորձութիւններու եւ աղիտաբերութիւններու առաջնորդած են հայրենիքը, որոնց «հերոս»ներն են՝ իշխանութիւն-ընդդիմութիւն հեւիհեւ կործանարարութիւնները, որոնք ժողովուրդն իսկ առած են իրենց սուր քցաններուն մէջ եւ անայլայլ կը շարունակեն իրենց «ակօս»ութիւնները, կարծես թէ հայրենիքը ասոր կամ անոր «որջ»ն է, ուրեմն, ամէն ոք իրաւունք ունի, իր քննադատութիւնն ու քեֆին համեմատ զայն օգտագործելու, անշուշտ, ի հաշիւ ժողովուրդին, հայրենիքին ու պետականութեան, մեղմ ըսած, թուլացումին, խախտումին ու խարխափումին:

Ես պիտի չխօսիմ այն այլանդակութիւններուն եւ այլամերժութիւններուն, խայտառակութիւններուն ու գայթակղութիւններուն մասին, որոնց ամենօրեայ ակնդիրը եւ ականատեսը կը դառնանք, խիստ ցաւալիօրէն, բայց, ինչպէ՞ս բացատրել Ազգային Ժողովէն ներս տեղի ունեցող ծեծուղոտութիւնները, հրմշտկոցները, հայիոյանքները, այն ալ, մի՞ զարմանաք, մեծ մասով, իգական սեռի «կարծրասուն» ներկայացուցիչներու անվայել



բառերով եւ արտայայտութիւններով, իսկ տղամարդոց հասարակութեան յիշոցներն ու բռունցքները, այլեւս դարձած են մնայուն... աւանդոյթներ, իսկ այս բոլորը, միայն մե՞նք ենք որ կը վայելենք, երբ աշխարհը «ճրի» հանդիսատես է՝ հայաստանեան այս կրկեսային խաղութիւններուն:

Իսկ հիմա անդրադառնանք, ուրիշ ողբերգութեան մը, որ, ինչպէս վերը նշեցինք, բնաւ նորութիւն չէ հիմա, այլ դարձած է վայհաջութեան ու նողկալիութեան գլուխ-գործոցի մը. ատիկա՝

Հայաստանցի-Արցախցի հակամարտութիւնն է եւ Արցախցի-Հայաստանցի աքլորամարտութիւնը, որոնք ամէն վայրկեան եւ ամէն առիթով, կը հնչեն այս կամ այն անկիւններէն ու պատուանդաններէն:

Այս ամօթալիութիւնները ու խպնելիութիւնները, անկրթութիւնները ու սանձարձակութիւնները չեն հնչուիր կամ արտասանուիր ազերիներու ու թուրքերու կամ այլոց կողմէ, այլ՝ նոյնինքն, հայկական կողմերէն, որոնք, մէկը կամ միւսը կը մեղադրեն, հազարումէկ ամբաստանութիւններով, այն աստիճան որ, Հայաստանցին կը պահանջէ Արցախցիին հեռացումը Հայաստանէն, իսկ Արցախցին՝ կառչած կը մնայ իր հայր ու հայկականութեան ինքնութեան:

Ողբալին այն է, որ՝ երկու կողմերն ալ զիրար կը քննադատեն՝ մէկը Արցախը ծախելուն ու զայն շահագործելուն մէջ, իսկ միւսը՝ իր աղէտներուն փորձանքները բեռնցնելով միւսին վրայ:

Կասկած չկայ, որ այս թունաւորեալ ասեկոսներուն մէջ, կան որոշ ճշմարտութիւններ, բայց, ատոնք կը նշանակէ՞ն, որ «մեղաւոր»ները չմերկացուած, դիմեն նման դաւաճանական գործարքներու, կարծես թէ՝ Արցախցին հայ չէ, կամ Հայաստանցին, հակաԱրցախցի է:

Այսքան հայատեսացութիւն, իրարու նկատմամբ, շատ չէ՞, հայրենակիցներ, երբ դո՛ւք՝ բոլորս, ունինք լեռնակուտակ հարցեր, հայկական աշխարհէն ներս թէ դուրս, իսկ փոխանակ զանոնք լուծելու կամ մեղմացնելու մասին մտածուի, թողլքած զանոնք, զիրար կը փետտենք, կ'անճիտենք, կ'անգոսնենք, բայց, յանուն ինչի՞, մէկս կամ մի՛ւսը ճզմելու, ոչնչացնելու:

Ի՞նչ է փնտռուածը. հո՞ղը, հայրենի՞քը, ինքնութի՞ւնը, մշակո՞յթը, լեզո՞ւն, թէ՞ ինքնանպատակ, ինքնաղէմ եւ ինքնակամ զգացումները, որո՞նք ի՞նչ կը ցուցաբերեն, ո՞ր կը տանին եւ ո՞ր կ'առաջնորդեն, առհասարակ, հայրենիքը ու ժողովուրդը:

Բացատրութեան կարօտ չէ՞. ո՞ր մնաց հայ ժողովուրդի գերագոյն արժանապատուութեան վարկանիշը, ո՞ր մնացին մտաւորականութեան ահագանգող սաստերը, ո՞ր փնտռել իմաստուններու յորդորները, ո՞ր դիմել փրկութեան համար:

Մենք չենք ուզեր, ո՛չ իշխանութեան հետ ըլլալ, ոչ ալ դէմը, չեն ուզեր ընդդիմութեան հետ ըլլալ, ոչ ալ դէմը, բայց ԲՈՒՌՆՕՐԷՆ կ'ուզենք ըլլալ մեր հայրենի ՄՐԲԱԳՈՅՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ հետ, հայ ժողովուրդի ՄԷԿՈՒԹԵԱՆ հետ, բայց, ո՛չ երբեք անջատողականութեան, լեզուակռիութեան, երկդիմութեան, միջհակահայկականութեան, որոնցմէ ցմրուր խմած ենք, բայց, չենք կրնար շարունակել նոյն ողբերգականութիւնները:

Այս հանգուցաւոր հարցերու առիթով, չենք կրնար ջիշել նաեւ ուրիշ կոտտացող ցաւի մը մասին, որ սկսած է, աւելի քան մտահոգիչ դառնալ, իր էութեամբ ու բովանդակութեամբ:

Ատիկա Սփիւռքի հանդէպ վերաբերմունքն է, որ, ըստ ամենայնի, պէտք է յուզէ, մտատանջէ եւ ալեկոծէ հայութիւնը, երբ աննկատ ըլլալէ չէ դարձած այլեւս, «խորթ» աչքերով դիտել սփիւռքահայութեան տեղն ու դերը, իսկ երբեմն ալ աւելի, անոր նկատմամբ ըլլալ խիստ անհասկցող, անհանդուրժող եւ... անմտերիմ:

Բոլոր անոնք, որոնք այդպէս կը մտածեն կամ այդ կարկինով կը գծեն Սփիւռքը, չարաչար կը սխալին, որովհետեւ, անոնք չեն հասկցած Սփիւռքի ուժը ու խաղցած դերը, յատկապէս



Հայոց Յեղասպանութենէն ետք, իսկ այսօր, կազմելով հսկայական ԴԴԱՄԱԳԼՈՒԽ (ոչ անպայման նիւթապէս), պատիւ ու վարկ կ'ապահովեն թէ՛ իրենց գոյութեան, թէ՛ իրենց հայրենիքի, թէ՛ աշխարհի երաշխիքներուն:

Հետեւաբար, պէտք չէ միականիօրէն կամ ծուռ աչքերով դիտել սփիւռքահայութեան անչափելի ներդրումները, որոնցմով կառուցուած են գաղութահայ համայնքներ, իրենց բազմատեսակ տարբերակներով եւ իրերայաջորդ սերունդներու դաստիարակութեամբ:

Իսկ անոնք, որոնք չեն գիտեր կամ ծանօթ չեն, այս կամ այն պատճառներով, սփիւռքահայութեան խաղցած հսկայ ու գօտեպնդելի դերակատարութեան, կրնան բանալ պատմութեան պատուհանները ու համոզուիլ ճոխ ու պերճախօս իրականութեան համայնապատկերներուն:

Ժամանակն է այլեւս (առանց ուշանալու), որ ամէն ոք հանդէս գայ իր «հարազատ պատմուճաններով», առանց դեգերելու աջ ու ձախ, որովհետեւ մակընթացութիւնը եւ անգիտակցութիւնը կը սպաննեն ու կ'ոչնչացնեն բոլորը:

Աւելին. եթէ համոզում ու հաւատք կայ հայոց գոյութեան յանկերգ. ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՅԱԽ, ՄՓԻՒՌՔ երրորդութեան, պարտաւորութիւն կայ զայն լիուրի օգտագործել, կառչած մնալով ազգային ակունքներուն, այլապէս, ի՛նչ իմաստ ունի... խուլ ձայներով կրկնել դողդոջուն երրորդութիւն մը:

(Պէրութ)

1/5/2025

«Պրպտելու ու Կշռելու Հետքերով» Շարքէն:

ԱՇԽԱՐՀԻ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Յարութիւն իսկահատեան – Պէրութ

Պատմութեան սկիզբէն իր ձեռքերուն մէջ իշխանութիւն ունեցող ղեկավարութիւնը, իրեն ենթակայ ժողովուրդէն տուրքեր գանձելու եւ ժողովուրդին օգտակար ըլլալու սկզբունքը կ'ենթադրէ, որ իշխանաւորները իսկապէս ժողովուրդը կառավարող անկեղծ ու ճշմարիտ մարդիկ պէտք է ըլլան բարի հովիւներու նման: Բայց եղած են այս երեւոյթը չարաշահող շատ իշխանաւորներ, որոնք իրենց ենթակայ ժողովուրդին հոգ չեն տարած, այլ զայն կեղեքած են պարտադրելով որ բարձր տուրքեր վճարէ: Այսպիսիները ժողովուրդին դէմ բրտութիւն գործադրած են, որոնք խաբեբայ կամ սուտ հովիւներ են: Պատմութեան մէջ անպարկեշտ հովիւները բացայայտօրէն կը յիշուին իբրեւ տխրահոյակ ու վատ յատկութիւններով բռնատէրեր:

Մեր օրերուն յաճախ ականատես կ'ըլլանք բազմաթիւ խաբեբայ հովիւներու՝ թագաւորներու, իշխաններու կամ նախագահներու, որոնք իրենք զիրենք բարի ցոյց կու տան անսահման կեղծաւորութեամբ ու խաբէութեամբ: Այսպիսի սուտ հովիւներու ենթակայ մարդիկ լաւ կը ճանչնան զանոնք, սակայն անոնց տարածած սարսափին տակ չեն կրնար ճշմարտութիւնը յայտնել եւ անոնցմէ տկար անհատականութիւնները, իրենք ալ իրենց կարգին անսահման կեղծաւորութեամբ դրականօրէն ու գովասանքով կ'արտայայտուին անոնց մասին:



Վերջին քանի մը տասնամեակներուն աշխարհակալ վերնախաւային իշխանութիւններ միջամուխ կ'ըլլան զանազան երկիրներու՝ պարտադրելով անոնց իրենց քաղաքացիները ճնշելու բարձր տուրքերով, կեղեքումներով եւ բռնութեամբ: Այս բոլորը կը կատարուին ականջին անոյշ հնչող սուտ լոզունգային բառերով՝ ինչպէս ազատութիւն, ժողովրդավարութիւն, հաւասարութիւն ու բարգաւաճում: Մինչդեռ անոնք կը ձգտին ընկերութեան մէջ ստեղծել արդէն իսկ իրենց յառաջացուցած անհաւասար դասակարգերու միջեւ խոր անդունդներ:

Աշխարհակալ իշխանութիւնները հաստատած են քանի մը միջազգային հիմնարկներ, ինչպէս «Միջազգային Արժույթի Հիմնադրամ»ը (կրճատ՝ ՄԱՀ, IMF-International Monetary Fund) եւ «Համաշխարհային Դրամատուն»ը (World Bank), որպէս ժողովուրդներու ճնշման իրենց

նշանակելի միջոցներ: Ասոնք զանազան երկիրներու կը տրամադրեն իբր բարգաւաճումի յատկացուելիք վարկեր՝ փաստացի պարտքի գումարներ, մէկ փոքր մասը իբրեւ նուէր, իսկ մեծ մասը իբրեւ փոխատուութիւն: Այս գործառնութեան անպայման կ'ընկերակցի կիսաթաքուն խրատ կամ խորհուրդ մը, իբր անուղղակի եւ երբեմն ալ բացայայտ պարտադիր յանձնառութիւն՝ վարկ վերցուցած երկիրներուն իրենց ժողովուրդին վրայ բարձր տուրքեր հաստատելը: Անոնք նաեւ բարձրաձայն աղաղակի նմանող պահանջ-հրաման մըն ալ ունին վարկ վերցնող եկիրներուն, որպէսզի բարենորոգութիւն կատարեն իրենց երկրին մէջ: Հրամանները երկու տեսակ կ'ըլլան, թաքուն եւ բացայայտ: Դրական երեւոյթները բացայայտ, իսկ բացասականները՝ թաքուն կամ կիսաթաքուն: Ու այսպէս զանազան երկիրներ պարտադրաբար կը մտնեն մեծագումար պարտքերու տակ:

Երբ աշխարհակալ ղեկավարը երրորդ աշխարհի երկիրներէն մէկուն իր կամքը պարտադրելու դժուարութիւն կ'ունենայ, այն ատեն ան կը դիմէ այդ երկրին դրամանիշը արժեզրկելու: Այս արժեզրկումը սոսկ կամայական է ու կը կատարուի թուղթի վրայ գրիչի թեթեւ հպումով եւ որեւէ աղերս չունի երկրին տնտեսութեան ելեւէջներուն հետ: Իբրեւ արդիւնք՝ այդ երկրին քաղաքացիները մեծ վնասներու կ'ենթարկուին, իսկ աղքատները՝ անօթութեան: Լիբանանեան թղթուկի վաթսուն անգամ արժեզրկումը չորս տարիներու ընթացքին (2020-2023) օրինակ կը ծառայէ այս տնտեսական անարգ ոճիին:

Աշխարհի վրայ շատ մը երկիրներ արդէն սկսած են իրենց ժողովուրդէն հաւաքել շատ բարձր տուրքեր, ինչպէս Հոլանտա՝ իր եկամուտին 49%, Շուէտ 50%, Պելճիգա 53,7%, Աւստրիա 55%, Դանիա 55,9%, Ճափոն 55,97%, Ֆինլանտա եւ Փղոսկրեայ Ափ 60%, որ աշխարհի բարձրագոյն տուրքն է (Համացանցային Կայքէջ.- <https://www.sevensesworldwide.com/.../countries-with.../>):

Շատ մը երկիրներու մէջ տուրքերէն հաւաքուած դրամը նախ եւ առաջ կը մտնէ ապականած ղեկավարներու գրպանները: Աշխարհակալ իշխանութիւնները (որոնք փաստացիօրէն նոյն կեղքոնէն կը ղեկավարուին՝ հիմնկանօրէն ՄԱՀ-էն, հապաման դիպուկ գուգադիպութիւն իր հետապնդած նպատակին՝ «մահ»), աշխարհը գրաւելու



ձգտումով երկրագունդի զանազան վայրերուն մէջ պատերազմներ կը հրահրեն: Անոնք կը ստեղծեն տնտեսական եւ այլ արհեստական հարցեր, որոնց լուծումը իրենք իսկ կ'առաջարկեն ու կը պարտադրեն որ ան գործադրուի ի նպաստ իրենց սեփական շահերուն: Այս ընթացքին հազարաւոր մարդիկ իրենց կեանքը կը կորսնցնեն ու անոնց բնակավայրերը քարուքանդ կ'ըլլան: Իրենց ձեռքին մէջ իշխանութիւն ունեցող ղեկավարներ մեծ գումարներ կը յատկացնեն զինանիւթերու ձեռքբերման եւ պատրաստութեան, հիմնական նպատակ ունենալով կարելի եղած չափով շատ մարդ սպաննել ու երկրագունդի մարդկութեան թիւը նուազեցնել:

Բացի զինաշինութենէն, աշխարհակալ իշխանութիւնը յառաջացած գիտութեան շնորհիւ մանրէներ եւ փոխանցիկ հիւանդութիւններու համաճարակներ կը տարածէ: Այսպիսով ահագին թիւով մարդոց կեանքերը իլելիէ ետք, անոնք իբրեւ թէ փոխանցիկ հիւանդութիւններու զոհերը նուազեցնելու համար կասկածելի բաղադրութեամբ պատուաստներ հնարել կուտան ու ժողովուրդը կը ստիպեն որ ընդունին պատուաստուիլ, ինչպէս որ եղաւ Քորոնայի ժամանակ, որուն իբր արդիւնք միլիոնաւոր մարդիկ մահացան:

Երկրագունդի մարդկութեան թիւը սահմանափակելու այլ խորամանկ բայց ստոր հնարքով մը, վերին կոչուած իշխանաւորները միասնականութիւնը կը քաջալերեն իբր բնական երեւոյթ մը եւ մարդկային ազատութեանց պատրուակով անոր օրինականութիւնը պարտադրելով սանձարձակ ազատութիւններ կու տան մանաւանդ երիտասարդներուն, այդպիսով զանոնք բարոյականօրէն փճացնելով եւ իրական ընտանիք կազմելէ հեռու պահելով:

Նոյն ծիրին մէջ այդ իշխանաւորները տեղ տեղ արհեստական սովեր կը յառաջացնեն եւ իբր թէ մարդասիրական օգնութիւն ցոյց տալով (որ միշտ անբաւարար կ'ըլլայ սնունդի աղբիւրներու չգոյութեամբ եւ անհասանելիութեամբ), շատ մեծ թիւերով մարդիկ կը սպաննեն կեղծ սովամահութեամբ: Իսկ բնակելի քաղաքներու մօտակայ վայրերու մէջ ստորեկրեայ գաղտնի կորիզային եւ այլ անյայտ քանդիչ պայթումներու միջոցաւ արհեստական երկրաշարժներ կը յառաջացնեն (ինչպէս Հայաստանի հիւսիսը եղած 1988-ի երկրաշարժը), հազարաւորներու կեանքը իլելով: Վերջերս մեծ պետութիւններու կարգ մը իշխանաւորներ բացայայտօրէն սպառնացին հիւլէական ռումբեր եւ քանդիչ զէնքեր ալ գործածել իրենց կամքը պարտադրելու միտումով:

Աշխարհակալ այդ ոյժերը իրենց հակամարդկային քանդիչ բայց արտաքինով հմայիչ ծրագիրներուն գործադրութեան մէջ, վերջին տասնամեակներուն տարածեցին բջիջային հեռախօսները ու անոնց կապեցին մարդոց առօրեայ պէտքերու ծառայութիւնները գրեթէ ամէն ոլորտի մէջ: Ներկայիս եթէ անհատ մը բջիջային սեփական հեռախօս չկրէ բազմաթիւ կենցաղային ծառայութիւններէ կը զրկուի: Աւելին՝ իշխանաւորները այս բջիջային հեռախօսներու միջոցով կը հետեւին իւրաքանչիւր անհատի ու զայն իրենց հսկողութեան տակ կը պահեն՝ շնորհիւ յառաջացած էլեկտրոնային գիտերուն:

Այս գործընթացին մէջ աշխարհակալ ուժը կը ձգտի երկրագունդի վրայ միացեալ ու միատեսակ դրամ ստիպել մարդկութեան, այն ալ թուայնացած՝ ինչպէս Պիթ քոյնը (Bit coin) եւ այլ նման նիւթական տեսակներ, որպէսզի այդպէսով մարդ արարածը աւելի ենթակայ ըլլայ մեծագումար բայց իրեն համար անտես ու ընդհանրապէս անհասանելի նիւթականին: Վերջերս ալ այդ իշխանաւոր ուժերուն կամ ոչ փաստացի բայց իրականութեան մէջ միացեալ ուժին միջոցաւ երեւան եկաւ «Արհեստական բանականութիւն» (Artificial Intelligence) կոչուած՝ իր էութեամբ հակամարդկային հնարքը, մարդոց օգտակար ըլլալու պատրուակով անոնց ենթագիտակիցին մէջ ինքնաբերաբար զարգացնելով այն միտքը, թէ ո՞վ դէմ է բանականութեան՝ ըլլայ ան բնական կամ արհեստական, բնականօրէն եզրակացնել տալով՝ ուրեմն եղածը օգտակար երեւոյթ մըն է: Սակայն ցարդ ան



գործածուեցաւ հիմնականօրէն պատերազմներու չարիքի մէջ եւ անոր ապագան մշուշոտ ու անյայտ է, մարդկութեան համար լաւ բաներ չիտեսացող:

Տուրքերու ծիրին մէջ, քանի մը օրեր առաջ ԱՄՆ-ի նախագահ Տոնըլտ Թրամփի կամայական ու դիպուածային թուող արագ կարգադրութեամբ ներմուծող ապրանքներու վրայ մաքսային տուրքերը ահռելիօրէն բարձրացուց, ցնցելով համաշխարհային տնտեսական շուկաները սկսելով Գանատայէն եւ Եւրոպայէն մինչեւ Կեդրոնական Ասիա ու Ճափոն: Այս քայլը խիստ ժխտական տպաւորութիւն ձգած է աշխարհի մէջ: Տնտեսագէտներու մեծ մասը զայն կը նկատէ իբրեւ աշխարհի ընդհանուր տնտեսութեան վնասակար քայլ, որուն դրդապատճառները բնաւ աղերս չունին տնտեսական առողջ հիմքերու հետ: Արդե՞օ՞ք այս քայլին ետին յետին նպատակ մը չկայ...

Դարեր առաջ, վերոյիշեալ վատ արարքներու վերաբերեալ Ճշմարտութեան խօսքը Աստուծոյ կողմէ հասած է մարդու ականջներուն զանազան մարգարէներու բերնով, որոնցմէ է Եզեկիէլ, որուն գիրքին 34-րդ գլուխին մէջ կը կարդանք հետեւեալը.-

«Մարդու որդի», Իսրայէլի հովիւներուն դէմ գրուած. Տէրը կ'ըսէ հովիւներուն. «Վայ Իսրայէլի հովիւներուն, որոնք իրենք զիրենք կը կերակրեն: Հովիւները պէտք չէ՞ որ հօտը կերակրեն»:

Հնադարեան Մերձաւոր Արեւելքի մէջ «հովիւ» բառը կ'ակնարկէ թագաւորի կամ իշխանի: Օրինակի համար Դաւիթ թագաւոր հովիւ մըն էր հրեայ ժողովուրդին համար, իսկ մարգարէները՝ հոգեւոր հովիւներ:

Եզեկիէլ Մարգարէի գիրքին վերոյիշեալ նոյն գլուխ 34-ին մէջ կը կարդանք նաեւ.-

«Վայ ձեզի ով սուտ հովիւներ, որ դուք պարարտ ոչխարները կը մորթէք եւ կ'ուտէք ու անոնց բուրդով հագուստներ կը հագուիք, սակայն հօտը չէք կերակրեր, տկարը չէք զօրացներ, ոչ ալ հիւանդը կը բուժէք, նաեւ կոտորուածքը չէք կապեր եւ կորսուածը ետ չէք բերեր: Սակայն ոյժով եւ բռնութեամբ զանոնք կը կառավարէք»:

Վերոյիշեալ հակամարդկային միջցառումները ցոյց կու տան, թէ աշխարհակալներ նպատակադրած են երկրագունդն ու անոր բնակչութիւնը ենթարկել մէկ իշխանութեան, որ վերոնշեալ տուեալներով միայն սատանայական է եւ Աստուծոյ հակառակ, հետեւաբար ի վերջոյ կործանման դատապարտուած:

Աղբիւր՝ Պայքար

ՎԱՐՇԱԻԱՅԷՆ ՎԱՏԻԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՊԻԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՆԱՑՈՅՑԸ



✉ Ա.Ր.Ա ՍԱՅԵՂ

ԱՊՐԻԼ 27, 2025

Փրոֆ. Արա Սայեղ

Վարչաւայի սլաքը

Վարչաւայի սլաքը կը յուշէ եւ կ'ընդգծէ 24 մայիս 2024-ին, Լեհաստանի մայրաքաղաք Վարչաւայի մէջ «Քրիստոնէական ժառանգութիւնը Ազրպէյճանի բազմամշակութային



հանդիպումներուն, հաղորդակցութիւններուն, երկխօսութիւններուն գործնական ծրագրերով [1],

1- Անյապաղ բարձրաձայնէն մոլորեցնող նման արարքներ, դատապարտեն կաթոլիկ հոգեւորականներու վատատող նման արարքներու ներգրաւումը,

2- Համակարգուած աշխատանքով եւ վճռակամութեամբ հակադարձեն ազերիական կեղծ հրապարակումներուն, սադրիչ պնդումներուն,

3- Յանձնառութեամբ պաշտպանեն հայապատկան հոգեւոր նիւթեղէն դարաւոր ժառանգութիւնը,

4- Աշխատանքային յայտագիրներու վրայ մնայուն հրատապ օրակարգ ունենան արցախահայութեան քրիստոնէական կրօնամշակութային խեղաթիւրումներու առաջնակարգութիւնը,

5- Մանաւանդ հայ հոգեւոր ինքնութեան՝ սրբազան վայրերու, մշակութային բազմադարեայ պատմութեան, հոգեւոր ժառանգութեան արդարացի պաշտպանութիւնը, կանխելու համար Նախիջեւանի եւ Արցախի մէջ կատարուած նիւթեղէն ժառանգութեան նկատմամբ բարբարոսութիւններու կրկնութիւնը:

Նպատակ չունինք արժեւորելու կամ քննարկելու, թէ որքանով վերոյիշեալ առաջադրանքները իրագործուեցան, կամ ընդհանրապէս ինչպիսի՞ համակարգուած գործնական ծրագրերով մենք կուրծք տուինք կրօնամշակութային եւ պատմական ժխտողականութեան: Սակայն փաստ է, որ ճիշդ պահուն հակազդելու մեր աշխուժութիւնը թոյլ է, նախագծուած ու բաղձալի ծրագրերով չիրականանար:

Կարելի է յիշել նաեւ, որ առաջին անգամ չէ, Վատիկանի ծառայութիւնը Պաքուի քարոզչամեքենային. 2024 թուականի կիսուն Վատիկանի հովանիին տակ «L'Osservatore Romano» պաշտօնաթերթը յօդուած մը հրատարակած էր՝ «A Khudavang, Ganjasar e Khatiravang Monasteri tra le nuvole» («Խուդավանքը, Խաթրավանքը եւ Գանձասարի վանքը՝ ամպերու մէջ») վերնագրով, ուր հայկական ժառանգութեան կարեւորագոյն յուշարձաններէն Դադիվանքը, Գանձասարը եւ Խաթրավանքը կը ներկայացուէին իբրեւ աղուանական ժառանգութիւն: Յօդուածին հեղինակ՝ Ռոսելլա Ֆապիանի գրութեան մէջ կը բացայայտէր Ազերպայճան կատարած իր այցելութիւններուն մասին, նշելով թէ գացած է «Garabagh», ծանօթացած՝ «աղուանական ժառանգութեան» վեհաշուք վանքերուն:

Վատիկանի սլաքը

Ապրիլ 2025-ին, դարձեալ ազերիական քարոզչամեքենային նախաձեռնութեամբ, քրիստոնէութեան սիրտը համարուող Վատիկանի մէջ, Քրիստոսի Ս. Յարութեան տօնի նախօրեակին, մանաւանդ ցեղասպանուած հայ ուխտապահ ժողովուրդին համար, «նորէն ապրելու կամք»-ի Ապրիլ ամիսը, լեցուն խորհուրդով եւ յատկանշական կսկիծով, յորդորիչ յորդ թելադրողականութեամբ, եւ տակաւին մեր բոլորի յիշողութեան մէջ թարմ է Արցախը, իր հոգեւոր պատմական ժառանգութեամբ, երբ առանց հրաժեշտի, առանց խունկի ու



մումի դադրեցաւ ապրելէ: Հակառակորդը իրավիճակին քաջածանօթ գիտակցութեամբ կատարեց կողմնացոյցի նախատեսուած յաջորդ քայլը: Հռոմի հեղինակաւոր ու նուիրական Գրիգորեան համալսարանին մէջ Սուրբ Աթոռի՝ Ազերպայճանի դեսպանութեան եւ ազերպայճանական որոշ կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ Սպրիլ ամսուն 10 եւ 11 թուականին տեղի ունեցաւ «Քրիստոնէութիւնը Ազերպայճանի մէջ. պատմութիւն եւ արդիականութիւն» վիճայարոյց վերտառութեամբ գիտաժողովը, տարբեր երկիրներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Գիտաժողովի յայտագրին մէջ կը կարդանք, թէ 2001 թուականէն սկսեալ 2025 թուականի կազմակերպուած նշեալ գիտաժողովը 12-րդն է, որուն մէջ իբրեւ լոզունք կը յիշուի նաեւ՝ «Վաղ քրիստոնէութենէն սկսեալ Կովկասեան Ալպանիայի համայնքները, ուր այդ համայնքներ այսօր կ'ապրին Ազրպէյճանի՝ աշխարհիկ եւ բազմաձևակութային պետութեան մէջ: Ազրպէյճանը կ'երաշխաւորէ Քրիստոնէական ժառանգութեան պահպանումն ու զարգացումը՝ միաժամանակ նպաստելով միջկրօնական ներդաշնակութեան»:



Վատիկանի այս գիտաժողովին որպէս անդրադարձ, որոշ ժամանակէ մը հանդարտ ու անաղմուկ մնացող մեր հովուապետական աթոռներու հոգեւոր իշխանաւորները լռութիւնը խզելով, կայծակնային արագութեամբ իրենց լրջախոհ կոչերով հակադարձեցին, սթափած յայտարարութիւններով անբաստանեցին, հաղորդագրութիւններով

պարսաւեցին, բուն ձեւով դատապարտեցին Վատիկանի կողմէ նման արարք մը: Իսկ Վատիկանի ենթակայ հայ հոգեւոր իշխանաւորներ նախընտրեցին աւելի զուսպ մնալ կատարուածին հանդէպ: **Հոս կարելի է հարց տալ** ինչո՞ւ այդ բոլոր հոգեւոր իշխանաւորները, հայ աշխարհիկ միաւորները անտարբեր ու անաղմուկ մնացին, յախտուն հակազդեցութիւններ չկատարեցին **մայիս 2024** թուի Վարշաւայի ազերիական ցուցահանդէսի պարագային:

Գաղտնի կազմակերպուած նման գիտաժողով մը քարոզարշաւի անշուք սեմինար մը կարելի է համարել, իր անհեթեթ նօսրութեամբ, իր տարակուսելի մասնակիցներով եւ իրմէ բխող կասկածելի արդիւնքներով:

Բայց եւ այնպէս Պաքուի բոնապետական վարչակազմը կարողութիւնը ունեցաւ հայ ազգային տարբեր հարթակներ փոթորկել, հայկական մամուլի մէջ խայտառակող առատ մելան հոսեցնել, ժխտական անդրադարձներու տարափ մը տեղացնել, ուր բոլորն ալ միաւորուած խոր ցաւ, ընդվզում ու ափսոսանք յայտնեցին մեղսակից Վատիկանին այս անպատասխանատու վարքին համար:



Մեղադրանքներ, կոչեր, յորդորներ ուղղուեցան քրիստոնէութիւնը ծախու հանող Վատիկանին, որպէսզի պահպանէ պատմական հայկական հոգեւոր ժառանգութեան ճշմարտութեան ամբողջականութիւնը եւ յատկապէս մերժէ ու հրաժարի ամէն տեսակի յօրինուած ու կեղծ կրօնական խաբէբայութիւններու մեղսակից ըլլալէ, հեռու մնայ պատմութիւնը վերաշարադրող նման նախաձեռնութիւններէ եւ հանրային պարզաբանում եւ ներողութիւն պահանջեցին Վատիկանէն: Բացատրութիւններ պարտադրեցին հայ դասախօսներուն միտումնաւոր բացակայութեան համար, զայն նկատելով միակողմանի եւ գիտական անարդարութիւն մը պատմական բացայայտ ճշմարտութեան դէմ:

Միջարանուանական բազմազան գորակցական այցելութիւնները աշխուժացան նման նախաձեռնութիւնները կանխելու, դիմադրելու եւ չարագործ այս արարքին դէմ կանգնելու նպատակով: **Իրականութեան մէջ այդ բոլորը խօսքի փոխարէն շատոնց ծրագրուած եւ գործնական նախագիծերով հակազդելու պատրաստ պետք է ըլլային**, երբ թշնամին հանդարտ ձեւով վաղուց ծրագրած եւ Վատիկանի նման միջազգային հարթակի մը մէջ իրականացուցած էր:

Ինքնադատութեան կողմնացոյցը

Բոլոր նախատեսուած պոռթկումները շատ ողջունելի, արդար ու գնահատելի են: Քաջ գիտակցելով նաեւ, որ Վարչաւայի եւ Վատիկանի ծրագրուած քարոզչական յայտագիրներու քաղաքական ուղղուածութեան թիրախը կանխատեսելի եւ յստակ էր, երկու իրադարձութիւնները մէկն ու միւսը զիրար կը լրացնեն, այս մէկը առաջին կամ վերջինը պիտի չըլլայ: Առաջին դասը որ կարելի է քաղել մեր հակառակորդներէն, մեր տկարութիւններուն անդրադարձն է, մեր խոցելի թերիներուն ինքնաքննարկումն է: **Հարցը միայն Վատիկանի այսպէս կոչուած գիտաժողովի մը իրադարձութիւնը չէ, իսկական արժեւորումը այն է, թէ ի՞նչ ճիշդ ծրագրեր կրնայինք իրագործել ու չրհինք, ո՞ր են մեր թերացումները, բացթողումները եւ կիսատ-պոստ գործիքակազմերը, հաւաքական թերիները, եւ մանաւանդ ինչպէ՞ս պետք է դիմագրաւել յառաջիկայի նման ծրագրեր:** Ինքնաքննութեան փորձը չընենք զոհի հոգեբանութեամբ, այլ՝ ճշմարտութեան արդարացի ինքնապաշտպանութեամբ, յառաջ երթալու վճռակամութեամբ եւ յաղթայարելու տրամադրութեամբ: **Հոս կարելի է մի քանի նկատողութիւններ ցանկագրել, պարզապէս օրինակներ յիշելու համար.-**

- Վատիկանը իբրեւ տիեզերական եկեղեցի բազմազգ կղերականներու վարչամեքենայով բանող կառոյց իր գործելաոճին մէջ ազգայինը աննշան է եւ անհրապոյր անհրաժեշտութիւն: Ուստի անխորհուրդ ակնկալութիւն է այդ կառոյցի բոլոր հոգեւորականներէն ակնկալել, որ հայասերներ ըլլան կամ հայանպաստ ծրագրերուն համակիրներ: Նոյն ժամանակ վերահասու գիտակցութեամբ, որ Վատիկանի այգիներուն մէջ 5 Ապրիլ 2018-ին, տեղի ունեցաւ հայ փիլիսոփայ, աստուածաբան, բանաստեղծ եւ տիեզերական եկեղեցւոյ վարդապետ Գրիգոր Նարեկացիի երկու մեթր հասակով արձանին բացումը: Վատիկանի մէջ 28 Մարտ 2025-ին, վաւերացուեցաւ 1915 թուի հայոց ցեղասպանութեան նահատակ Երանելի Իգնատիոս Շուքրալահ Մալոյեանի սրբադասման ու երանացման գործընթացը:
- **Հարց տանք** մեր հոգեւոր թէ աշխարհիկ բոլոր միաւորներուն՝ նուազագոյն վերջին հինգ տարիներուն ինչպիսի՞ ստուեր եւ պերճաշուք թիւով քարոզչական ծրագրեր եւ աչքագրաւ վայրերու մէջ բռնագրաւուած Արցախի վտանգուած մշակութային ժառանգութեան ցուցադրական արշաւներ նախաձեռնեցինք, շրջուն ցուցահանդէսներ իրականացուցինք,



երկխօսութիւններ կազմակերպեցինք: Նման բազմապիսի քարոզչական բազմազան արշաւներ պէտք էր կազմակերպած ըլլայինք Եւրոպայի զանազան երկիրներու, մայրաքաղաքներու, քաղաքներու, եկեղեցիներու, կրօնամշակութային տարբեր հաստատութիւններու մէջ, հանրայնացնելու հայ հոգեւոր ժառանգութեան յատկաբանութիւնը, արդար ու գիտական լուսաբանութիւններով պարզելու հայ հոգեւոր ժառանգութեան եզականութիւնը, Ազերպայճանի իշխանութիւններու կողմէ ծրագրուած հայկական պատմական փաստերը շահարկելու եւ հայ ժառանգութեան ինքնութեան կեղծումին դէմ:

- Օրինակելի է Արեւելքի քրիստոնէաներու առանցքով իր գործունէութիւնը ծաւալող Ֆրանսայի «L'Œuvre d'Orient» կազմակերպութիւնը, որուն գործնական արձագանգը չուշացաւ Վարշաւայի մէջ, հակադարձելով Ազերիական մայիսեան ցուցահանդէսին, այս անգամ 2024 թուականի հոկտեմբեր 4-18-ը, Լեհահայերու մշակոյթի եւ ժառանգութեան հիմնադրամին հետ՝ «Լեռնային Ղարաբաղ. վտանգուած հայկական ժառանգութիւն մը» խորագրով բացօթեայ ցուցահանդէսը կազմակերպուեցաւ Վարշաւայի մէջ:
- Շրջուն բնոյթով նման քարոզչական ցուցահանդէսներ, յաճախակի շրջագայութեամբ պէտք է իրականանան Եւրոպայի այլ երկիրներուն մէջ: Անշուշտ, հոս բարձր կարելի է գնահատել monumentwatch.org կայքի տարած խղճամիտ, գիտապատմական, հարուստ տեղեկութիւններով եւ լուսանկարներով շտեմարանի հարթակը:
- Միջազգային հարթակներու վրայ աւելի բարձրացնելու անյապաղ կարիքը ունինք Ազերպայճանի կողմէ թիրախ դարձած մշակութային ժառանգութեան **աւերուածութիւններուն թիւերու մասին**: «Caucasus Heritage Watch»ը (CHW) 24 Յունիս 2024 թուին, հրապարակած բռնագրաւուած Արցախի վտանգուած մշակութային ժառանգութեան դիտարկման զեկոյցները կը փաստագրեն, որ 2023 էն ի վեր 75 տոկոսով աւելցած է Արցախի մշակութային ժառանգութեան լայնածաւալ ոչնչացումը, արբանեակային պատկերներու բացայայտումով, որոնք նոյն թափով կը շարունակուին:
- Պէտք է բարձրաձայն հակադարձել «*Ազրպէյճանը իբրեւ երաշխաւորը Քրիստոնէական ժառանգութեան պահպանումին ու զարգացումին՝ միաժամանակ նպաստողը միջկրօնական ներդաշնակութեան*» անհեթեթ լոզունքին, հարց տալով, թէ ինչպէ՞ս կարելի է բացատրել, նոյնինքն ազերիական ծրագիրներով, ձեռքերով իրագործուած բարբարոսական ոչնչացումը, ինչո՞ւ տեղի կ'ունենայ այդ «աղուանական» եկեղեցիներուն, կրօնապատմական կոթողներուն, գերեզմաններուն ու գիւղերուն քանդումը, ինչո՞ւ այդ բոլորը ամբողջական քանդումին կ'ենթարկուին:
- Եւրոպայի եկեղեցիներուն եւ հոգեւորականներու, հանրութեան լայնածաւալ ձեռով տարածա՞ծ ենք «Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի» կոչերը՝ յարգելու Արցախի հայ քրիստոնէական սրբազան վայրերը եւ մշակութային ժառանգութիւնը:
- Արբանեակային փաստագրումներով բացայայտա՞ծ ենք 2020 թուի պատերազմէն ետք, Ազերպայճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ, երբ օրէ օր կը կործանին հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան կոթողներ, հոգեւոր կառոյցներ՝ եկեղեցիներ, յուշարձաններ, խաչքարեր, գերեզմանատուներ, արձաններ, կը ջնջուին հայկական արձանագրութիւնները հայկական եկեղեցիներու պատերէն եւ տապանաքարերէն, իսկ որոշ պարագաներուն այդ եկեղեցիները մզկիթներու կը վերածուին:
- Եւրոպայի տարածքին Պապական Աստուածաբանական բարձրագոյն ուսումնարաններ եւ կրօնական հաստատութիւններ այցելա՞ծ ենք, մեր ցուցահանդէսներով, գիտական քարոզարշաւներով եւ սեմինարներով ներկայացուցած ու բացատրա՞ծ ենք հայ եկեղեցւոյ կառոյցը, ինքնութիւնն ու մեր հոգեւոր ժառանգութեան արդարացիութիւնը, գիտական հիմքերով բացայայտա՞ծ ենք պատմական ճշմարտութիւնը:

- Արդար ըլլալու համար քրիստոնէայ արեւմուտքը, Աստուածաբանական ուսումնարանները ընդհանրապէս անտեղեակ են արեւելքի կրօնական հակամարտութիւններէն, քիչ ծանօթ են հայկական պատմական ժառանգութեան մանրամասնութիւններուն, հայ կրօնական մշակոյթի առանձնայատկութիւններու բովանդակութեան:

Ազերպայճանի իշխանութիւններու հայկական պատմական փաստերը շահարկելու, հայ ժառանգութեան ինքնութեան կեղծումը, բռնաիրացումը եւ սեփականացնելու քաղաքականութիւնը, ծրագրուած չարաշահումներու ուղեծիրը վաղեմի են բոլորիս, ծանօթ են նաեւ նուաստ միտումները՝ Վարշաւա, Վատիկան կամ այլուր հակահայ քարոզչութեան հերթական արգաւանդ շուկաներ դարձնելու նախագիծերը:

Կը մնայ միայն յիշել մեր խոկումի եւ ինքնադատութեան կողմնացոյցը, եւ մանաւանդ յիշեցնել **ԽՕՍՔԵՐԵՆՆ ԱՆԴԻՆ հարկաւոր է համազգային կամքով ԳՈՐՇԱԿԱՆ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԱԾ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼՇՈՒԻՒԼ:**

ՏԵՍԱԿԷՏ

ՅԱԻԵՐԺԻ ԱՔՍՈՐԵԱԼ ՀԱՅՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ Ի ՊԷՏՍ ԲԱՆԻՄԱՑՆԵՐՈՒ



Հայ ազգի լինելութիւնը խարխափումի եւ զարտուղութիւններու խրճիկ է, գումարուած՝ պարտութեան եւ կոտորածներու բուրգին վրայ: Գոյապահպանական հրամայական խնդիր ունինք: Ամէն ոք կը կարծէ իրաւունք ունենալ, կը յաւակնի գտնուիլ ճիշդ ուղիի վրայ: Թշնամի կը փնտռենք մեր մէջ, երբ իրատեսութիւնը այլ բան կ'ըսէ: Դադրած ենք ինքնաքննադատութեամբ խոհեմութեան առաքինութիւն ունենալէ:

Եթէ բազմաթիւ են ենթադրական ճիշդ ուղիները, ո՞վ եւ ինչպէ՞ս ընտրութիւն պիտի կատարէ: Ո՞վ որո՞ւ պիտի հետեւի, ինչպէ՞ս համագործակցութիւն պիտի ըլլայ: Ո՞վ կրնայ յաւակնիլ որ իր ընտրած ուղին է կառուցողական ճիշդը: Այսպէ՞ս պիտի շարունակենք տատանիլ, մինչեւ կորուստը անկախութեան եւ հայրենիքի այն քիչին՝ որ մնացած է: Դժբախտաբար մեր սերունդին եւ մեր ժողովուրդին, իրարու դէմ պայքարիլ առաջնահերթ համարած ենք, ծառայելու համար Եսի եւ փառասիրութիւններու, միշտ բարբաջելով ճիշդի, իմաստութեան եւ գիտութեան անգոյ փաստարկներով: Աթոռապաշտութիւնը, թաղէն մինչեւ զագաթ, ախտ է, որուն վրայ կը գումարուին ընտանեպաշտութիւնը, այլեւս աւանդութիւն դարձած ԽՕԲ-ն, հայր, որդի, կին, հարս, փեսայ, խնամի, դրացի, դասընկեր... Շարքը անծայր է, անցեալէն մինչեւ ներկայի Հայաստանի հանրապետութիւն եւ գերաճող սփիւռք(ներ), ամէնուրեք «հայաստան-հայութիւն» կը խաղցուի, բազմապատկուող տիկնիկային բեմերու վրայ:



Պետք չէ արհամարհել քսակի ընձեռած իրաւունքը, տեղայնութիւնները, երեւանցիի գերադասութիւնը գիւմրեցիին, հայաստանցիին՝ սփիւոքահայուն եւ փոխադարձաբար, փարիզեցիին՝ մարսիլիացիին... եւ շարունակել մինչեւ Մոսկուա, Վլատիվոսթոք եւ Փըրթո.. Այդպէս եղած են հայ նախարարական տուները, թագ ցանկալով, որ նախընթացն է մեր հիննոր ջոջականութեան: Աղմկարարութիւնը ժողովրդավարութեան հետ շփոթած ենք, մեր փոքր ածուին մէջ այժոռ մը ունենալու համար արժէքներ ոտնակոխած ենք: Քանի որ, ինչպէս ըսած է բանաստեղծը, «սպայ է ամէն մի հայ»: Նորահարուստ մը ըսաւ, որ եթէ զինք միութեան «նախագահ» ընեն, միութեան բոլոր ծախսերը յանձն կ' առնէ: Աթոռի ցանկութիւն... Կարելոր չեն կարողութիւն եւ ընելիք... Երեւելիապաշտներ, դեկավարի դիրքին արժանի ըլլալու ստորոգելի կը համարեն ուրիշի գրած հայերէն կամ օտար լեզուով խօսքով բեմ բարձրանալ, ճառ խօսիլ, բանաստեղծի մասին դասախօսել, եւ ատենապետի կամ նախագահի բարենիշ ունենալ: Թաղային հեղինակութիւն մը ինքզինք վեր կը դասէ պատմագետ ակադեմիկոսէն եւ վճիռներ կը կայացնէ... Եւ Համայնք, Ազգ, Պետութիւն վճարած են եւ կը վճարեն աւերակող սնափառութիւններու գինը:

Ինչո՞ւ կը զարմանանք, երբ «ռուսական պուպրիկ»-ներու մանող շարքերով, միշտ հին եւ միշտ նոր փակուղիներու առջեւ շարքով կը կանգնինք, տււաբար կը նահանջենք, եւ կը մխիթարուինք շռայլուող դատարկաբանութիւններով:

Կ'ըսենք եւ կ'երգենք **հայրենիք**, սոսկ զգացական դարձած յղացք մը, քանի որ անոր ետին աշխարհագրական, քաղաքական, իրաւական նոյն ըմբռումները չունինք: Երբ կ'ըսենք **Հայրենիք** եւ **Հայաստան**, քարտէսներու վրայ զանոնք ինչպէ՞ս եւ ո՞ւր կը տեղադրենք, ո՞ր սահմաններով: Հիմա **Հայրենիք** եւ **Հայաստան** յղացքներուն վրայ գումարուած է **Պետութիւնը**, որ կոչուած պէտք է ըլլայ հայրենիքի եւ **ազգի տէր** եւ **առաջնորդ** ըլլալու:

Ո՞վ այսօր կրնայ գծել «հայրենիք»-ի սահմանները, բնութագրել **հայ ազգը** եւ ցոյց տալ անոր հասցէն, բայց այդ բոլորի մասին կը խօսինք եւ կը վիճինք: Առանց Հայրենիք, Հայաստան եւ Պետութիւն յղացքներու **ճիշդ ըմբռումին եւ իւրացման**, **ինչպէ՞ս կը հունաւորուի հայրենասիրական հայրենասիրութիւնը**, այսինքն կ'ունենանք հայութեան, որպէս ազգի, միասնութիւն եւ միասնական քաղաքականութիւն: Ի հարկէ այս ընելու ատակ դեկավարութիւնը կը ծնի ժողովուրդէ մը, որ կ'ունենայ **հասարակաց ազգային հոգեբարոյական եւ կենսատարածքի գիտակցութիւն եւ յանձնառու տիրութեան ենթահող**:

Պատմութեան բրտութեան հետեւանքը եղած է այն, որ ինչ որ հասարակաց պէտք է ըլլար եւ միացներ, ներքին եւ արտաքին թշնամանքներու պատճառաւ չէ իրականացած, կոտորակուած է մնացած է, երգի եւ երագի եթերին մէջ, ուր շարունակած են արշաւել անսանձ եսեր: Եւ ի հարկէ պարտուած ենք :

Ազգ մը որ կորսնցուցած կ'ըլլայ իր իրաւունքին տէր եւ նախահայրերու շարունակութիւն ըլլալու գիտակցութիւնը, յիշողութեան կորուստէ տառապող հիւանդ է, որ համամարդկային ընկերութեան մէջ իր տեղը չի գիտեր, չի գտներ, կը դատապարտուի ըլլալու իր քիթէն բռնուած քշուող անինքնութիւն բազմութիւն:

Անհայրենիք հաւաքականութիւնները ազգ չեն: Անոնց մասին կարելի է այլազան հոգեշահ խօսքեր ըսել, ի հարկին զանոնք ընդունիլ որպէս ինքնուրոյն հաւաքականութիւն, համայնք, ընդունուած եզրով ethnic groups, յոգնակի, որոնք ժամանակ մըն ալ կը տւեն հոգեբարոյական, յուշերու եւ խոհանոցային վանդակներու մէջ, կը հանդուրժուին, մինչեւ որ աւարտի իր այլացման ընթացքը, «mutation»-ը, կացութիւնը, նորահայերէն բառով



բնորոշուող **մուտացիան**: Խօսքի խանիճադանճէն դուրս գալու ճիգ ընելով, մենք մեզի եւ իրարու անհաճոյակատար հարցեր պէտք է տանք եւ առանց ոտքի քնացնող ճապկումներու փորձենք պատասխանել.

ա. Հայկական Պետութիւնը, որ կայ, ինքզինք կը համարէ՞ **համայն հայ ազգի պետութիւն, թէ միայն հանրապետութեան տարածքին ապրող ժողովուրդի պետութիւն**:

բ. Յարդ որպէս հայութիւն ներկայացող հայրենահանուածներու եւ անոնց յետնորդներով կազմուած **հայկական կոչուող Սփիւռքը** ի՞նչ է Հանրապետութեան համար, ան սոսկ օտարերկացիներով կազմուած ծագումով հայերու բազմութի՞ւն է, թէ մաս կը կազմէ ազգի մարմնին, այսինքն այդ «օտարերկրացի»-ները հիւրի եւ բարեսէրի կարգավիճակով վ պիտի ընդունուին եւ այդպէ՞ս պիտի մնան, եւ շարունակեն տեւել կամ չտեւել պատմութեան չարիքի հետեւանք իրենց անելանելի կացութեան մէջ, ժամանակ մըն ալ դէռ խաղալով այս կամ այն անուններով երկիրներու «հայութիւն» ըլլալու յիշատակի պիտակով, ընկերային թատրոն, քաջ գիտնալով թէ ո՞ր պիտի ըլլայ հասնումի կայանը:

գ. Նոյն այդ հայրենահանուածներու Սփիւռքին համար, ի՞նչ է ներկայ պետութիւնը իր տարածքով. բռնագրաւուած հայրենիքի շարունակութի՞ւն, թէ Կովկասի շրջան մը, ուր կը գտնուին եւ կը բնակին հայեր, որոնց հետ ծագումի առասպելի կապեր եղած են եւ կան:

Յաճախ կը մտածեմ այն մասին, որ բազմադարեան մեր պատմութեան ընթացքին **միութեան** եւ մէկութեան **առանցք եղած են Հայ Եկեղեցին եւ Հայ լեզուն**: Հայ քաղաքական միտքը, մտաւորականութիւնը ընդհանրապէս, անկեղծութեամբ եւ իրատեսութեամբ պէտք է հարց տան, թէ անոնք այսօր ունի՞ն այդ առանցքային դերը, ինչո՞ւ չունին այդ դերը: Խօսքը կը վերաբերի Եկեղեցիին եւ ո՛չ եկեղեցական անհատներուն: Հայոց պատմութեան ընթացքին, մանաւանդ մեր ժողովուրդի դիմագրաւած ճակատագրական պահերուն, Հայ Եկեղեցին գտնուած է միացնող առաջնորդի դիրքի վրայ: Այսօր ի՞նչ պէտք է ընել, որպէսզի ան վերագտնէ ազգի **հոգեբարոյական առաջնորդի իր դերը**: Այդ ընելով ի՞նչ կրնանք շահիլ, եւ չընելով ի՞նչ կը կորսնցնենք: Ամէն անգամ որ կը լսեմ **միութեան եւ միասնութեան** հոգեշահ խօսքեր, բարձրաձայն կը կրկնեմ միտքի եւ հոգիի լայն հորիզոն ունեցած մեծ բանաստեղծի «Պատգամ»-ը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Այսօր ո՞վ կրնայ ըսել **թէ ազգի ո՞ր մէկ եւ նոյն նպատակին ծառայելու կոչուած պիտի ըլլայ այդ հաւաքական ուժը, երբ չկայ ազգի մէկ եւ նոյն նպատակը**, ի՞նչ բանի պիտի ծառայէ բանաստեղծի երազած հաւաքական ուժը: Պարզ չէ՞, որ ան գեղեցիկ խօսք եւ երազ է: Ո՞վ, որո՞նք, ո՞ր եւ ինչպէ՞ս պիտի սահմանեն **ազգի մէկ եւ նոյն նպատակը**: Եթէ դադրեցնենք հաճոյախօսական տիրացուական ճամարտակութիւնները, եւ առաջնորդուինք «միայն **ազգը իրաւունք ունի**» վարքագիծով, գործենք ո՛չ թէ ԵՍԵրու յաւելեալ իրաւունքի համար, այլ՝ ազգի հանդէպ յաւելեալ պարտքի անանձնական ըմբռնումով, թերեւս ճամբու ծայրին կը գտնենք **կենսական հաւաքական ուժը**: Այսօր Հայկական Պետութիւնը, թերեւս ո՛չ միայն իր մեղքով, ի վիճակի չէ ստեղծելու ՆՈՅՆ ՆՊԱՏԱԿԻՆ ՇՈՒՐՉ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՌԻԺ: Այս ըմբռնումով եւ պատմական փաստով հիմնաւոր հոգեբարոյական ուժ է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ, որ իր հեղինակութեամբ համախմբած է անցեալին, կրնայ համախմբել նաեւ այսօր, վասն ազգի վերականգնման, միշտ խորհելով, որ վաղը միշտ ուշ է, եւ պատմութիւնը չի ներեր, այդ վճիռին անդրադարձողներ ալ մնացած չեն ըլլար:



Գումարուած են ցեղասպանութիւն, հայրեհանում, հարենալքում-արտագաղթ, Արցախի կորուստ, ինքնութեան պատուանդան լեզուի կորուստ-օտարում: Ո՞ւր պիտի փնտռենք նախահայրերու կտակ Հայաստանը եւ անոր տէր Հայութիւն-Ազգը:

Քանի որ «ամէն մի հայ սպայ է եւ Թագի թեկնածու», հայ նախարարներու պահանջով հայկական թագաւորութիւնը վերացաւ: Այսօր ալ, բանաստեղծի բառով, երբ «սպայ է ամէն մի հայ», պարտութիւն եւ նահանջ պիտի ըլլան մեր առօրեան եւ վաղը: Եւ ի հարկէ պիտի դատարկուին դիրքերը: Յիշե՛լ Արտաւազդի «Ես աւերակաց ինչպէ՞ս թագաւորեմ»-ը ... Աւերակնե՛րը. կորուսեալ Վանը, Մուշը, Մասունը, Կարսը, Անի, Արցախը, երգ դարձած Արարատը, հայաբարբառ ըլլալէ դադարող եւ այլացող սերունդները եւ զեղծուած-զեղծուող ինքնութեան վահան եղած Մեսրոպի ժառանգութիւն գիրը եւ լեզուն...

ԵՄերը ճգնող եւ աթոռ- աթոռակ ջարդող, ո՞ր Վահագնը կամ Դաւիթը պիտի առաջնորդեն հայութիւնը, պիտի ըսեն, որ հաւաքաբար պատապասխանատու ենք մեր պառակտում-պարտութեան, որ այդ վերջնական ճակատագիր չէ:

Հաւատաքննական ատեան եւ հաճոյախօսութիւն չեն միացներ եւ չեն վերականգնէր ազգը, չեն գրեր դարերու դիմաց կանգնող յիշողութիւն եւ հայու կեանքի **նոր պատում**: Այս հասկնալով, կրնանք ընել այնպէս,- կրնա՞նք,- որ օղակ փոխէ մեր ճակատագիրը եւ ըլլանք ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ եղող ՀԱՅՐԵՆԱՏԵՐ ՆԵՐԿԱՅ ԱԶԳ: Այս պիտի չընեն ասդին -անդին հաւաքներու ընթացքին եւ ճաշասեղաններու առջեւ ըսուած մեզ յուզող եւ զուարճացնող հաճոյախօսութիւնները:

Յակոբ Պալեան
Հայրենիք
22 Ապրիլ 2025

ՄՓԻՒՔԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԲԵՄ ՉԵՆ ԿՐՆԱՆ ԸԼԼԱԼ

Երիտասարդութիւնը կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողութիւնները



✉ **ՀՐԱՉ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**

ՄԱՅԻՍ 8, 2025



AI generated image

Քանի մը ամիս առաջ, «Սփիւռքի Մեծ Բացական` Ղեկավարութիւն» վերնագրով յօդուածի մը մէջ անդրադարձած էի, թէ ինչպէս Սփիւռքի «դասական» կազմակերպութիւնները խոր ճգնաժամի մէջ են, թէ սփիւռքեան ղեկավարութեան քանակական եւ որակական նօսրացումը հիմնական ու գոյութենական խնդիր է, եւ կառոյցները չեն յարմարած 21-րդ դարու իրականութիւններուն: Առանց արմատական ինքնաքննադատութեան, երիտասարդներու եւ կանանց ներգրաման, բաց երկխօսութեան եւ ժամանակակից աշխատելակերպի որդեգրման, կառոյցները դատապարտուած են աստիճանաբար կազմալուծուելու: Միասնականութեան մասին դատարկ կարգախօսերը գործնական քայլերով պէտք է փոխարինուին` նոր տեսլականով ու նոր առաջնորդներով` հիմնուած վստահութեան, արդիական մեթոտներու եւ համադրուած ջանքերու վրայ:

Այս յօդուածին մէջ կը փափաքիմ առանձնայատուկ ուշադրութիւն դարձնել երիտասարդութեան վրայ եւ որոշ գործնական առաջարկներ ընել:

Անուրանալի է, որ տասնամեակներու ընթացքին, սփիւռքեան ազգային կամ համայնքային կառոյցները — եկեղեցին, միութիւններ, կուսակցութիւններ, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ — համայնքային կեանքի ողնաշարը եղած են: Անոնք ջամբած են հայրենասիրական ոգի, փոխանցած են հոգեւոր դաստիարակութիւն, մշակոյթ ու լեզու, եւ ստեղծած են պատկանելիութեան մթնոլորտ մը աշխարհի տարբեր ծագերուն տարածուած հազարաւոր հայերու համար: Սակայն, ժամանակները փոխուած են: Նոր սերունդի մտածողութիւնը, աշխարհահայեացքը ու սպասումները այլ են: Իսկ հարցումը, որ կը մնայ անպատասխան` սերունդներու այս կամուրջը ինչպէ՞ս պիտի կերտուի կամ ձեւաւորուի:

Կառոյցը միջոց է, ոչ` նպատակ



Առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել պարզ բայց կարեւոր իրողութիւն մը՝ ազգային կառոյցները ինքնին նպատակ չեն: Ակումբը, միութիւնը կամ կուսակցական կառոյցը միջոցներ են, ոչ թէ վերջին կայարան: Այդ կառոյցները կը գործեն որպէս անցումային օղակներ, որոնք մարդը կը կապեն իր ինքնութեան, մշակոյթին ու արմատներուն: Սակայն երբ կառոյցը դառնայ ինքնանպատակ՝ առանց հաշուի առնելու թէ ո՞վ ներգրաւուած է եւ ինչո՞ւ, ան կը դադրի կենսունակ ու իմաստալից ըլլալէ:

Շատ յաճախ հայկական կազմակերպութիւններու քննարկումներուն մէջ բացակայ է այս ճշմարտութիւնը: Կարծրացած է այն ենթադրութիւնը, որ «ակումբ»ը կամ «համայնքային կեդրոն»ը կամ նոյնիսկ եկեղեցին, բոլորին կողմէ նոյն կերպ կը մեկնաբանուի, կամ բոլոր «օգտատէրները» նոյն հետաքրքրութիւնը, ակնկալութիւնները ունին, նոյն գնահատականը կընեն: Որեւէ լուրջ կազմակերպութեան մը ղեկավարութիւն պէտք է ունենայ այն խոնարհութիւնն ու իրատես կամքը՝ հարց տալու, թէ «Ի՞նչ կ'ուզեն մեր երիտասարդներն ու նորահաս սերունդները: Ի՞նչ կ'ակնկալեն տեսնել մեր կազմակերպութիւններուն մէջ»:

Փաստերը ի՞նչ կ'ըսեն

Ըստ վերջին տարիներուն հայկական սփիւռքի մէջ կատարուած ուսումնասիրութիւններուն, սփիւռքի կազմակերպութիւններու դերին մասին 16-35 տարեկան հայ երիտասարդներուն մօտ քանի մը կարեւոր մտածումներ կը նկատուին: Շատեր յատկապէս անջատուած կը զգան համայնքային կազմակերպութիւններէն եւ անոնց առաջնորդներէն: Օրինակ՝ Մոնթրէալի մէջ, Քեպէք ծնած երիտասարդուհի մը կ'ըսէ, թէ հայկական վարժարանին մէջ չէր կրնար ընդունուած կառոյցի կարծիքէն տարբեր կարծիք յայտնել. թոյլատրելի չէր: Ըստ 2019-ին Արժանքին, Մոնթրէալ եւ Լիբանան կատարուած ուսումնասիրութեան, 16-24 տարեկաններու 84 տոկոսը եւ 25-34 տարեկաններու 76 տոկոսը հայկական քաղաքական կուսակցութիւններու հետ կապ չունէր: Նոյն երեւոյթը արձանագրուած է նաեւ ԱՄՆ-ի եւ Թորոնթոյի մէջ 2022-ին, ուր բոլոր տարիքի մասնակցողներու մեծ մասը՝ յատկապէս երիտասարդները, համայնքային կուսակցական կազմակերպութիւններուն մէջ գործուն մասնակցութիւն չունէին:

Երիտասարդներու մեծ մասին համար համայնքային կազմակերպութիւններու ծրագրերը չեն հետաքրքրեր զիրենք: Ըստ 2019-ի ուսումնասիրութեան, 34 տոկոսը նշած էր, որ երիտասարդներու հետաքրքրութիւններուն չհամապատասխանող ծրագրերու պակասը լուրջ խնդիր է: Ըստ 2021-ի Եւրոպայի համայնքներու արդիւնքներու, 16-24 տարեկաններու 56 տոկոսը առաջնահերթ կը նկատէր հայոց պատմութեան, լեզուի, արուեստի, երաժշտութեան, հայկական խոհանոցի եւ պարի շուրջ դասախօսութիւններու եւ միջոցառումներու կազմակերպումը: Նմանապէս, ըստ 2022-ին Միացեալ Նահանգներու եւ Թորոնթոյի մէջ կատարուած հարցախոյզի արդիւնքներու, «երիտասարդներու համար հետաքրքրական միջոցառումներու բացակայութիւնը» հիմնական խնդիր էր 18-24 տարեկաններու (46%) եւ 25-34 տարեկաններու (34%) համար:

Կարճ ասած, այս տարիքային խումբերը կը զգան թէ չեն ներկայացուիր եւ հեռացած են աւանդական կառոյցներէն: Որակական հարցազրոյցներու ընթացքին երիտասարդ մասնակիցներ նշած են, որ համայնքային կազմակերպութիւնները չեն յարմարիր ժամանակներու փոփոխութիւններուն եւ չեն արտայայտեր ամբողջ համայնքի կարծիքը: Շատեր կը նշեն, որ կուսակցութիւնները եւ աւանդական կառոյցները չեն արդիականացած



Եւ չեն արտացոլեր նոր սերունդի մտածելակերպը: Այդուհանդերձ, կրթական եւ մշակութային ծրագրերուն նկատմամբ հետաքրքրութիւնը շատ բարձր է. 2022-ին, Թորոնթոյի հարցախոյզը ցոյց տուած է, որ 18-24 եւ 25-34 տարեկան երիտասարդներու համար «համայնքի տարանջատումը» կը մնայ հիմնական մտահոգութիւն:

Նոր սերունդը լսել, ոչ թէ ենթադրել

Բազմաթիւ կազմակերպութիւններ կ'ենթադրեն որ եթէ իրենք որոշ ծրագրեր յղանան եւ ստեղծեն՝ գեղեցիկ աֆիշներով եւ խելացի շուկայնացումով (marketing-ով), երիտասարդները ինքնաբերաբար պիտի «կլանեն» զանոնք: Սակայն այս մտեցումը չի համապատասխաներ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւններուն: Այսօրուան նոր սերունդը կը փնտռէ իմաստ, ինքնութիւն, տարածք, ուր իր ձայնը նշանակութիւն ունի:

Երիտասարդները իսկապէս ներգրաւելու համար պէտք է սկսիլ լսել զանոնք: Ոչ միայն անհատական գրոյցներով, այլեւ հետեւողական հարցադրումներով, հետազոտութիւններով՝ հասկնալու, թէ ի՞նչ ակնկալութիւններ ունին համայնքէն, եկեղեցիէն, կուսակցութիւններէն, միութիւններէն, եւ ընդհանրապէս հայկական կազմակերպութիւններէն:

Այս գործընթացը կրնայ շօշափելի կերպով իրագործել՝ ստեղծելով երիտասարդական խորհուրդներ, կազմակերպելով բաց ֆորումներ եւ քննարկումներ, ուր պատանիներու եւ երիտասարդութեան ձայնը ոչ միայն կը հնչէ եւ կ'արձանագրուի, այլ կը դառնայ առաջնորդող ուղեցոյց:

Նոր մեթոտներ նոր սերունդին համար

Համայնքներու ապագան կախեալ է նոր սերունդէն, որ այսօր լուռ է, բայց ունի ձգտում եւ տեսլական: Կառոյցները միայն բեմ չեն կրնար ըլլալ, ուր երիտասարդները կը լսեն, այլ հարթակ՝ ուր անոնք կը խօսին:

Անհրաժեշտ է ստեղծել առցանց եւ արհեստագիտական հարթակներ՝ խթանելու կապեր եւ համագործակցութիւն: Միայն ֆիզիքական ներկայութիւնը այլեւս բաւարար չէ՝ այսօրուան ժամանակակից երիտասարդին հասնելու համար:

Երիտասարդներուն համար պէտք է մշակել անձնական եւ մասնագիտական զարգացման ծրագրեր. Օրինակ՝ հիւր խօսողներու մասնակցութեամբ քննարկումներ, ձեռնարկատիրութեան ու ինքնարտայայտման աշխատանոցներ, որոնք կ'ամրացնեն կապը ազգային պատկանելիութեան եւ անհատական կերտումին միջեւ:

Մփիւռքեան կառոյցներն ու կազմակերպութիւնները, «ազգային ծառայութիւն», «յանձնառութիւն» եւ «պարտականութիւն» քարոզելէ առաջ, նախ *մտրդ* կերտելով պէտք է զբաղին. Նկարագիր եւ ինքնութիւն ձեւաւորելու մասին մտածել: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք դեր ունի համայնքին մէջ, ոչ թէ միայն ունկնդիր է: Երիտասարդներուն ներշնչել, լիցքաւորել եւ ուղեկից ըլլալ անոնց որպէս գործակիցներ: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք համայնքի ձեւաւորման մասնակից է, ոչ միայն ստացող:

Ճկուն եւ երիտասարդակեղրոն մօտեցումները պետք է առաջնորդուին ոչ թէ ծրագրերու քանակով, այլ անոնց ազդեցութեամբ: Հարցը այլեւս «ինչպէ՞ս անոնք կրնան մեզի միանալ» չէ, այլ «ինչպէ՞ս մենք կրնանք իմաստալից ըլլալ անոնց աշխարհին մէջ»:

Վերջերս **Վարազ Գեթսեմանեան** Լիբանանահայ համայնքի հիմնական խնդիրներու մասին դիպուկ յօդուածի մը մէջ մատը վերքին վրայ դրած էր: Այսօր յստակ տեսանելի է, որ հաստատութեան համակարգը անկարող է նոր հայեցակարգեր ձեւաւորելու: Ան «կը շարունակէ շարժիլ աւանդոյթի ուժով միայն, հանրային, համայնքային եւ ազգային կեանքը սահմանափակելով հետաքրքրութիւններու շատ նեղ եւ շատ յաճախ ժամանակավրէպ օրակարգերով», կընդգծէ Դոկտ. **Գեթսեմանեան**: Շատեր, դժգոհ համակարգի մտաւորական պարապութենէն, կը ձգտին դուրս գալու անոր սահմաններէն՝ արարելու նոր տարածքներու մէջ: Սակայն անոնք կը բախին կարծրացած ինքնութեան շրջանակներու, որոնք արգելք կը հանդիսանան նորարարութեան:

Եթէ եկեղեցին, կուսակցութիւնները եւ համայնքային մշակութային, ուսումնական եւ բարեսիրական կազմակերպութիւնները իսկապէս լուրջ են իրենց առաքելութեան մէջ, ապա անոնք պետք է դուրս գան միապաղաղ աւանդոյթներու սահմաններէն, ընդարձակեն իրենց տեսլականը եւ ստեղծեն այնպիսի ներառարական ու ստեղծագործ միջավայրեր, ուր երիտասարդութիւնը կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողութիւնները:

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան

ԲԱ՛Ւ Է ԽՕՍԻՆՔ. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՐ ՍՊԱՍԷ ԲՈՂՈՐԻՍ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Թեւակոխեցինք ապրիլ ամիսը:

Աշխարհասփիւռ հայութիւնը հայրենիքէն Սփիւռք ոգեկոչեց Հայոց ցեղասպանութեան նահատակներուն յիշատակը:

Հայոց ցեղասպանութիւնը սկսաւ վեց հարիւր տարի առաջ, երբ օսմանեան թուրքերը նուաճեցին Փոքր Ասիան, Հայաստանը եւ հիմք դրին օսմանեան կայսրութեան: Թուրքերը նախ ձեռնամուխ եղան «Մպիտակ» ցեղասպանութեան՝ ձուլում, իսլամացում, բռնագաղթ եւ մասնակի ջարդեր: Վեց հարիւր տարի պայքարեցան հայոց հայրենիքը յափշտակելու եւ սեփական հայրենիք դարձնելու համար: Սակայն համոզուելով, որ ազդու չեն հայաթափման միջոցները, օսմանեան կայսրութեան ղեկավարութիւնը 19-րդ դարուն որդեգրեց հայ ժողովուրդը ֆիզիքական

ոչնչացումի ենթարկելու քաղաքականութիւնը:

Հայ ժողովուրդը կամ պետք էր պայքարեր իր հայրենիքին համար, կամ հեռանար օտար երկիրներ: Ան հարկադրաբար ընտրեց պայքարի ուղին:



Պաշտօնական Թուրքիան ոչ միայն կը փորձէ հերքել ցեղասպանութեան փաստը, այլև պատասխան արշաւ նախաձեռնած է տարբեր մակարդակներու վրայ, ծածկելու սուտի եւ կեղծիքի վրայ յենած իր պատմութիւնը: Յանցագործը խտրութիւն չի դնէր միջոցներու մէջ, կը կաշառէ պատմաբաններ, գիտնականներ, քարոզչական եւ հասարակական զանազան կազմակերպութիւններ:

Իսկ մենք, ինչպէ՞ս կը հակադարձենք թրքական հակաքարոզչութեան: Պէտք է ընդունիլ, որ նորանկախ հանրապետութեան բոլոր իշխանութիւնները կրաւորական կեցուածք ցուցաբերած են թրքական «պատմաշինութիւններուն» հանդէպ:

Ամբողջ Արեւմտահայաստանը ասպատակող, հայ ժողովուրդը տեղահանութեան ենթարկող Թուրքիան բռնագրաւիչ կը յայտարարէ Հայաստանը: Երեւան չի յանդգնիր պատասխանելու: Մինչդէռ Անգարան եւ Պաքուն են բուն բռնագրաւողները: Թուրքիա երեսուն եւ աւելի տարիներէ ի վեր տնտեսական շրջափակումի ենթարկած է Հայաստանը: Հայաստանի քաղաքական այրերը զարմանալիօրէն «գործընկեր» կը կոչեն մեր տնտեսութիւնը կաթիլ առ կաթիլ քայքայող թշնամիին: Այս «գործընկեր»ը Ազրպէյճանին հետ Հայաստանը մեկուսացուցած է տարածաշրջանային տնտեսական համաձայնագիրներէն, կազմաւորներու ճանապարհներէն:

Խուլ ականջ կը ձեւանանք Ազրպէյճանին զէնք մատակարարող պետութեան առջեւ: Մեր իշխանութիւնները «իրատեսական» գնահատական կու տան Թուրքիոյ հանդէպ անբացատրելի զիջողական քաղաքականութեան:

Աշխարհաքաղաքական վտանգաւոր զարգացումներ տեղի կ'ունենան հարաւային Կովկասի մէջ: Ռազմական նոր դաշինքներ կը կնքուին...: Մենք պարտաւոր ենք ճիշդ գնահատելու պատմութիւնը, միաժամանակ՝ ապագայի մեր քայլերը:

Դժբախտաբար Հայաստանի երրորդ հանրապետութեան արտաքին քաղաքականութեան անհետեւողական ընթացքը կերպով մը անտեսած է Հայկական հարցին գոյութիւնը, երբ Ցեղասպանագետներու Միջազգային Միութիւնը 1997 թուականին ընդունեց բանաձեւ մը, ուր կը հաստատէր, որ 1915 թուականին աւելի քան մէկուկէս միլիոն հայերու զանգուածային սպանութիւնը, տեղահանութիւնը ցեղասպանութիւն է: Իսկ 2005 թուականին, պատասխանելով Էրտողանի այն նամակին, առ այն , որ «պատմաբանները անկողմնակալ ուսումնասիրեն հայ ժողովուրդի ճակատագիրին վերաբերեալ հարցերը», Ցեղասպանագետներու Միջազգային Միութիւնը վերահաստատեց Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու նախապէս ընդունած որոշումը, աւելցնելով. «Մենք կը հաւատանք, որ ակնյայտօրէն ի շահ թուրք ժողովուրդին եւ անոր ապագային է՝ ճանչնալ նախորդ կառավարութեան պատասխանատուութիւնը հայ ժողովուրդի ցեղասպանութեան համար, ինչպէս կատարեցին գերմանական կառավարութիւնը եւ ժողովուրդը Հոլոքոսթի պարագային»:

Հայաստանի մէջ ումանք չեն փափաքիր ըմբռնել այն սհաւոր զինը, որ հայ ժողովուրդը վճարեց անցեալին: Մենք այսօր եւս կը շարունակենք վճարել մեր պատմութեան ամենաողբերգական էջին հետեւանքները:

Այստեղ կարելի է բարձրաձայնել մէկ այլ կարեւոր հարց:

Մփիւռքահայութիւնը ընդհանրապէս պէ՞տք է վստահի Հայաստանի հանրապետութեան՝ Հայոց ցեղասպանութիւնը ներկայացնելու հարցով, թէ՞ փոխարէնը ընտրէ պատմական արդարութիւնը վերականգնելու այլընտրանքային ճանապարհ, իրաւական հայցի վրայ հիմնուած, ոչ՝ ցեղասպանութեան ճանաչման քաղաքական առեւտուրի շուրջ:

Պահանջատիրութեան երթը թուրքութեան նշաններ ցոյց կու տայ այսօր: Կարծէք ինքնանպատակ ըլլային ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով Համահայկական հռչակագիրին պատգամները:



Թուրքը, օսմանական կամ՝ քեմալական, չէ հրաժարած Հայաստանը եւ Հայաստանի ճանապարհով հայ ժողովուրդը ոչնչացնելու ծրագիրէն:

Ցեղասպանութեան ճանաչումը արդէն հատած է որոշակի ճանապարհ: Սակայն ճանաչումը չի բերեր հատուցում: Ցեղասպանութեան ճանաչումը չի կրնար դառնալ պահանջատիրական պայքարի լուծում:

Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւերուն մէջ հատուցման վերաբերեալ ակնարկի բացակայութիւնը այն տպաւորութիւնը ստեղծած է, թէ Թուրքիոյ կողմէ ճանաչումէն բացի չունինք այլ պահանջ:

Ժամանակն է, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը հետապնդելով հանդերձ, մեր գլխաւոր թիրախը դարձնենք հատուցումները, ցեղասպանութեան հետեւանքներու վերացումը: Այս բնականաբար կը նշանակէ պահանջատէր դառնալ մեր իրաւունքներուն, նիւթական, հոգեւոր, մշակութային, մտաւոր եւ բարոյական կորուստներուն: Հայոց ցեղասպանութեան ճանաչումը վերջնականապէս չէ մեզի համար:

Հայ ժողովուրդը պահանջատէր է: Ժամանակն է, որ միջազգային հանրութիւնը եւ յատկապէս Թուրքիան լսէ այս բառը: Անհրաժեշտ է նաեւ արթնցնել Թուրքիոյ հանրային գիտակցութիւնը:

Այստեղ կը ծագի հարցերու հարցը, ի՞նչ կը պահանջենք ցեղասպանէն: Դժբախտաբար մինչեւ օրս չունինք յստակ եւ ամբողջական պատկերացում: Ո՞վ պիտի քննարկէ, հետապնդէ այս հարցը, եթէ ոչ մենք: 100-ամեակի Համահայկական հոչակագիրը կրնար կարեւոր հիմք ծառայել այս աշխատանքներուն:

Հայկական հարցը միայն Հայոց ցեղասպանութեան ճանաչումը չէ: Հայկական հարցը հողի, հայրենիքի հարց է:

Թուրքը շատ լաւ գիտէ, թէ անցեալը մոռացութեան տալը ինքնախաբերութիւն մըն է պարզապէս: Ցաւալիօրէն հայ-թուրք յարաբերութիւններուն մէջ ներկայիս տիրող կարծեցեալ լաւատեսութիւնը երբեք ալ հիմնուած չէ իրաւական հիմքերու վրայ: Հայ-թուրք յարաբերութիւններուն մէջ իրաւագրկուած կողմն է, որ պայմաններ պիտի ներկայացնէ, ոչ՝ յանցագործը:

Ուշացած ենք դժբախտաբար:

Այո, շատ ուշացած: Ճառախօսութիւններու ժամանակը՝ սպառած: Բա՛ւ է խօսինք: Ծանր աշխատանք կը սպասէ բոլորիս: Այս բոլորին համար անհրաժեշտ է քաղաքական կամք, մասնագիտական, հետեւողական աշխատանք՝ փաստադուրբերու հաւաք, հատուցումներու համապարփակ թղթածրարի պատրաստութիւն: Աշխատանք...:

Եթէ մենք հրաժարած չենք Արեւմտահայաստանէն եւ հրաժարած չենք մեր բռնագրաւուած հայրենիքը ազատագրելու արդար մղումէն: Եթէ մենք պիտի հետապնդենք մեր արդար դատը, հայու արժանապատուութիւնն ու հպարտութիւնը, պարտինք անյապաղ ազատագրուիլ հատուածամոլութենէն եւ ինքնասիրահարուածութենէն եւ ձեռնարկել վերածնունդի նուիրական աշխատանքի:

Պայքարի միասնութիւնը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն է այսօրուան աշխարհաքաղաքական զարգացումներուն մէջ: Գործենք իւելամտօրէն եւ իրաւաքաղաքական մտածողութեամբ, կտրչելով մեր իրաւական պահանջներուն:

Անհրաժեշտ է արեւմտահայութեան բոլոր կենսունակ ուժերուն մասնակցութեամբ անյապաղ մշակել համասփիւռքեան աշխատանքի ծրագիր: Որդեգրել մեզ լիակատար ներկայացնող մարմին մը (յատկապէ՛ս քաղաքական փորձ ունեցող իրաւաբաններէ), որ պիտի գլխաւորէ մեր պահանջատիրական պայքարը մեր իրաւունքները, նաեւ վերջ դնէ մեր ապակեղորն եւ անգլուխ վիճակին:



Հայոց ճեղասպանութեան ոգեկոչումները մեր գիտակցութեան մէջ անգամ մը եւս պիտի հաստատէ, որ գերագոյն նպատակ մը ունինք՝ մեր բռնագրաւուած հայրենիքին ազատագրութիւնը: Մեր նահատակները գոհուեցան, որպէսզի մենք ապրիլ սորվինք:

Այսպիսի հրամայականի առջեւ ոչ մէկ խտրականութիւն Սփիւռք եւ հայրենիք, կուսակցական կամ որեւէ այլ հաշուով: Մենք մէկ ենք, մէկ կամքով եւ հաւատով: Մենք պիտի գօտեպնդուինք դէպի մեր ժողովուրդի եւ հայրենիքի արդար դատը եւ ապագան: Բայց այս բոլորէն զուգահեռ, միաժամանակ սփիւռքահայր Հայաստան վերադարձնելու մասին պէտք է մտածել: Այս մասին մտածող չկայ:

Պատմական Հայաստանի երազը փայփայելու համար իւրաքանչիւր հայ պարտաւոր է ամբողջ հոգիով կառչիլ անկախ Հայաստանին, անոր բանակին, պետականութեան, որովհետեւ միայն հզօր Հայաստանը եւ հզօր Սփիւռքը կրնան ըլլալ մեր երազին միակ բանալին:

Այ՛ս պարտի դառնալ մեր նահատակներուն պատգամը Մեծ եղեռնի 110-րդ տարելիցին:

ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԸ ՊԱՀԵՑԻՆՔ, ԱՅԼԵՒ ԵՐԿԱԹՒ ՓՈՒՍԱՐԷՆ ԼԱԹ ՎԵՐՑՈՒՑԻՆՔ



Արայիկ Մկրտումեան

Մայիս 2, 2025

Վերջերս, Երեւանի մէջ, Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան րաժանմունքին մէջ, հանդիպում մը տեղի ունեցաւ թուրք պատմաբան Թաներ Աքչամի հետ, որ կը նկատուի Հայոց Ցեղասպանութեան պատմութեան առաջատար մասնագէտ մը: Հանդիպումին ընթացքին, Աքչամ ներկայացուց իր տեսակէտը Թուրքիոյ ժողովրդավարական պետութիւն դառնալու անհրաժեշտութեան մասին: Բանակաբար քննարկուեցաւ նաեւ Հայոց Ցեղասպանութեան ընդունման ու մերժման մօտեցումները: Բազմաթիւ հարցեր արծարծուեցան, շատ մը ձեւակերպումներ եւ ենթադրութիւններ եղան այս կամ այն ուղղութեան, մօտեցման մասին, բայց ես առաւելաբար մէկ հարց կ'ուզէի տալ Աքչամին՝ հարց մը, որ թէ՛ անորոշ էր, թէ՛ բաւական որոշակի: Հարցս ոչ թէ այն, էր թէ արդեօ՞ք երբեւիցէ Թուրքիան կը ճանչնայ Ցեղասպանութիւնը կամ ինչպէս կը ճանչնայ, ի՞նչ հատուցում պատրաստ է տալու կամ քննարկելու, այլ՝

-Ի՞նչ է Թուրքիոյ ուզածը:



Թաներ Աքչամը քանի մը երկվայրկեան լռութենէ յետոյ պատասխանեց բաւական երկար, որուն հիմնական իմաստն այն էր, թէ Թուրքիա կ'ուզէ, որ հայերը հասկնան, թէ Թուրքիա Ցեղասպանութիւնը երբեք պիտի չճանչնայ (առնուածն այսօրուայ Թուրքիան), պատրաստ չէ որեւէ հատուցում տալու, իսկ ինչ որ եղած է, եղած է ու հայերը պիտի համակերպին այդ բոլորին:

Մնացածը գեղարուեստական էր: Աքչամ, որ իր խօսքին մէջ բազմիցս նշեց, որ տեղի ունեցածը ամենայն ինամբով նախապատրաստուած ու ծրագրուած

Ցեղասպանութիւն էր, նաեւ քանի մը հետաքրքրական բան պատմեց Թուրքիոյ մասին՝ նշելով, որ Թուրքիա ներկայիս ունի Հիթլերի նացիական ռեժիմին նման դրութիւն մը, ուր հայերը, հրեաները անձնագրուած են «քոտաւորուած» ու ըստ էութեան դասակարգուած են որպէս երկրորդ «տեսակի» ստորին ժողովուրդներ: Ներկայացուց նաեւ ուրիշ բազմաթիւ ծանօթ ու անծանօթ փաստեր: Աքչամ նաեւ քանի մը օր առաջ տուած իր հարցազրոյցներէն մէկուն մէջ նշած էր, որ ցեղասպանութիւնը կատարուած էր այն նպատակով, որ կանխէր հայկական երկու նահանգներուն մէջ բարենորոգումներու գործադրութիւնը, որովհետեւ բոլորը վստահ էին, որ այդ բարենորոգումները պիտի յանգէին Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան, ապա եւ անկախութեան: Ըսած էր նաեւ, թէ թուրքերը ուզելով կամ չուզելով բնաջնջած էին ամբողջ ժողովուրդ մը, որովհետեւ արդէն իսկ կորսնցուցած էին Եգիպտոսը, Յունաստանը, Պուլկարիան, Ռումանիան եւ չէին կրնար նաեւ կորսնցնել Հայաստանը, քանի որ Հայաստանի կորուստը կրնար գերեզմանաքարը դառնալ Օսմանեան Կայսրութեան, որ առաջին համաշխարհային պատերազմին, երեք ճակատներու վրայ պարտութիւն կրած էր, իսկ 1914-ին, ռուսերը հայերուն ինքնավարութիւն խոստացած էին Արեւմտեան Հայաստանի մէջ: Տեսակ մը տհաճ արդարացում:

Հիմա գանք բուն հարցին: Հարցը հոս ոչ թէ Աքչամով հիանալ-չհիանալն է, այլ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հայկական ու թրքական մօտեցումներու՝ զիրար հակասող տրամաբանութիւնը: Մենք Ցեղասպանութեան մասին խօսելու ատեն, միշտ իրարու կը խառնենք ճանաչումն ու հատուցումը՝ պատկերացնելով, որ եթէ Թուրքիա ճանչնայ Ցեղասպանութիւնը, ապա ինքնաբերաբար նաեւ պիտի հատուցէ (Մերեան Հայաստան, կողոպտուած գումարներու, քանդուած շարժական եւ անշարժ գոյքերու դիմաց նիւթական հատուցում գոհերու իրաւայաջորդներուն եւ այլն):



Բայց մենք սովորաբար հարց չենք տար մենք մեզի, թե Թուրքիան ի՞նչ կ'ուզէ: Մինչդեռ այդ հարցը շատոնց պէտք է տուած ըլլայինք, ոչ թէ այն պատճառով, որ թուրքերու զգացումները շատ կարեւոր եւ գնահատելի են, այլ գոնէ հասկնալ, թե Թուրքիա ի՞նչ միտքեր ու մօտեցում ունի հայոց Յեղասպանութեան հարցով (զուտ մերժելը մէկ կողմ թողած, որ հասկնալի է): Այդ կրնայ մեզ յուշել, թէ մեր պահանջատիրութեան հարցով, ե՞րբ ու ի՞նչ ռազմավարութիւն որդեգրենք՝ հաշուի առնելով, թէ ի՞նչ կը կատարուի նոյնիքն այդ Թուրքիոյ մէջ, որմէ մենք պատմական արդարութեան վերականգնում կը պահանջենք: Իսկ ի՞նչ կ'ուզէ Թուրքիան:

Թուրքիա այլեւս չի հերքեր Յեղասպանութիւնը, հերքելը իմաստ չունի: Կարելի էր հերքել, եթէ անոր մասին խօսէին միայն հայերը, բայց Յեղասպանութիւնը ճանչցած են տասնեակ երկիրներ, ընդ որում այնպիսի հզօր երկիրներ, ինչպէս օրինակ Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Ֆրանսա, Գերմանիա եւ այլն: Եւ ի՞նչ: Մեծ չափով ոչինչ: Մենք, որ Յեղասպանութեան ճանաչումը դրինք նման ճամբու վրայ, նաեւ Թուրքիոյ հնարաւորութիւն տուինք հասկնալու, որ Յեղասպանութիւնը հերքելը անիմաստ է, որովհետեւ չհերքելը եւս ոչինչով կը պարտաւորեցնէ: Թուրքերը կ'ըսեն այո, նախորդ դարասկզբին ինչ որ դաժան կացութիւն մը տիրած է ու նաեւ հայերը տուժած են ու այդ բոլորը ողբերգութիւն է եւ այլն: Մնացեալը արդէն ձեւակերպումներ են: Բացառուած չէ, որ «ժողովրդավարացման» ճամբով ընթացող Թուրքիան օր մը ճանչնայ նաեւ Յեղասպանութիւնը, երբ արդէն անոր պէտքը չըլլայ ալ:

Ու հայերը, յանկարծ օր մը կը հասկնան, որ թուրքերը չեն ալ հերքեր Յեղասպանութիւնը, պարզապէս չեն ընդունիր, որ այդ իրենց մտածածն ու իրագործածն է: Ու որքան ալ Աքչամը կամայ թէ ակամայ հիմնաւորէ Յեղասպանութեան պատճառները, միեւնոյնն է, թուրքերը Յեղասպանութիւնը չեն ճանչնար առաջին հերթին ոչ թէ անոր համար, որ հայերուն փող ու հող չտան (թուրքերը այդ մէկը նոյնիսկ չեն ալ քննարկեր), այլ առաջին հերթին իրենց հանրապետական ինքնութիւնը չաղաւաղելու համար: Անոնք պիտի չուզեն ըսել, որ իրենց հպարտութիւնը համարուող հանրապետութիւնը կառուցուած է հայկական ոսկորներու վրայ: Այդ հարուած է թրքական ինքնութեան: Այնպէս ինչպէս Մ. Նահանգներու մէջ պաշտօնապէս չեն ճանչնար, թէւ շատ լաւ գիտեն, որ երիտասարդ ամերիկեան հանրապետութիւնը ոչնչացուցած է բնիկ ամերիկացիները, այնպէս ալ թուրքերը պիտի չճանչնան Հայոց Յեղասպանութիւնը: Բայց քանի որ հերքելն անիմաստ է եւ Յեղասպանութիւնը շատերու կողմէ ճանչցուած է, հոսանքին դէմ լողալու փոխարէն թուրքերը ընդամենը կը փոխեն այդ հոսանքին ուղղութիւնը: Այսինքն թուրքերը այնպէս կ'ընեն, որ հայերը իրենք հիասթափին ու յուսահատին Յեղասպանութեան ճանաչման հեռանկարէն, ընդունին, որ Յեղասպանութեան ճանաչումը այնպէս, ինչպէս հայերը կը պատկերացնեն, անհնարին է: Առաւելագոյնը, որուն թուրքերը այսօր պատրաստ են, անգամ մը եւս յայտարարելն է, որ նախորդ դարասկզբին տեղի ունեցած ողբերգութիւններու ընթացքին նաեւ հայեր տուժած են եւ վերջ, այսինքն այն, ինչ արդէն կ'ընեն: Ինչ որ պատահած է՝ պատահած է: Այս է թուրքերուն ուզածը:



Մենք պարզօրէն պէտք է հասկնանք այդ, թէկուզ մէկի փոխարէն տասը Աքչամ գիրք գրէ ու փաստէ այն, ինչ որ բազմիցս փաստուած է, գործնական արդիւնք չկայ: Ի՞նչ է Թուրքիոյ ուզածը. այն, որ հայը հիասթափի, արժեզրկէ անոր պահանջը, դարձնէ ոչ նիւթական, ոչ գործնական զգացական ու հնչուն բան մը, որը միշտ կարելի է յիշել ու ոչ աւելին: Յատկանշական

է, որ 2020-ի պարտութիւնն ու 2023-ի Արցախի կորուստը հայերու մեծ մասը թելաթափ են ըրած: «Ալ ի՞նչ Արեւմտեան Հայաստան, եթէ Արցախը չկարողացանք պահել» միտքը ունի իր ցաւոտ ու զգուելի, բայց նաեւ ինչ որ առումով հիմնաւոր տեղը:

Իսկ հիմա Յեղասպանութեան հարցով մեր պատկերացումները թարմացնելու մասին: Անկախ անկէ, որ հասարակութեան մէկ մասը կողմ է դրօշներ այրելուն, միւս մասը՝ ոչ: Մենք պէտք է Յեղասպանութեան ոգեկոչման աւելի թարմ ու գործնական միտք ունենանք: Առաջին հերթին ունենալ օրէնք մը Յեղասպանութեան յիշատակումի մասին: Ամէն տարի, ապրիլի 24-ին իրականացնել որեւէ կրթական հաստատութեան վերանորոգում ու բացում, ընկերայնօրէն խոցելի խաւին համար որեւէ արդիւնքի ապահովում, գործարանի բացում, արտադրութեան հիմնում եւ տասնեակ այլ երեւոյթներ: Ամէն տարի ապրիլի 24-ին պակսեցնել անօթի ու անգրագէտ հայերու թիւը, աւելցնել կուշտ ու գրագէտ հայերու թիւը, պակսեցնել մաշած դպրոցները, աւելցնել նորոգուած ու կառուցուած դպրոցները: Այսինքն ամէն տարի ապրիլի 24-ին Հանրապետութեան տարածքով ամբացնել ու պահպանել այն, ինչ որ փորձ կատարուած է արմատախիլ ընելու 1915-ին (աւելի լայն ընդգրկումով 1890-ականներէն մինչեւ 1920-ականներ): Այդ օրը չունենալ առանձին կուսակցական կամ խմբային երեւոյթ, ունենալ համապետական ու համազգային երթ: Ոչ մէկ գիշերային ակումբ ու խաղատուն չաշխատի այդ օրը, փոխարէնը օրը լեցուած ըլլայ նաեւ գիտաժողովով, վերլուծութեամբ, քիչ մը պարզ մարդկային հիւմանիզմով, որ հայերը փորձեն ցուցաբերել իրարու հանդէպ...այնպիսի օր մը ունենանք, որ ցոյց տայ, որ հայերը կոտորուած ու անթաղ մեռել չեն, այլ ապրելով կամք ունեցող, որ պիտի ապրին ու կ'ապրին արդէն:

«Իսկ հատուց՞ումը», - կը հարցնեն աւելի յամառ մարդիկ:

Իսկ կրնա՞նք: Կրնա՞նք ինչ որ բան պարտադրել Թուրքիոյ: Գործնականօրէն, գետնի վրայ, կրնա՞նք պարտադրել, ստիպել, համոզել: Ոչ թէ իրարմէ պահանջել ու իրարու հայհոյել, այլ պահանջել, ստիպել, ստանալ: Առայժմ չենք կրնար: Թերեւս դեռ երկար ժամանակ ալ չկարողանանք: Թուրքիոյ ուզածն ալ այդ է: Ունենալ թոյլ հարեւան Հայաստան, որ ոչինչ կարենայ պահանջել, որ միայն աղմուկ կը բարձրացնէ, ուրիշ ոչինչ:

Եթէ մենք իրաւ լուրջ ծրագիրներ ունինք Յեղասպանութեան հարցով, ապա նախ պէտք է կայանայ Հայաստանը: Եթէ Հանրապետութիւնը չդառնայ ուժեղ ու իր կամքը պարտադրող պետութիւն, ապա կրնանք քիլումէթրով դրօշներ այրել ու հայհոյել այնպէս, որ պատերը կարմրին: Այդ ոչինչ կը փոխէ:

Ի վերջոյ պատմութիւնը դաժան դասեր տուած է: Խրիմեան Հայրիկը մեզի պատգամեց երկաթէ շերեփ ունենալ՝ թուղթի փոխարէն: Մենք ոչ միայն թուղթէ շերեփը պահեցինք, այլև երկաթի փոխարէն լաթ վերցուցինք...որ միջկուսակցական հրաձգութիւններու ժամանակ աւելի հայրենասէր երեւանք՝ վիճելով թէ Ցեղասպանութեան ժամանակ ո՞ր կուսակցութենէն աւելի մարդ սպանուած է, ուրեմն անոնք աւելի հայրենասէր են: Հիմա ալ տափակ վէճ առաջ կ'երթայ, թէ հանրապետութենէ՞ն աւելի շատ են զոհուած, թէ՞ Արցախէն:

Նման եղանակով կարելի՞ է հող ետ բերել:

ԿԻՆԸ ԾԱՂԻ՞Վ, ԹԷ՞ ԾԱՂԻՎ ԼՈՒԻՐԵԼՈՒ ԷԱՎ

Լիւսի Տօքմէճեան, Երևան, 28 ապրիլ 2025, ԳԵՂԱՐԴ



Կանանց նուիրուած տօները կեանքի, սիրոյ, գեղեցկութեան ու ստեղծագործութեան շարունակականութեան խորհուրդը ունին: Այս խորհուրդը Հայաստանի մէջ վերածուած է ամբողջ ամիս մը երկարող տօնակատարութեան, որ կը կոչուի Կանանց միամսեակ:

Միամսեակի սկիզբը կ'ազդարարուի Մարտ 8-ին՝ Կանանց միջազգային օրը: Եթէ աշխարհի մէջ այդ օրը հիմնականին մէջ կ'ընդգծէ կանանց իրաւունքները, ձեռքբերումներն ու հասարակական դերը, ապա Հայաստանի մէջ այդ տօնը ձեռք բերած է աւելի ջերմ ու ընտանեկան երանգ՝ դառնալով սիրոյ եւ յարգանքի արտայայտման իւրօրինակ առիթ: Այս գեղեցիկ, տօնական փուլը իր աւարտին կը հասնի Ապրիլ 7-ին, երբ Հայ առաքելական եկեղեցին կը նշէ Մարիամ Աստուածածնի Աւետման օրը: Այդ օրը հռչակուած է մայրերու եւ մայրութեան բերկրանքն սպասող կիներու օրհնութեան օր՝ արժեւորելով մօր կերպարը եւ կանանց առաքելութիւնը որպէս կեանք պարգեւողներ: Այս երկու օրերուն երկար հերթեր կը զոյանան նամանաւանդ ծաղկավաճառներուն մօտ ու տղամարդիկ կարծես իրարու հետ կը մրցին, թէ ո՞վ ամենամեծ փունջով ծաղիկը պիտի նուիրէ իր կնոջ, սիրուհիին եւ/կամ նաեւ մօր:

Այս նախաբանը կու տայ այն գեղեցիկ տպաւորութիւնը, թէ Հայաստանի մէջ կինը անչափ գնահատուած ու յարգուած է: Բայց դժբախտաբար, իրականութիւնը այդքան ալ սիրուն պատկեր մը չի պարզեր: Կայ խտրականութիւն կանանց նկատմամբ, դեռ աւելին՝ կայ բռնութիւն: Եւ այնպէս չէ որ այս դէպքերը կ'արձանագրուին հանրապետութեան «յետամնաց» մարզերուն մէջ միայն. անոնք կան նաեւ մայրաքաղաք Երեւանի մէջ: Շատեր սեղաններու շուրջ կանանց մասին զարդարուն խօսքեր կ'ըսեն եւ կենացներ կը խմեն, բայց իրական կեանքին մէջ ճիշդ հակառակ վերաբերմունքը ցոյց կու տան իզական սեռին նկատմամբ:



Եթէ խօսելու ըլլանք խտրականութեան մասին, կանայք շատ յաճախ բարդութիւններ կ'ունենան թէ՛ աշխատանքի ընդունուելու ժամանակ, թէ՛ աշխատավայրին մէջ յառաջխաղացման, թէ՛ յղիութեան եւ ծննդաբերութեան պարագային աշխատատեղը պահպանելու համար: Պատկերը տարբեր չէ նաեւ տան մէջ, ուր առաջին ու վերջին խօսքը տղամարդուն է, քանի որ այդ «կին արմատը» կը գտնուի հաւանաբար երրորդ կարգի վրայ՝ երկրորդ տեղը զիջելով սկէտուրին: Կան կանանց վերաբերեալ կարծրատիպեր, որոնց պատճառով կանայք բաւարար մասնակցութիւն չեն ունենար որոշումներու կայացման: Կարծրատիպերն են նաեւ կանանց նկատմամբ բռնութեան նպաստող հիմնական գործօններէն մէկը:

Հասարակական կեանքի մէջ այնքան շատ են կիներու դէմ կիրառուած անարգանքի եւ բռնութեան օրինակները, որ պահ մը ապշած կը մնաս մեր ազգին մէջ այսպիսի վերաբերմունքի առկայութենէն: Եթէ միայն նկատի առնենք լրահոսին մէջ յայտնուած լուրերը, պիտի նկատենք, թէ մէկ շաբաթի կտրուածքով քանի՛-քանի՛ բռնութեան դէպքեր կատարուած են կիներու դէմ: Անոնցմէ ոմանք կը պատահին ոչ թէ որովհետեւ «գոհ»ը կին է, այլ որովհետեւ տուեալ տղամարդուն կինն է եւ տղամարդը ինքզինքին բացարձակ իրաւասութիւն կու տայ կնոջ հետ վարուելու ըստ իր «հայեցողութեան»: Մարմնական եւ խօսքային ճնշումներն ու բռնարարքները հասած են ընդհուպ մինչեւ սպանութեան հասնելու աստիճանին:

Ընտանեկան բռնութիւնը յաճախ կը դիտարկուի որպէս բացառապէս ընտանեկան խնդիր, իսկ հասարակութիւնը կը համարէ, որ ան պէտք է լուծուի ընտանիքէն ներս: Այս մօտեցումը կիները կը դարձնէ աւելի խոցելի, քանի որ բազմաթիւ ընտանիքներու մէջ կնոջ կարծիքը կը մնայ անտեսուած, իսկ անոր իրաւունքները պատշաճ պաշտպանութիւն չեն ստանար:

Ըստ Դեկտեմբեր 2024-ին Հայաստանի մէջ իրականացուած հարցախոյզի մը՝ մասնակիցներուն 35,7%-ը կը կարծէ, թէ ընտանիքը պահպանելու համար՝ կինը պէտք է հանդուրժէ բռնութիւնը, իսկ 27,7%-ը կը գտնէ, որ «կինը արժանի է ծեծի»: Ըստ ոստիկանութեան տուեալներու, ընտանեկան բռնութեան արձանագրուած դէպքերուն ջախջախիչ մեծամասնութիւնը մարմնական բնոյթի է, եւ այդ դէպքերուն 2/3-րդը չէ յանգած քրեական գործերու յարուցման, տուժած կողմի բողոքի բացակայութեան պատճառով:

Հարկ է նշել, որ բռնութեան ձեւաւորումը պայմանաւորուած է բազմաբնոյթ գործօններով՝ կրթութեան ցած մակարդակը, ծնողներու միջեւ բռնութեան ականատես ըլլալը, երեխաներու նկատմամբ ոտնձգութիւնը, քանի մը զուգընկերներու առկայութիւնը կամ զուգընկերոջ անհաւատարմութեան կասկածը, ալքոհոլի գործածումը, տղամարդոց «արտօնեալ», իսկ կանանց ստորադաս կարգավիճակ տուող հասարակական կանոնները:

Ներկայացուածները յստակ պատկերացում կու տան, թէ Հայաստանի մէջ մեծ անհրաժեշտութիւն կայ բռնութիւններու կանխարգիլման համար կազմակերպել հանրային քարոզարշաւներ, որոնք կը քանդեն բռնութիւնը արդարացնող կարծրատիպերը: Երիտասարդներու մէջ սեռային կրթութեան ընդհանուր ծրագրերու շրջանակներուն մէջ



պետք է իրականացուի սեռերու միջեւ հաւասարութեան սկզբունքին վրայ հիմնուած քարոզչական աշխատանք:

Ճիշդ է, մենք կը խօսինք Հայաստանի մասին, բայց այս չի նշանակեր որ աշխարհի այլ երկիրներու մէջ նման երեւոյթներ չկան կամ շատ տարբեր է պատկերը: Պարզապէս մենք հետաքրքրուած ենք մեզմով եւ ամէն առիթով կ'ինն ու անոր դերը արժեւորելով: Պէտք է բոլորին մէջ փոխել կանանց նկատմամբ քարացած կարծրատիպերը եւ կ'ին էակը դիտարկել ոչ միայն որպէս իր հօր, եղբօր կամ ամուսինին հրահանգներուն ենթարկուող, տան գործերը անթերի կատարող, ընտանիքին մէջ անկարելոր դեր ունեցող անհատ, որ «բնական» է եթէ ենթարկուի անարգանքի ու ծեծի:

Միւս կողմէ կը տեսնենք, թէ Հայաստանի Հանրապետութեան մէջ իգական սեռին կը վստահուին պետական նոյնիսկ բարձր պաշտօններ, ինչպէս առողջապահութեան, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի, արդարադատութեան, ներքին գործերու նախարարութիւնները, գլխաւոր դատախազի, մարդու իրաւունքներու պաշտպանի եւ Արտաքին հետախուզութեան ծառայութեան ղեկավարի պաշտօնները, ինչ որ միայն գովելի երեւոյթ է: Գնահատելի է որ Հայաստանի իշխանութիւնները կը հաւատան իգական սեռի կարելոր դերակատարութեան պետականաշինութեան մէջ, հետեւաբար, կը խթանեն կանանց դերը հասարակական ու քաղաքական կեանքին մէջ, որ, վստահաբար, իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ հասարակութեան մէջ կանանց արժեքի բարձրացման վրայ:

Կ'ինը միայն սօնական օրերուն ծաղիկ նուիրելու համար ծնած էակ չէ: Կ'ինը ծաղիկ մըն է ոչ միայն իր գեղեցկութեան, այլեւ իր դիմացկունութեան եւ իւրայատկութեան համար: Ոմանք կը ծաղկին ջերմութեան մէջ, մինչդեռ ուրիշներ՝ ամենաանպտուղ վայրերու մէջ, բայց միեւնոյնն է, կը ճառագայթեն իրենց հմայքն ու հմտութիւնները: Կ'ինը, ծաղիկի նման, բնականօրէն կը փայլի՝ իր սրտի մեղմութեան, հոգիի փափկութեան եւ իր էութեան մէջ թաքնուած ուժերուն միջոցով:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԲԱՌԵՐ ԻՋԱՆ

Բառեր իջան անհուն երկնէն,
Իջան մեղմիւ ու քնքշօրէն,
Փաթի՛լ-փաթի՛լ սպիտակ ձեան պէս,
Փարուեցան ինձ, գրչիս համեստ...

Բառեր իջան ամպրոպներէն,
Մրրիկներէն, փոթորիկէն,
Զայրոյթի պէս գոռ, խելայեղ,
Շառաչեցին մտրակի պէս...

Բառեր իջան հեզի՛կ-մեզի՛կ,
Զերթ երկնի ցօղ, անձրեւի շիթ,
Օրհնութեան պէս լուռ ծփացին,
Աղօթքի պէս մրմնջացին...

Բառեր իջան ինչպէս շողեր,
Բոքք արեւի ճառագայթներ,
Լոյսեր բերին, արեգակներ,
Բացին շքեղ արշալոյսներ...

Բառեր ալ կան տեղացին շանթ,
Կայծակ, որոտ, հրեղէն լեզուակ,
Տեղատարափ անձրեւացին,
Զերթ արտասուքը երկնքի...



Բառե՛ր, բառե՛ր, ձեզմով, ձեզ հետ
Հիւսեցի ես տողեր վսեմ,
Բայց ի՛նչ տողեր, դուք տիեզե՛րք էք,
Չէք պարփակուիր տողերուս մէջ...

Դուք թռիչք կ'անէք ամէն անգամ
Որ ձեզ բռնեմ իմ գրչիս տակ,
Կ'երթաք հեռո՛ւ, դէպի անհա՛ւ
Հորիզոններն անհունասլաց...
4/5/2020

.....

ՄԱՅՐՄ ԻՆՁ ՀԵՏ Է
(Մայրերու ամսուան առթիւ)

Մայրական ձեռք մը՝ համակ գուրգուրանք,
Կը հսկէ վրաս՝ քուն թէ արթմնի,
Եւ ինձ կը թուի թէ հրեշտակ դարձած
Մայրս ինձ հետ է՝ լուսաթեւ ոգի...

Յո՛յս ու լո՛յս կու տայ կեանքիս ճամբէքին,
Բուժիչ դեղ, դարման խռովայոյզ սրտիս,
Անուշ խօսք կ'ըսէ, երբ մութ ամպերը
Երկինքս ծածկեն, խափանեն լոյսս...

Թեւերն կ'երկարէ ինձ սիրագործով,
Հոգիս պարուրէ անսահման սիրով,
Գգուանքովն իր տաք կը գտեպնդուիմ,
Հին օրերուն պէս իրեն կը փարիմ...

Մայրերը այդպէս մեզի հետ են յար,
Սէրն իրենց անմար յաւէտ լոյս կու տայ,
Բաւ է որ զգանք սիրալոյսն անշէջ,
Զերթ կանթեղ լուսէ մեր գլխուն վերեւ...
4/5/2019

.....

ԶՕՆ ԱՊՐԻԼԵԱՆ
Լո՛յս, լո՛յս միայն աղերսեց
Ազգ մը ամբողջ Բարձրեպէն,
Խաւարին մէջ ու մեզին
Փնտռեց լոյսը տենդագին...

Շուրջը մռայլ ամպերը
Ծածկեցին իր երկինքը,
Իր հոգիէն արձակեց
Լոյսի, յոյսի նշոյլներ...



Նշոյլները քովէ-քով
Շատցա՛ն, շատցա՛ն լուսաթով,
Արեւեցին երկինքը,
Կամարեցին սիրտերը...

Միրածորան մեղեդին
Մրմունջն էր իր հոգիին,
Գիշերուան մէջ ու մութին,
Աստղակայլակ լուսաշի՛ թ...

Ու երգեց ան շարունակ,
Եաթաղանին տակ անգամ,
Հայեացքին դէմ միշտ շողաց
Հորիզոնը արեւվառ...

Բանաստեղծին պէս գոչեց
Մարդկութեան պիղծ երեսին.
«Ես երգելով պիտ' մեռնիմ,
Հոգւոյս երգն է լուսահեւ...»:

Եւ ո՞վ կրնայ խափանել
Ճառագայթը միշտ անշէջ,
Որ կը ծագի հոգիէն,
Տիեզերքի Ոգիէն:
21/4/2023

.....

ԻՄ ԱՐԵԳԱԿ
Տարիներու մշուշին մէջ,
Կը պսպղայ կանթեղը վառ
Միրոյդ լոյսի՛ն անեզրական,
Մայր իմ, կարօ՛տ դուն մշտառկայծ...

Տարիներու ժանգ ու տիղմին,
Խիղճդ մաքուր կը ցուցլայ,
Արդարութեան կա՛նչ ու նժա՛ր,
Մէր-բարութեա՛ն թաս անյատակ...

Տարիները կուտա՛կ-կուտա՛կ
Ոչինչ կրցան թօշնել, զեղչել
Հոգիէդ սուրբ, ազնուափայլ,
Մափո՛ր լոյսի, յոյսին անեզր...

Եւ հիմա ալ դուն ինձ հետ ես,
Կը ճառագէս հաւա՛տք ու սէ՛ր,
Ոգի՛, կորո՛վ, հոգի՛ լուսէ,
Խորին հաւա՛տք մը աներեր...



Եւ չեմ գիտեր ինչպէ՞ս, ինչպէ՞ս
Դուն արեգա՛կ կրես քու մէջ,
Չխաւարո՞ղ վառ արեգակ,
Ճանապարհիս փարո՞ս անմար:
7/5/2022

.....

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ
Տէ՛ր օրհնէ բերքն իմ սրտաբուխ,
Մէր-բարութեամբ է ան օծուն,
Թող ան հասնի բիւր սիրտերուն,
Վանէ թախիծն՝ բեկոր մը լոյս...

Տէ՛ր օրհնէ գրիչն իմ սիրագեղ,
Պուտ մը անուշ սիրտ խտացնէ,
Բեկոր մը խիղճ մաքուր, արդար,
Գերէ սիրտերն՝ յոյս սփռփարար...

Ինչ որ ունիմ որպէս խոհ, յոյզ,
Ես կ'ընծայեմ սիրայորդուն,
Տէ՛ր օրհնէ զայն լուսահամբոյր,
Որպէս նշխար հաց կենսատու:

Բերքս ըլլա՛յ աղօթքի պէս,
Միրտէս բխած, սիրտին դաչող,
Միրտերն իրար ծիածանող
Շո՞ղ մը վտիտ բայց սիրաջերմ
9/3/2017

.....

ԻՆՉՊԷ՞Ս

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս գլուխ հանել այս աշխարհի դաւերէն,
Երբ սեւն՝ սպիտակ, սպիտակը՝ սեւ կոչեն մարդիկ, ի՞նչ ընել:

Կը բարբաջեն իրաւունքն ստապատիր խօսքերով,

Բայց կը քծնին զօրաւորին, աղուէսական հաշիւով:

Ոյժն է միայն որ կը խօսի եւ իրաւունք պահանջէ,

Ո՛վ մարդկային արդարութիւն, դուն մեռած ես, ի՞նչ ընել:



Գազանի պէս կը յօշոտեն հողդ, տունդ, օճախդ շէն,

Ասիկա մերն է,- բարբառին անգթօրէն, ի՛նչ ընել:

Հանէ սուրդ իր պատեանէն, փայլեցուր զայն, ա՛զգ լուսէ,

Շաչեցուր զայն բիրտ ոստիսին որ փախուստ տայ սուրբ հողէդ:

Հերոսներուդ ձեռքով միայն ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ պարտադրես,

Մնացեալը փուճ հեքիաթ է, ազգ իմ անգին, պիտ' գործես:

Մի՛ սպասեր ուրիշներէն արդարութիւն, իրաւունք,

Բռունցքով հզօր պիտ' նուաճես եւ կամքովդ աննկուն:

Լոկ այն աստէն հզօրները հաշուի նստին քեզի հետ,


Երբ որ տեսնեն ՄԻԱՍՆԱԿԱՆ ոյժդ հզօր ու վսեմ:

12/7/2024

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (951-1003).

ՀԱՅԿԵԱՆ ՀԱՆՃԱՐԻՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՃԱՃԱՆՉՈՒՄԸ

ՆԱԶԱՐԵԹ ՊԷՐՊԷՐԵԱՆ



Մատենագիտական տուեալներու համաձայն՝ Մայիս 7ի այս օրը, 1074 տարի առաջ, լոյս աշխարհ եկաւ Հայկեան Հանճարի սրբազնագոյն ճաճանչումը հանդիսացող եւ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ անուն մականունով համաշխարհային ճանաչումի արժանացած, այլեւ սրբադասուած բազմաշնորհ ու մեծավաստակ ԲԱՆԱՍՏԵՂԾը:

«ՆԱՐԵԿ» անունով մեր ժողովուրդին կողմէ սրբացուած «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» անուն իր բանաստեղծական գործով՝ Նարեկացի ոչ միայն հայ գրականութեան «Վեհաշուք Արարատը» դարձաւ, այլեւ՝ Աստուածաշունչի կամ Սուրբ Գիրքի չափ, հոգեմտաւոր լոյսի ու սնունդի վարար աղբիւր եւ լուսաւոր փարոս մը եղաւ հայ ժողովուրդին համար՝ շուրջ երկու հազար տարիէ ի վեր:

Ամենայն Հայոց Բանաստեղծը՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ամբողջ հայ ժողովուրդին երախտագիտութիւնը կ'արտայայտէր, երբ «ՆԱՐԵԿ»ի առիթով ատենին կը վկայէր, թէ՛ «Այստեղ («Մատենան Ողբերգութեան» գործին մէջ) արդէն հայի լեզուն չէ, որ խօսում է, բերանը չէ, որ պատմում է, կրակուած սիրտն է, որ այրում է երկիրը բռնած, տանջուած հոգին, որ մոնչում է մինչեւ երկինք»:

*

**

Նարեկայ Վանքէն դուրս աշխարհ չտեսաւ եւ ճգնաւորութենէ զատ կեանք չճանչցաւ Գրիգոր Վարդապետ, բայց ի վերուստ իրեն շնորհուած հանճարի մտքով ու սրտով, այլեւ բոլոր զգայարանքներով՝ շօշափեց, պեղեց եւ վերժանեց մարդն ու աշխարհը, կեանքն ու անդենականը իմաստաւորող բոլոր ճշմարտութիւնները:

Մանաւանդ այդ բոլորը յաւիտենութեան յանձնեց բանաստեղծական այնպիսի՝ երաժշտութեամբ, յուզական այնպիսի՝ իրաւութեամբ եւ իմաստասիրական այնպիսի՝ խորութեամբ, որ իր ժամանակին շունչը դառնալով մէկտեղ՝ եղաւ բոլոր ժամանակներուն համար ԱՆԱՆՅ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆՅ ՊԱՏԳԱՄԱԽՕՍԸ:



Բնաւ ալ պատահական չէ, հետեւաբար, որ արդի հայ գրականութեան բոլոր մեծութիւնները, Խաչատուր Աբովեանէն մինչեւ Միամանթօ, Պետրոս Դուրեանէն մինչեւ Յովհաննէս Թումանեան, Դանիէլ Վարուժանէն ու Միսաք Մեծարենցէն մինչեւ Եղիշէ Չարենց ու Պարոյր Սեւակ, անվարա՛ն բոլորը Նարեկացի կ'ընդունին իբրեւ իրա՛ւ յոյգերու, խորագո՛յն ճշմարտութեանց եւ գեղարուեստական՛ արարումի մեծագոյն առաջնորդն ու վարպետը միանգամա՛յն:

Իսկ հայ մարդը ամենուր եւ բոլոր ժամանակներուն «ՆԱՐԵԿ»ը պահեց իր բարձին տակ, իբրեւ իր էութեան ամենէն հարագատ ու խորասոյգ վկայարանը՝ անոր մէջ փնտռելով ու գտնելով ոչ միայն հոգեկան մխիթարութեան եւ փրկութեան, այլեւ՝ մարմնական ապաքինման ու առողջութեան հրաշագոր բալասանը:

*

**

Վասպուրական աշխարհի Ռշտունեաց գաւառի ծնունդ էր Գրիգոր Նարեկացի՝ Բզնունեաց տոհմի շառաւիղ, որ լոյս աշխարհ եկաւ Վանայ Լիճի հարաւը գտնուող աննշան գիւղի մը մէջ, հոգեւորական եւ մտաւորական ընտանիքի մը յարկին տակ:

Հայրը՝ Խոսրով՝ արքեպիսկոպոս էր ու ծանօթ գրող:

Գրիգոր մանուկ տարիքին կորսնցուցած էր մայրը եւ դրկուած էր հօրեղբօր՝ Անանիա Վարդապետի մօտ, որ Նարեկայ Վանքի վանահայրն էր:

Ամբողջ իր կեանքը Գրիգոր անցուց Նարեկայ Վանքին մէջ եւ հոնկէ ալ ստացաւ իր ՆԱՐԵԿԱՅԻ անուանումը:

Բանաստեղծի յորդաբուխ յուզաշխարհով օժտուած եւ աստուածաբան-իմաստասերի ընդգրկուն գիտելիքով ու ճանաչողութեամբ զարգացած հեղինակութիւն էր Գրիգոր Նարեկացի, որ իր ժամանակի ուսումնական այդ կարեւոր օճախի՝ Նարեկայ վանական դպրոցի սիւներէն մէկը դարձաւ:

Հակառակ որ միայն 52 տարի ապրեցաւ Նարեկացի, բայց գրական եւ իմաստասիրական հարուստ ժառանգութիւն մը ընծայաբերեց հայ ժողովուրդի հոգեմտաւոր հարստութեան գանձարանին:

*

**

Նարեկացի նորարարական շունչով ու գեղարուեստական մշակումով յատկանշուող իր «ՏԱՂԵՆ»ով մուտք գործեց հայ գրականութեան անդաստանէն ներս:

Հայ հոգեւորական դասական գրականութեան մէջ իսկական յեղաշրջում կատարեց՝ հայրենի բնութեան գեղեցկութիւնն ու երաժշտականութիւնը բանաստեղծական կշռոյթի վերածող իր տաղերով ու գանձերով:

Ան յեղաշրջեց նաեւ հոգեւոր ճշմարտութեանց ու գեղեցկութեանց բանաստեղծական ընկալումը՝ մարդկայնացնելով Աստուածայայտնութեան ողջ խորհուրդն ու կրօնական պաշտամունքը, Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդ էակին ներաշխարհը բանի եւ երաժշտութեան վերածելով ու անդուլ ինքնամաքրման հունով զարգացնելով:

Այդպէ՛ս է, որ Գրիգոր Նարեկացիի «ՏԱՂԵՆ»ուն մէջ Աստուածամայրը խորհրդանշեց Գերագոյն Գեղեցկութիւնը. Աստուածամօր նուիրուած «Տաղ Վարդավառի»ն կը հանդիսանայ համաշխարհային գրականութեան գոհարներէն մէկը:

*

**

Բայց յատկապէս իր կեանքի վերջալոյսին՝ 1002 թուականին աւարտած «Մատեան Ողբերգութեան» երկարաշունչ բանաստեղծութեամբ՝ Գրիգոր Նարեկացի յաւերժութիւնը նուաճեց, բոլոր ազգերու եւ լեզուներու գրականութեան գանձարանին տալով հանձարեղ



զլուխ-գործոց մը, որ մինչեւ մեր օրերը սքանչացումով ու յափշտակութեամբ կը համակէ ընթերցողներն ու գիտաշխատողները աշխարհի չորս ծագերուն:

«Մատեան Ողբերգութեան» բանաստեղծութիւնը կը կրէ իր ժամանակաշրջանի շեշտակի դրոշմը.

- Հայաստանի ու հայ ժողովուրդի կեանքին մէջ թուրանական ու մոնկոլական՝ սելճուքեան ասպատակումի եւ ւաւերումի, հոգեմտաւոր արժէքներու խորտակման ու խաւարման դարերը կը սկսին եւ, ահա, ճիշդ այդ ահաւոր անկումներու դարաշրջանին դէմ ըմբոստացման ինքնուրոյն՝ հայաշունչ պոռթկում է «ՆԱՐԵԿ»ը:

Նարեկացի անցաւոր ԽԱԻԱՐԻՆ կը հակադրէ յաւերժական ԼՈՅՍը, երկրաւոր կեանքի մեղքերուն եւ չարիքներուն կը հակադրէ հաւատքի գեղեցկութիւնն ու հոգիի ազնուացումը:

Ինքնախարագանման եւ ինքնամաքրման ամենէն իրաւ զգայնութիւնները լոյս աշխարհ կը բերէ՝ ուրուագծելու համար դէպի յաւերժական Լոյսին ու Գեղեցկութեան աղբիւրը առաջնորդող ՀԱՅՈՒ ՌԻՂԻՆ:

*

**

Նարեկացի իր «ՏԱՂԵՐ»ով ու «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՄԲ» անբաժան ընկերակիցը եւ առաջնորդող փարոսը հանդիսացաւ բազմաչարչար հայ ժողովուրդին՝ խաւարանիստ այդ երկարատեւ դարերու ամբողջ երկայնքին:

Իր ներշնչած Հաւատքի Ուժով եւ Հոգեմտաւոր Գեղեցկութեան ու Լոյսի անխառն պաշտամունքով՝ Նարեկացի դարերէն վեր բարձրացաւ ու Յաւերժի Ճամբորդին, Հայ Ժողովուրդին կտակեց ինքնապահպանման ու վերապրումի ամենէն հրաշագոր զենքերէն մէկը:

Նարեկայ Վանքը այսօր չկայ, քաներորդ դարասկիզբին վերջնականապէս քանդուեցաւ ինչ որ մնացած էր երբեմնի Հայկական Լոյսի այդ մեծ օճախէն ու փարոսէն:

Բայց «ՆԱՐԵԿ»ը կայ ու կը շարունակէ՝ շունչ եւ լոյս տալ հայ ժողովուրդի ինքնահաստատման յաւերժական երթին:

*

**

Հայկեան Հանճարի սրբազնագոյն ճաճանչումին՝ Նարեկացիի ծննդեան 1074րդ տարեդարձին նուիրուած յուշատետրի այս էջը կ'արժէ եզրափակել Հայկական Հանրագիտարանի հետեւեալ վկայութեամբ.

- «Նարեկացիի գլուխ-գործոցը «Մատեան Ողբերգութեան» երկարաշունչ բանաստեղծութիւնն է՝ բաղկացած 95 գլուխներէ (բանք), որոնցմէ իւրաքանչիւրը կը սկսի «Բ խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» տողով:

«Մատեան Ողբերգութեան» պոէմը հոգւոյ խորերէն բխած գրոյց է Աստուծոյ հետ: Զրոյց, ուր ներկայացուած են մարդկութիւնը պարուրած վիշտերն ու ցաւերը, կասկածներն ու համոզմունքները, մեղքերն ու խոստովանանքները, ինքնադատապարտման ու ինքնամաքրման ճամբով կատարելութեան հասնելու ձգտումը:

«ՆԱՐԵԿ»ի մէջ բանաստեղծը կը խօսի կեանքի ու մահուան, անկման ու փրկութեան մասին: Կը վերլուծէ մարդկային կեանքի անկատարութիւնը, ուրկէ եւ կը սկսին անոր ողբերգական ապրումներն ու տարակոյսները: Մարդ էակը կը կասկածի՝ մաքրագործուելով վեր բարձրանալուն, Աստուծոյ մերձենալուն, անբասիր դառնալուն վրայ, կը տարակուսի՝ որովհետեւ անոր մեղքերը աստիճանաբար կ'աւելնան շարունակ: «Այնուամենայնիւ, իր բոլոր մեղքերով հանդերձ, մարդը յոյս ունի եւ կը հաւատայ Աստուծմէ սպասուող փրկութեանը: Փրկութեան հասնելու միակ ճամբան խոստովանութիւնն ու զղջումն են, որոնց շնորհիւ մարդը կ'ազատագրուի սուտէն, կեղծիքէն, յանցանքներէն, սխալներէն, բազում այլ արատներէն եւ կը մաքրուի:




«Նարեկացիի հոգին լի է հաւատով առ Աստուած: Իր պոէմը Նարեկացի ձօնած է Աստուծոյ՝ Անոր մէջ տեսնելով գեղեցիկը, լաւագոյնը, կատարեալն ու անաղարտը: Նարեկացի կը հաւատայ, որ իր Մատենը կ'օգնէ մարդուն եւ սէր, ազնուութիւն ու բարութիւն կը սերմանէ մարդկանց հոգիներուն մէջ:

«Նարեկացիի գեղարուեստական մտածողութիւնը էապէս ազդած է հետագայ շրջանի, յատկապէս XII-XIII դարերու (Ներսէս Շնորհալի, Ֆրիկ) եւ XX դարու առաջին կէսի (Միսաք Մեծարենց, Սիամանթօ, Եղիշէ Չարենց) հայ բանաստեղծութեան վրայ:

«Անգերագանցելի է Նարեկացիի հայ գրականութեան մէջ իր ստեղծած տաղաչափութեամբ, բանաստեղծական անկրկնելի կշռոյթով եւ երաժշտականութեամբ, խօսքի տարերքով ու բառագանձով: Ան նաեւ, իբրեւ երաժիշտ, նոր շունչ ու կէանք հաղորդած է հայ միջնադարեան մասնագիտացուած երաժշտութեան, մասնաւորապէս անոր տաղերուն մէջ յաղթահարուած են շարականներու հին, տուեալ պատմաշրջանին համար իսկ արդէն հինգած ձեւերը»:

ՏԱՔՈՒԿ ԲԱՐԵՒ ՄԸ՝ ՀԱԼԷՊԷՆ

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ



Կիրակի ուշ երեկոյ էր, երբ հեռաձայնը կրկին խանգարեց սենեակիս լռութիւնը: Ըսեմ որ, ամբողջ օրուան ընթացքին, գատկուան շնորհաւորանքներու իրարայաջորդ զանգերը, տեսակ մը նոր գոյն բերած էին ապրումներու: Անոր համար, յաճախ թեթեւ երագներ լոյսին եկած էին, մաքուր տպաւորութեամբ, իբրեւ կէանքի խօսուն երեւոյթ: Վերջին հաշուով՝ յարգանքի նուիրական արտայայտութիւն: Ու բոլոր զանգերուն, նոյնանման մաղթանքներով, եւ ինքզինքս փնտռող տողերով, իրական, պարզ, հարազատ եւ ազնիւ, պատասխանած էի: Ուրախ էի:

Իսկ հիմա...ահա այս նոր զանգը, որ ծննդավայրէս էր, եւ բոլորին ծանօթ՝ Հոփիէն:

Ընկերուհի Հոփիը մեր պատանեկութիւնը, եւ

նոյնիսկ մեր վաղ երիտասարդութիւնը օրօրած քաղաքէն է, ազգային յանձնառութեամբ ապրող օրինակելի հայուհի մը, բոլորին նման եւ բոլորէն տարբեր:

Ըսի չէ՛ Հոփիը մեր Հալէպէն է... այն քաղաքէն, ուր միայն հոն ծնողը, ապրողը, կամ մեծցողը գիտէ այդ դարերու տարիք ունեցող քաղաքին ներքին կախարդանքը: Ու այս պատմական քաղաքին հանդէպ մեր ունեցած սէրը, անոր գրաւչութիւնը, անոր հետ մեր անկեղծ կապը, եւ մանաւանդ հիւրասէր նկարագիրը, մեզ, ուր որ ալ ելլանք, միշտ արթուն պահած է ու կը պահէ:

Եւ այս օրերուն, հակառակ իր ստացած քաղաքական հին ու նոր, ներքին եւ արտաքին տեսակաւոր ծանր եւ վախազոյու հարուածներուն, ընկերային եւ տնտեսական ցնցումներուն, այդ մեր գաղութը, պատիւ իրեն, տակաւին կը պահէ ազգային իր



ջերմութիւնը ու նոյն ոգիով ալ կը շնչէ: Անկեղծօրէն, ինծի համար մեր Հալէպն ու ամբողջ գաղութը, ամէնօրեայ մտածումներուս մաս կազմած է:

Ու կրկնութեան գնով ըսեմ, որ հո՛ն, սփիւռքի այդ մայր գաղութէն ներս, ազգային երազանքներով եւ ալեկոծումներով լեցուն հայու կեանքը, մեզ բոլորիս անխտիր, իբրեւ հաւաքական ապրում, դիմագիծ եւ ինքնութիւն տուած է, եւ տակաւին: Այլ խօսքով, անտեսանելի, ե՛ւ գեղեցիկ, ե՛ւ կախարդական կապով մեզ կապած է, ու մեզ հաղորդ պահած իր անունին:

Հապա ընկերուհի՞ս՝ Հռիփը...: Արդ, ո՞վ չի ճանչնար զինք: Հարազատ, գիտակից եւ պարտաճանաչ ժողովական մը, որ իր այդ ապրած Հալէպէն ներս, զանազան միութիւններու մէջ տարիներու իր խոնջենքով արդէն դարձած է օրինակելի մը: Ու ան, ամէն առիթով, ամառ-ձմեռ, նոր տարի կամ տօնական օրեր, տարեդարձ կամ ոչ, կը յիշէ մեզ եւ հեռաձայնով իր բարի մաղթանքները կը փոխանցէ:

Իսկ հիմա, այս բոլորէն ետք, չեմ գիտեր՝ ուրկէ՞ սկսիմ:

Ինծի համար Հռիփին այդ ժամու հեռաձայնը, վերապրելու, մտածումներս սահմանող, ապրումներս ամփոփող, եւ յիշողութիւններուս աղբիւրը առաջնորդող ձայնն էր: Ու մենք երկուքով, հակառակ անոր որ իրարմէ հազարաւոր մղոններ հեռու նստած էինք, այդ երեկոյ, եւ ինքնաբերաբար ու ինքնաձիւն, կարօտով զիրար տեսանք:

Բարեւեցինք: Մաղթանքներ փոխանակեցինք: Ու անհատնում հարցումներու շարանով զրուցեցինք: Կը կարծէի, թէ անձնապէս թանկագին իրեր հաւաքողի դերին մէջն էի:

Հաւատացէ՛ք, այս տողերը պարզապէս մտքիս հանգիստ եւ խաղաղ լճակը ալեկոծող գրիչէս փախած աղաղակներ չեն, այլ՝ միտքս եւ հոգիս ջերմացնող պահերէն ծնունդ առած խօսքեր, որոնք լաւ տրամադրութեամբ հաւաքեցին մտքիս թելերը, եւ զանոնք պերճախօսութիւնս բազմացուցին: Ուղղակի հիացում:

Ու երկար խօսեցանք:

Խօսեցանք յստակ, յաճախ տխուր բառերով, եւ նոյնքան ալ ուրախ, եւ յոյսի թելերէն կախուած խօսքերով, որոնք մտածումի նոր ակօսներ բացին մեր մտքերուն մէջ:

Խօսեցանք ասկէ-անկէ, ե՛ւ էականին, ե՛ւ նշանակալիցին մասին, միաժամանակ վարակիչ ապրումներով մատնանշելով կեանքի անստգութիւնն ու անորոշութիւնը:

Ու ինքնաբերաբար համրուած վայրկեաններու մէջ ապրեցանք քաղցրութիւնը մեր յուշերուն ու մանաւանդ մեր ծննդավայրի ներկայ կեանքի ելեւէջներուն մասին: Անստգութիւն՝ եւ տակաւին շատ ու շատ «բաներ»: Խօսեցանք՝ անհագ ծարաւով եւ կարօտի գոյներով:

Հանդարտ եւ համով ու նոր լոյսին բացուող բառերով իր արտայայտութիւններուն, Հռիփի ձայնին մէջ տեսանելի էր յոյսի մաքուր երանգները:

Ու ամէն բան, կարծես հեռաւոր երազի նման թելեր առած ըլլար:

Այսպէս՝ իրարայաջորդ յուշեր, ժողովական կեանքի տեսարաններ, մեծ ու փոքր դէմքեր, մշակութային եւ ընկերային նոր եւ հին ծրագիրներ... եւ...եւ...ուրիշ շատ բաներ:

Ասոնց վրայ կ'աւելնային յուզումներ, դրուագներ, հին ու նոր ապրումներ, պահեր եւ պատահարներ, որոնք օճառի պղպջակի մը նման յանկարծ ծնունդ կ'առնէին, զիրար կը հրէին, մեր երկուքին մէջ տարածուող խօսակցութիւնը կը լեցնէին, եւ ապա «պայթելով» կ'անհետանային, կարծես կամովին տեղ տալու նորաձիւն այլ «պղպջակներու», որոնք իրենք իրենց քաշքշելով կը շատնային ու կրկին անգամ կը գրաւէին մեր խօսքերը, յիշատակելի դարձնելով պահն ու ստեղծուած մթնոլորտը:

Մէկ խօսքով, ներքին գեղեցիկ ու ջերմ վայրկեաններու համրանքով ապրում մը, ուր մեր երկուքին յուշերը ազատօրէն թռիչքներ կ'առնէին, երազին եւ յոյսին փաթթուած բառերով, վերապրումի եւ վերանորոգման պահեր ստեղծելով:

Հռիփին եւ մեր քաղաքին մասին տակաւին շատ բաներ կան գրուելիք: Ազնիւ, հպարտալի անկեղծ եւ արդար, որոնք պարզ բառերով կարելի չէ արտայայտել:

Գրեթէ երջանիկ էի:

<http://www.kantsasar.com/news/55377-2/>

ՓՇՈՏ ՀԱՐՑ ՄԸ՝

ՀԱՅԱՏԱՌ ՀՐԱԻՒՐԱՏՈՄՍԵՐՈՒ ՌԻՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Իմ սիրելի ընթերցողները թերեւս գայթակղին կամ ընդվզին՝ տեսնելով որ «փշոտ հարց»-ի վերածեր եմ ուղղագրական երեւոյթ մը:

-- Է՛հ, այս տեսակ «մանրուք»-ներով կ'արժէ՞ զբաղիլ, երբ մեր ազգին ու հայրենիքին դիմաց ցցուած են ճակատագրական լեռնակուտակ հարցեր, - պիտի առարկեն ոմանք:

Այո՛, իրաւացի են այդպէս մտածողները: Մա շրջանին այնքա՛ն շատ են մեր

ազգային, հայրենական ու գոյութենական մարտահրաւերները, որ ուղղագրական ճղճիւմ երեւոյթները հեզնական անցողիկ ժպիտ մը կը յարուցեն միայն...:

Եւ սակայն, գո՛նէ սփիւռքեան համայնքային ու մշակութային մեր առօրեային մէջ «աչք ծակող» երեւոյթ է սխալաշատ ուղղագրութեան ու սխալաշատ շարահիւստութեան ընդհանրացումը ո՛չ միայն դիմատետրային էջերու վրայ, այլեւ պաշտօնական հաստատութիւններու պաշտօնական հաղորդագրութիւններուն, մամուլով հրապարակուած միութենական զեկոյցներուն եւ մինչեւ իսկ քանի մը ընթացիկ բառերով շարադրուած ծանուցում-հրաւիրագրերու մէջ:

Այսօր պիտի առանձնացնեմ միայն վերջին պարագան՝ հրաւիրատոմսերու ուղղագրութիւնը:

Վերջին տասնհինգ-քսան տարիներուն հայերէն լեզուն այնքա՛ն նահանջեց սփիւռքի տարածքին, այնքա՛ն անտեսուեցաւ կամ արհամարհուեցաւ, որ այսօր դէմ-յանդիման ենք ողբերգական կացութիւններու: Այսօր, մեր միութենական, ազգային, եկեղեցական ու դպրոցական քանի մը տողնոց պարզունակ ծանուցումներուն կամ հրաւիրագրերուն մէջ իսկ ուղղագրական սխալները կը վիստան, ա՛չք կը ծակեն...: Ամավերջի հանդէսի մը ծանուցումը, թատերական ներկայացումի մը յայտարարութիւնը, վարժարանի մը տեսչութեան կողմէ ծնողաց ուղղեալ բացատրագիր մը, առաջնորդարանի մը կողմէ տասը տողնոց լրատուութիւն մը, մշակութային միութեան մը սարքած մէկ ձեռնարկին ծանուցումը եւ այլն, եւ այլն, բոլորի՛ն մէջ ալ ուղղագրական սխալները անպակաս են...: «Հօ»-ի ու «յի»-ի սխալներ, «է»-ի ու «եչ»-ի շփոթներ, շարահիւստական սխալ ձեւակերպումներ, չակերտի ու փակագիծի շփոթ, կէտադրական անընդունելի կիրարկումներ եւ այլն:

Ի՞նչ պատահեցաւ մեզի: Դեռ մինչեւ մօտիկ անցեալ՝ բժախնդրութիւն կար տպագիր խօսքի նկատմամբ: Միութենական պատասխանատուներ իրենց պատի՛ւը կը նկատէին իրենց հրապարակած հրաւիրագիրը, չէին արտօներ որ այնտեղ վրէպ մը սպրդի:

Հիմա՛ :

Հիմա, ո՛չ միայն կատարեալ անփութութիւն կը տիրէ այս մարզին մէջ, այլեւ՝ ամէն ոք ԼՈՒՌ համակերպած ըլլալ կը թուի կացութեան:



Պետք է խոստովանիլ նաեւ, որ մեր ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը ո՛չ իսկ կ'անդրադառնայ իր կարդացած ծանուցագրին սխալագրութիւններուն...: «Կաթսան գլտորեր ու գտեր է իր կափարիչը», կ'ըսէ իմաստուն առածը:

Վերջերս, մեր թերթերէն մէկուն մէջ երեւցած ծանուցումի մը շարահիւսակն իսայտառակ պատճէնը նոյնութեամբ արտագրեցի դասարանիս գրատախտակին վրայ ու իմ ուսանողներէն խնդրեցի որ մատնանշեն սխալները: Ո՛չ մէկ աշակերտ յաջողեցաւ շտկել սխալները: Ընդհակառակն, այդ փորձը կատարողները... կրկնապատկեցին սխալներուն թիւը:

Քանի մը օր առաջ ալ՝ Վահան Թէքէեանի ձօնուած բանախօսական ձեռնարկի մը (Պէյրութ) հրաւիրատումսին վրայ կը կարդայի. «Թէքէեանի մահուան 80-րդ յիշատակում»...: Ի՞նչ հայերէն է այս...: Տոմսին պատճէնը շարադրողները կ'անդրադառնա՞ն արդեօք, թէ ի՞նչ կը նշանակէ «մահուան 80-րդ յիշատակում»: Այս ձախորդ նախադասութիւնը պարզապէս կը նշանակէ, թէ նախապէս 79 անգամ յիշատակուեր է Թէքէեանի մահը ու հիմա ալ պիտի յիշատակուի 80-րդ անգամ ըլլալով...: Հայերէն գիտցող չէ՞ մնացեր Պէյրութի մէջ:

Երեւոյթը ցոյց կու տայ, որ մեր մայրենի լեզուն զառիթափի մը վրայ է: Ուրկէ՞ կու գայ այս առատ ու ամօթալի սխալագրութեանց երեւոյթը: Պատասխանը մէկ է. մայրենի լեզուն լաւ չճանչնալու իրավիճակէն: Եւ ասիկա համընդհանուր, համատարած երեւոյթ է այլեւս, դժբախտաբար:

Ենթադրենք, որ մեր մշակութային միութիւններէն մին երգահանդէս մը պիտի սարքէ: Ո՞վ պիտի գրէ ծանուցագրին պատճէնը: Հաւանաբար՝ միութեան ատենադպիրը, որ սկզբունքով՝ տիրապետած պէտք է ըլլայ իր մայրենիին տարրական օրէնքներուն: Բայց այդ ծանուցագիրը կը գրուի... սխալներով, ատենապետն ալ «աչք մը կը նետէ» անոր վրայ ու... ձեռագիրը կը յղուի տպարան: Դեռ յոյսի նշոյլ մը կայ սակայն՝ թէ սխալները կրնան սրբագրուիլ տպարանին կողմէ: Գոնէ կ'ակնկալուի, որ տպարանին գրաշարը նշմարէ զանոնք ու սրբագրէ: Սի՛ն յոյս, սի՛ն ակնկալիք:

Նոյն գնացքով, շարուածքին Ա. փորձ-տպագրութիւնն ալ լուրջ վերանայումի չ'ենթարկուիր ու այսպէս՝ տոմսերն ու հրաւիրագրերը, 3-4 պատասխանատուներու բովէն անցնելէ ետք՝ լոյսին կու գան սխալներով...:

Ընթերցողներս հարց կրնան տալ, թէ ի՞նչ լուծումներ կան այս «փշոտ» հարցին բարւոք ու արագ դարմանումին համար:

- Երեք բան կ'առաջարկեմ.
- Ազգային, մշակութային, մարզական, երիտասարդական, բարեսիրական, եկեղեցական ու այլ մարզերու վարչական կազմերուն մէջ անպայման ներգրաւել հայերէնի ուղղագրութեան ու քերականութեան գիտակ մէկ-երկու անձեր ու անոնց պատասխանատուութեան յանձնել հրաւիրագրերու խմբագրումը:
- Զանազան թեմերէ ներս գործող Ուսումնական Խորհուրդներու (կամ նմանօրինակ մարմիններու) կից հաստատել մասնաւոր քարտուղարութիւն մը՝ հմուտ ու ձեռնհաս պաշտօնէայով մը,-- օրինակ՝ հանգստեան կոչուած հայերէնաւանդ ուսուցչուհի մը,-- ու հրաւիրագրերու, հաղորդագրութեանց կամ դիմատետրային կարճառօտ լուրերու խմբագրումը վստահիլ անո՛ր, համագաղութային համաձայնութեամբ ու գործակցութեամբ:
- Կազմակերպել «Ծանուցումներու պատրաստութեան ու խմբագրման» երկօրեայ դասընթացք մը, միութենական գործիչներու, գործավարներու, կրթական պատասխանատուներու, ատենադպիրներու, գրաշարներու եւ հետաքրքրուողներու մասնակցութեամբ: Հոն, կենդանի օրինակներ տալով, բացատրել ճիշդ ու անսխալ հրաւիրագրեր կամ լուրեր պատրաստելու կանոնները, մատնանշել ընթացիկ սխալներ, պարզել նիւթին յարակից ամէն մանրամասնութիւն:
- Այսքա՞նն ալ իրագործելու կարողութիւն չունինք:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

("Արարատ" երկօրեայ)

ԱՆՇԱՆՕԹՈՒՀԻՆ

(ԽՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ)



Միտքերուն թելը զինք տարա՛ւ, տարա՛ւ դէպի առօրեայ կեանքի փոքր ու մեծ խնդիրները, որոնք այնքան շատ էին, խճճուած, բարդ ի բարդ...

Յաճախ կը պատահէր որ իր արտայայտած կարծիքը կամ տեսակէտը տուն տար բուն հայհոյախօսութեանց, ցեխարձակումներու, ամենէն լկտի լուտանքներու...ի տես բոլորին, դիմատետրի էջերուն վրայ մասնատրապէս: Անոնցմէ մէկը դրոշմուած մնաց իր յիշողութեան պատատին վրայ, չես գիտեր ինչո՞ւ: Թերեւս որովհետեւ ամենէն նողկալին էր եւ առիթը այնքան բարենպաստակ, շինիչ կամ կառուցողական տեսակէտի մը արտայայտութիւնը:

Ուսուցիչի մը կուսակցական կամ կուսակցամէտ հրապարակային արտայայտութիւններուն արձագանգած էր, արձանագրելով որ հայեցի կրթութիւնը պէտք է ըլլայ համահայկական,

ակնարկելով որ տուեալ ուսուցիչն ալ համապատասխան վարք պէտք է ցուցաբերէր իր հրապարակային ելոյթներուն մէջ: Այդքան: Օ՛, ինչ մեծ փոթորիկ փրթած էր: Քանի մը վայրկեան ետք, հայհոյանքներու տարափը սարսռեցուց զինք: Նոյն տարափը շարունակուեցաւ յաջորդ օրն ալ, նոյնիսկ իր էջին վրայ, ուր բանաստեղծութիւններ տեղադրած էր: Աստուած իմ, մտածեց, ի՞նչ էր պատահածը: Անձանօթ անուններ ամենէն աղտոտ, ամենէն գռեհիկ բառերով կը յարձակէին իր էջին վրայ:

Սա բանավէճ չէր: Բանավէճը տարբեր կարծիքներու առողջ եւ քաղաքակիրթ բախում է, որմէ անպայմանօրէն կը ծնին նորանոր միտքեր: Սա ուղղակի բանաւոր ահաբեկում էր: Կարելոր դաս մը առաւ: Երբէ՞ք եւ երբէ՞ք չբանավիճիլ մարդոց հետ, որոնք այդ մակարդակը չունէին եւ միայն հայհոյանքի լեզուն գիտէին եւ ոսկրացած ու քարացած էին իրենց նեղ-կուսակցական թէ այլ կաղապարներու մէջ: Նոյնիսկ տեսակէտ չյայտնել հոն ուր միայն կարծրատիպերը կը տիրէին եւ արդիւնքը հայհոյանքներու շարանը կրնար ըլլալ...

Յետոյ դառնօրէն խորհրդածեց որ մենք ընդհանրապէս իրարու հետ բանավիճելու, զիրար լսելու առակ չէինք ընդհանրապէս: Ամէն ոք ի՞րը կը պնդէր յանկերգի պէս: Սեփական սխալը ընդունիլը չտեսնուած բան էր, քանի որ ատիկա կը նկատուէր զիջում մը սեփական արժանապատուութենէն: Իր բառարանին մէջ, սակայն, սեփական սխալը ընդունիլը մեծութիւն էր, անիկա առիթ էր սխալը ուղղելու, դասեր քաղելու եւ յառաջդիմելու: Եւ ո՞վ կրնար պնդել թէ ինքն էր բացարձակատէրը ճշմարտութեան: Կը մտածէր որ եթէ ամէն մարդ չընդունէր իր սխալը, ան ի վերջոյ պիտի յայտնուէր կրկնուող սխալներու գորշ ճահիճին մէջ: Ընդհանրացնելով երեւոյթը, խորհեցաւ որ մեր պատմութիւնը վկան էր գուցէ



այս տխուր իրականութեան: Իւրաքանչիւր մարդ մեղադրեր էր ուրիշը կատարուածին մէջ եւ ո՛չ երբեք ինքզինք, Խորենացիին օրերէն մինչեւ հիմա... Իսկ ազգեր մեծ կ'ընծայուին, երբ կ'ընդունին գործուած սխալին կամ նոյնիսկ պարտութեան մէջ սեփական պատասխանատուութիւնը եւ կը փորձեն ուղղել զայն:

Կը դիտեր շուրջի բնութիւնը եւ ալեկոծ սիրտը քիչ մը հանդարտութիւն կը գտներ անոր այլազան տարրերուն ներդաշնակութիւնը նկատելով...

Միտքը յետոյ թռաւ բոլորովին այլ թեմայի վրայ: Անդրադարձաւ հայ կեանքի Մեծերուն, որոնք ուղի ցոյց տուած էին, իրենց ամբողջ կեանքը նուիրել էին բեկոր մը լոյս ճառագայթելու մշուշապատ մթնոլորտին մէջ... Անոնք շատ անգամ սխալ հասկցուել էին, հալածուել, նոյնիսկ դատաւիտուել էին սոցիալ ամբոխին կողմէ, բայց շարունակել էին իրենց սուրբ առաքելութիւնը: Օրինակներ թուեց մտքին մէջ: Նոյնիսկ մեծն Կոմիտասը, Չարենցը, Մեծարենցն ու Դուրեանը սխալ հասկցուել ու հալածուել էին այս կամ այն ձեւով... Քաւ լիցի, ո՛չ մէկ համեմատութիւն ըրաւ այդ մեծութեանց հետ: Բայց օրինակը դաստիարակիչ էր, մտածեց:

Դիտեց իր շուրջի պտղատու ծառերը, ականջ դրաւ թռչուններու երգին: Բնութիւնը, մտածեց ան, ամէնէն սփոփարար բալասանն է մարդ էակին ցաւատանջ մտորումներուն: Հարցադրումներ ծագեցան մտքին մէջ: Միթէ՞ ծառերը իրենց պտուղներուն կամ զովաշունչ ստուերին համար գնահատանքի կը սպասէին: Միթէ՞ թռչունները իրենց գեղգեղանքին համար վարձք ու հատուցում կ'ակնկալէին: Անոնք կը կատարէին ա՛յն ինչ որ իրենց էութիւնը կը թելադրէր, կամ ա՛յն ինչ որ կը բխէր իրենց ներքին բնագոյնէ: Նոյնը կը վերաբերէր մարդ էակին՝ ի կատար ածել իր առաքելութիւնը այս աշխարհիս երեսին եւ ոչ ի՛նչ, ոչ ի՛նչ ակնկալել: Յայնժամ, մտորեց ան, մարդ էակն ալ երջանկութիւնը պիտի գտներ նոյնինքն իր գործի կատարումին մէջ, եւ անկախ պիտի ըլլար այլոց նախատինքնէն կամ զովասանքնէ: Ներքին գոհունակութիւնը պիտի ըլլար իր գերագոյն գնահատանքը: Իսկ կա՞ր երբեւէ աւելի մեծ երջանկութիւն, քան մտքի, հոգիի, խղճի ու գործի հաշտ ու համերաշխ ներդաշնակութիւնը: Մա չէ՞ր բուն ազատութիւնը, մտմտաց:

Չարագնետով իր խորհրդածութիւնները, կարեկցանք զգաց բոլոր այն մարդկանց հանդէպ, որոնք միշտ կը գանգատէին թէ այսինչը կամ այնինչը չէր գնահատեր իր աշխատանքը, թէ ի գուր էին իր գոհողութիւնները, իր վատնած ժամանակը:

Օ՛, ի՛նչ լաւ պիտի ըլլար, եզրայանգեց ան, եթէ բոլոր մարդիկ կատարէին իրենց աշխատանքը ամէնէն լիարժէք կերպով՝ անսպառով իրենց ներքին ձայնին կամ խղճմտանքին միայն: Վստահաբար, աշխարհ շատ աւելի հաշտ ու համերաշխ վայր մը պիտի ըլլար բոլորին համար ալ:

Դարձեալ դիտեց Մայր բնութիւնը եւ հոգին շատցաւ, ընդարձակեցաւ, ուզեց գրկել զայն իր երկու թելերով, սեղմել իր կրծքին, լսել անոր տրոփիւնը եւ զայն ներդաշնակել իր սրտի տրոփիւնին հետ: Համակ տիեզերքն ալ գուցէ հաստատուած էր այս մեծ ներդաշնակութեան սկզբունքին վրայ, խորհեցաւ ան: Արեւ, լուսին, աստղեր, տարուան չորս եղանակները... բոլորը, որոնք միշտ ալ իրեն խորունկ սքանչացման պահեր կը պարգեւէին, ՄԵԾ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ տարրերն էին եւ միեւնոյն այդ օրէնքը կը թելադրէին մարդ արարածին: Երանութեան խորունկ զգացում մը պատեց հոգին եւ փառք տուաւ Բարձրեալին որ կար, կ'ապրէր գէթ որպէս աննշան մի հիւլէ այս անիմանալի տիեզերքին մէջ:



Տիեզերք՝ ուր սուտ ու փուճ խօսքերը ո՛չ մէկ նշանակութիւն ունէին եւ վայրագ հողմին նման անհետ կը կորչէին...Իսկ եթէ աւերածութիւններ պատճառէի՞ն, հարցադրեց: Եւ ինքն իրեն պատասխանեց. –Տիեզերքի անհունութեան մէջ, անոնք աննշան կէտ մ'իսկ չէին որոշապէս: Եւ անձնատուր եղաւ այդ մեծ տիեզերական ներդաշնակութեան խոկումին ու վայելքին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

30 Մարտ 2025

ԱՎՆԹԱՐԹՆԵՐ



Հայ ըլլալը դժուար բան է, մաքառիլ ու պայքարիլ է, երբեմն գլուխը պատին տալ է, մորմոքիլ բայց ժպտիլ է, ցաւը կուլ տալ ու խնդալ է, ներքին կրակով մղկտալ է, ներքին լոյսը վառ պահել է, միշտ յուսալ ու հաւատալ է: Հայ ըլլալը ոգի ու կամք է, թոյլք ու սլացք է, հայ ըլլալը առեղծուած է:

.....

Բոլոր ժամանակներուն ալ, ճիշդը խօսողը «պատժուեր է» եւ կարելոր չէ թէ ի՞նչ տեսակ պատիժ են սահմաներ անոր համար: Եւ հակառակը՝ իշխանութեանց կամ ջոջերուն քծնողն ու համակերպողը «վարձատրուեր է» կա՛մ պաշտօնով, կա՛մ նիւթականով, կա՛մ պարզեւատրումով...Շատ հազուադէպ է որ վերեւներուն չքծնողը գնահատուի ըստ արժանւոյն...Բայց կա՛յ աւելի մեծ գոհունակութիւն, քան արդար խղճի անդորրն ու վարձատրութիւնը: Ես ամէն տեսակ պաշտօն, դիրք եւ պարգեւատրում պիտի չփոխանակէի ԱՐԴԱՐ ԽՂՃԻՆ հետ...

.....

Ինծի համար արդարութիւնը, ճշմարտախօսութիւնը վեր են բարեկամութենէն, ամէն տեսակի շահերէն, դիրքերէն ու պաշտօններէն...Կան անսակարկելի, գերագոյն արժէքներ, որոնց համար կ'արժէ նոյնիսկ մէն-մենակ, առանձին մնալ այս աշխարհիս երեսին, բայց խիղճդ մնա՛յ մաքուր ու անբիծ, այլապէս գուցէ ունենաս կեղծ բարեկամներ, բայց կորսնցնես սեփական հոգին:

.....

Իրաքանչիւր հայ անհատ հայոց պատմութիւն է...իր նախնեաց հետ կապուած ինչ-որ յուշի ու յիշողութեան շտեմարան...դպրոցական գրասեղաններէն իր մէջ ներծծուած ցեղասպանութեան արհաւիրք, վերապրելու կամք, հայ մնալու եւ հայ ապրելու աննկուն կորով, աննահանջ ոգի, որոնց չի կրնար դաւաճանել ան երբե՛ք, քանզի դաւաճանողը կը մնայ առանց ինքնութեան եւ արժանապատուութեան...Սա հայու ճակատագիր է:



.....

ՀԱՅՈՒՆ ՎԵՐԱՊՐՈՒՄԸ լոյսին յաւերժացումն է մութին ու խաւարին դիմաց...Բարիին յաղթանակն է չարին եւ չարեաց ուժերուն դէմ...Հոգիի որակի անշեղ յարատեւումն է դարե- դար...Ոգիի անկոտրում թոյլչքն է լուսեղէն,..Կեանքի յաւերժական երթն է վսեմ, գոր կարելի չէ խափանել որեւէ մէկ ուժով մարդկային:

.....

ՀԵՌՈՒ ՄՆԱԼ ԿՈՒՌՔԵՐԷ...Մեծերը կարողալ շատ հոգեշահ եւ մտաշահ է անկասկած...Անոնցմէ իւրաքանչիւրը նոր մտահորիզոններ կը բանայ տեսադաշտիդ դիմաց, նոր խորութիւններ կը յայտնաբերէ, նորովի մտածել կու տայ հի՛ն-հի՛ն բաներու մասին...Բայց սխալ պիտի ըլլար զանոնք կուռքի վերածելը, որքա՛ն ալ ՄԵԾ ըլլան անոնք: Միշտ պիտի հարցադրել, քննել ու վերաքննել, վերլուծել, փորձարկել եւ կրկին փորձարկել...: Կուռքի վերածելը ճշմարտութիւնը բացարձակացնել կը նշանակէ, ապա զայն քարացնել եւ կաղապարի վերածել, մինչդեռ ամէն խոհ ու միտք՝ ՄՏԱԾՈՒՄԻ ԱԶԱՏ ՇԱՐԺՈՒՄ կ'ենթադրէ:

.....

ԵՍ-ի նեղ պատեանը, ԵՍ-ի ստրկացնող կիրքերը, ԵՍի գոռոզամտութիւնը կամ մեծամտութիւնը, ԵՍ-ի սխալ հասկցուած արժանապատուութիւնը, ԵՍ-ի նախանձը...Ասոնք չէ՞ն այն պատնէշն ու պատուարը, որոնք կ'արգիլեն որ ԵՍ-ը կարենայ ՄԵՆՔ դառնալ, որ ԵՍ-ը ձուլուի ՄԵՆՔ-ի մէջ, որ կարենանք յաղթել ԵՍ-ի նեղ ցանկութիւններուն, նեղմտութեան., կարենանք համայնանալ, ընդարձակուիլ, տարածուիլ, հարստանալ...ԵՍ-ը մեր բուն, խորքային ԵՍ-ին մեծագոյն թշնամին է:

.....

Օտարը մեղադրելը՝ սեփական պատասխանատութենէ խուսափիլ է գերազանցօրէն...: Օտարը կը գործէ ելլելով միայն ու միայն իր սեփական շահերէն, եւ ինչո՞ւ ան պիտի նկատառէ հայութեան ու Հայաստանի շահերը: Նման բան չկայ քաղաքականութեան մէջ: Մենք եւ միայն մենք ենք մեր պատմութեան պատասխանատուն...Երախայական տհասութիւն է օտարին ապաւինիլը, զայն մեղադրելը, զայն պատասխանատու համարելը...Հասուննալու եւ իմաստնանալու պահն է, սիրելի ժողովուրդ...

.....

Ջոհի կերպարէն դուրս պիտի ելլենք...կրաւորական ողբացողէն դէպի պայքարող ու պահանջատէր հաւաքականութեան, ուրիշներէն ողորմութիւն, խաղաղութիւն հայցողէն դէպի սեփական հաւաքական ոյժին ապաւինողի, համակերպող ու յարմարող հոգեբանութենէն դէպի նախաձեռնող եւ դէպքերուն վրայ ազդելու ատակ ազգի ու հայոց երկրի...

.....



Ուրիշէն արդարութիւն պահանջելէ առաջ, դուն պիտի ըլլաս արդար՝ դուն քեզի, մօտիկիդ թէ հեռաւորիդ նկատմամբ...Իսկ ՄԵՆՔ արդա՞ր ենք իրարու հանդէպ՝ սփիւռքի կամ սփիւռքներու մէջ եւ ազատ անկախ Հայաստանի Հանրապետութենէն ներս...թէ՞՝ հայ կեանքը կը հեւայ անարդարութեանց ճնշող, ճզմող բիրտ թաթին տակ...Անաչառ աչքով երբ կը դիմեմ հայ կեանքը, ցաւով կը նկատեմ որ մեծաւ մասամբ անարժանները կը պատուուին, մեծարանքի կ'արժանանան, մանաւանդ եթէ ինամի-ծանօթ-բարեկամ շրջագիծին մէջ են, իսկ անդին արժանաւորը կ'անտեսուի...Սա պատիւ կը բերէ արդեօ՞ք հայ կեանքին, թէ՞ զայն կը նսեմացնէ, կ'որակազրկէ...ՈՐՈ՞ՒՆ ՀՈԳԸ: ՍԱ Է ՅԱԻԱԼԻՆ:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ծաղկէ ծաղիկ, նեկտարի պէս, հիւթեղ բառեր եմ հաւաքեր
Հայ դպրութեան ոսկի հանդէ՛ն, արեւայորդ պարտէզներէ՛ն,
Որ տող հիւսեմ մեղրի նման, ընթերցողիս զայն մատուցեմ,
Երջանկանամ լոկ տեսնելով մեղրին համը ճաշակողներ...

.....

Նիւթի, ինչքի սարդոստայնին, պիտ' կարենաս զգալ հոգին,
Խելացնոր աղմուկին մէջ, պիտ' կարենաս դուն միտք անել
Եւ վանդակի ճաղերուն մէջ, պիտ' կարենաս ազատ ճախրել,
Որ մարդ մնաս, ճշմարիտ մարդ, քառսին մէջ բռնագրօսիկ:

.....

Իմաստութի՛ւն, ձրի չես գար, պիտի զարնես գլուխդ պատին,
Վիրաւորուիս հազար անգամ ու ցաւատանջ գալարուիս դուն,
Որ գէթ նշոյլ մ'իմաստութիւն ցաթէ սիրտիդ, միտքիդ ի քուն,
Արթնցրնէ քեզ թմբիբէն, պատրանքներէն խաբեպատիր...

.....



Միրտս զգաց, պատճառ չուզեց,
Միտքս ուզեց միշտ բացատրել,
Մտքիս, սրտիս միջեւ կեանքս էր,
Որ հոսեցաւ գետի մը պէս:

.....

Երբ խորանաս հոգիիդ մէջ,
Կը գտնես դուն անհուն գանձեր,
Քանզի հոգին տիեզերք է,
Ուր լոկ քիչեր կը թափանցեն...

.....

Մտքի թռիչք եթէ ունիս,
Կը սլանաս երկինքն ի վեր,
Թէկուզ բանտի չորս պատին մէջ,
Ազատ մարդ ես դուն ցնձագին:

.....

Բիւր երանի՛ խոնարհներուն,
Որոնց միտքը ընդունակ է՝
Տարբեր կարծիք, խօսք լսելու
Եւ սորվելու համեստօրէն...

.....

Անդիմակ դէմքին կարօտ մնացի,
Սրտաբուխ խօսքին ծարաւ մնացի,
Ամէն տեղ շահն էր ու հաշիւը չոր,
Փնտռաձու՝ անկեղծ հոգի մ'էր աղուոր:

.....

Սողուններ կան զարմանազան,
Բայց զգուելին մարդ-սողունն է,
Որ գետնամած մէջքը ծռէ
Յանուն շահին, ես-ին աժան:

.....

Համակ կեանք մը՝ անեղծ սիրտով,
Անեղծ հոգուով ես ման եկայ,
Եւ ճշմարիտ անկեղծ խօսքով
Խաչ բարձրացայ ես շատ անգամ...

Երան Գույումճեան